

ՄԱՐԶԻԿ

ՀԱՄԸՄ

Մարզիկ

مجلة رياضية شهرية
تصدرها جمعية الهومنتمن بيروت

marzig

SPORTS MAGAZINE

36-րդ ՏԱԲԻ, 2017, ԹԻԻ 406

VOL. XXXVI N° 406

السنة السادسة والثلاثون - العدد رقم ٤٠٦



Համա-Հ.Մ.Ը.Մ.ական 10րդ Մարզախաղեր
10th Pan-Homenetmen Games

20և 29 Յուլիս 2017 • July 20-29, 2017

Հայաստան • Armenia



ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Հ.Մ.Ը.Մ.Ի 100-ԱՄԵԱԿԻՆ ՆՈՒԻՐՈՒԱԾ ՀԱՄԱ-Հ.Մ.Ը.Մ.ԱԿԱՆ 10-ՐԴ ՄԱՐԶԱԽԱՂԵՐ 20 ՅՈՒԼԻՍԷՆ 29 ՅՈՒԼԻՍ 2017, ԵՐԵՒԱՆ, ՀԱՅԱՍՏԱՆ

Հ.Մ.Ը.Մ.Ի Կեդրոնական Վարչութեան նախաձեռնությամբ տեղի ունեցող համա-Հ.Մ.Ը.Մ.ական մարզախաղերը սպասուած եւ միշտ յաջողութեամբ պսակուած աւանդութիւն մըն են միութեան պատմութեան մէջ, ուր հարիրատր Հ.Մ.Ը.Մ.ականներ, աշխարհի չորս ծագերէն, կը մէկտեղուին մրցելու, բարեկամանալու եւ իրենց հայկականութիւնը զօրացնելու համար: Մարզախաղերը տեղի կ'ունենան չորս տարին անգամ մը, Հ.Մ.Ը.Մ.ի մասնաճիւղ ունեցող երկիրի մը մէջ:



լայն ծանօթութիւն տալու համար, նկատի առնուած է բացման հանդիսութիւն մը՝ «Հանրապետութեան» հրապարակին վրայ: Հանդիսութեան պիտի հրաւիրուին պետական ու միութեանական անձնատրութիւններ, ինչպէս նաեւ՝ հանրութիւնը: Տեղի պիտի ունենայ տողանցք՝ մարզիկներու մասնակցութեամբ եւ, աւարտին, երգահանդէս-փառատօն մը Հայաստանէն եւ Սփիւքէն հրաւիրուած երգիչներու մասնակցութեամբ:

Հ.Մ.Ը.Մ.ի 99-ամեայ պատմութեան մէջ երրորդ անգամ ըլլալով, համա-Հ.Մ.Ը.Մ.ական 10-րդ մարզախաղերը տեղի պիտի ունենան Երեւան, Հայաստան, 20-29 Յուլիս 2017-ին եւ պիտի նուիրուին Հ.Մ.Ը.Մ.ի 100-ամեակին:

Մարզախաղերու մասնակից մարզիկներն ու յանձնախումբերու անդամները Ծիծեռնակաբերդ այցելութեամբ յարգանքի իրենց տուրքը պիտի մատուցեն Տեղասպանութեան զոհերու յիշատակին: Մասնակիցներուն համար նկատի առնուած են նաեւ դաստիարակչական յատուկ ծրագիրներ եւ հանրային ծառայութեան աշխատանքներ:

Մարզախաղերուն պիտի մասնակցին մօտաւորապէս 1000 մարզիկներ, որոնք Երեւանի մէջ պիտի համախմբուին՝ ժամանելով աշխարհի զանազան երկիրներէ, իրենց հայրենի հողին վրայ մրցելու եւ անոր հանդէպ իրենց ունեցած սէրն ու կարօտը յագեցնելու համար:

Մարզախաղերու մասնակից մարզիկներն ու յանձնախումբերու անդամները Ծիծեռնակաբերդ այցելութեամբ յարգանքի իրենց տուրքը պիտի մատուցեն Տեղասպանութեան զոհերու յիշատակին: Մասնակիցներուն համար նկատի առնուած են նաեւ դաստիարակչական յատուկ ծրագիրներ եւ հանրային ծառայութեան աշխատանքներ:

Մարզախաղերը պիտի ընդգրկեն հետեւեալ մարզաձեւերը.-

Հայրենի հողին վրայ տեղի ունեցող Համա-Հ.Մ.Ը.Մ.ական 10-րդ մարզախաղերը իրենց աւարտին պիտի հասնին Յաղթանակի ճաշկերոյթ-պարահանդէսով, պաշտօնական անձնատրութիւններու, հիւրերու եւ մարզիկներու ներկայութեամբ: Մարզիկներ, մարզիչներ, պատասխանատուներ պիտի վերադառնան իրենց երկիրները, իննօրեայ անմտտանալի պահերէ ետք, Հայաստանի հանդէպ իրենց յանձնառութիւնը վերանորոգած եւ կրկին ու կրկին հայրենի հողին վերադառնալու կարօտով լեցուն:

- Տղոց եւ աղջկանց պասքեթպոլ:
- Կրտսեր տղոց եւ աղջկանց պասքեթպոլ:
- Տղոց եւ աղջկանց անհատական ճատրակ:
- Տղոց ֆութպոլ:
- Աղջկանց վոլիպոլ:
- Տղոց եւ աղջկանց ֆութսալ:
- Տղոց եւ աղջկանց աթլէթ:
- Տղոց եւ աղջկանց թենիս:
- Տղոց եւ աղջկանց փինկ-փոնկ:
- Տղոց եւ աղջկանց լող:

Համա-Հ.Մ.Ը.Մ.ական 10-րդ մարզախաղերու կապուած տեղեկութիւններու համար կրնաք կապուիլ office@home-netmen.org ե-մամակի հասցէին:

Համա-Հ.Մ.Ը.Մ.ական մարզախաղերը լրագոյն ձեւով իրագործելու եւ Հ.Մ.Ը.Մ.ի մասին հայրենի ժողովուրդին

Հ.Մ.Ը.Մ.Ի
ԿԵՂՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏՈՒԹԵԱՆ ՆԱԽԱԶԵՌՆՈՒԹԵԱՄԲ՝ ՀԱՄԱ-Հ.Մ.Ը.Մ.ԱԿԱՆ ՄԱՐԶԱԽԱՂԵՐՈՒ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՄԻՋ-ՆԱԽԱՐԱՐԱԿԱՆ ՅԱՆՁՆԱԽՈՒՄԲԻ ԿԱԶՄՈՒԹՅՈՒՆ

12 Յունիսին, Հայաստանի Հանրապետութեան Սփիւռքի նախարար Հրանդ Ենտիկի Յակոբեանի գլխավորութեամբ տեղի ունեցաւ Համա-Հ.Մ.Ը.Մ.ական 10-րդ մարզախաղերու կազմակերպման միջ-նախարարական յանձնախումբին նիստը, որուն մասնակ-





**«ՄԱՐԶԻԿ»Ի
ՅԱԶՈՐԴ ԹԻՒՌԿ**

«Մարզիկ»ի յաջորդ թիւը կը նուիրուի համա- Հ.Մ.Ը.Մ.ական 10-րդ մար- զախաղերուն:

«Մարզիկ» լոյս կ'ըն- ծայի բացառիկ թիւ մը՝ նը- փրուած միութեան պատ- մութեան մեծագոյն մար- զախաղերուն:

Թիւը կ'ընդգրկէ մար- զախաղերուն ամբողջա- կան տեղեկագրութիւնը՝ պրոֆիւնքներ, երեսօյններ, մթնոլորտ, բացման եւ փակման հանդիսութիւն- ներ:

Թիւը կ'անդրադառ- նայ նաեւ միութեան 100- ամեակի նախապատրաս- տական աշխատանքնե- րուն:

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ Պատրաստութիւն	2-3
ԱՆԴՐԱԴԱՐԶ	4-5
100-ԱՄԵԱԿ	6-8
ՊԱՏԳԱՄ	9-13
ԿԿԱՅՈՒԹԻՒՆ	14-15
ԴԵՄՔԵՐՈՒ ԴԵՏ	16-17
ԱԿՆԱՐԿ	18
100-ԱՄԵԱԿԵՆ ԵՏՔ	19-23
ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ	24-33
ՄԱՍՆԱԳԻՒԴԵ ՄԱՍՆԱԳԻՒԴ	34-63
ՄԵՐ ԿՈՐՈՒՄՏՆԵՐԸ	64



Marzig sports magazine is published by Homenetmen Central Committee-Sevan Building, Rue 77, Sector 4, Bourj Hammoud, Beirut, Lebanon. Tel: 961 1 248043, 961 1 260117, E-mail: marzig@Homenetmen.org, P.O.Box: 80486 Bourj Hammoud, Lebanon, www. Homenetmen.org

Խմբագիր: Վիգէն Աւագեան (vicken.avakian@homenetmen.org)

Խմբագրական կազմ: Գրիգորիս Պողոսեան, Մարտ Բէշիշեան, Սեւան Նազարեան, Տիրան Շահինեան:

Վարչական կազմ: Պարթիկ Կիւլպէնկեան, Արօ Մոսիկեան, Սիլվա Սաղրեան, Յարութ Ալամանեան, Նագօ Հապիպեան, Ռիթա Օդոլեան, Արլին Շամնասեան:

Էջադրում եւ ընդհանուր չեւառում: Արշօ Պալեան, **Կողքի պատրաստութիւն:** Y Concept International, **Գրաշար- րութիւն:** Շողիկ Պոյանեան, **Տպագրութեան պատրաստութիւն:** Photogravure Paklayan, **Տպագրութիւն:** Համազգայինի «Վահէ Սէրեան» րպարան, Պէյրութ, Լիբանան:

Բաժանորդագրութիւն: «Մարզիկ» կը հասնի աշխարհի 25 երկիրներու բաժանորդներու: Տարեկան բաժանորդագրութեան սակ՝ ճորտած է՝ Լիբանան 20 \$, Միջին Արեւելեան եւ Եւրոպական երկիրներ 70 \$, Մ. Նահանգներ եւ Աւստրալիա 75 \$: Լիբա- նանի մէջ թերթին հարավամասի սակն է 5000 Լ.Ո.: **Ցրում:** «Մարզիկ»ի ցրումը Լիբանանի մէջ կը կատարուի յարուկ ցրուիչով (հեռ. 71/239209): Թերթը կարելի է ստանալ նաեւ «Համազգային»ի գրասենտրէն: Լիբանանէն դուրս թերթը կը ստացուի «Liban post»ի միջոցով:

ՊԱՏՐԱՍՏՈՒԹԻՒՆ

(Հ.Մ.Ը.Մ.Ի 100-ԱՄԵԱԿԻՆ ԸՆԴԱՌԱՋ)

Պատրաստության մեջ է Հ.Մ.Ը.Մ.Ի ընտանիքը: Բոլորը կը պատրաստուին աղամանդեայ յոբելանին՝ միութեան 100-ամեակին: Ծրագիրները մշակուած են արդէն: Թուականները յստակացած են: Համա-Հ.Մ.Ը.Մ.ական մարզախաղեր, համա-Հ.Մ.Ը.Մ.ական բանակում, 100-ամեակի մեծաշուք տօնակատարութիւններ՝ Հայաստանի եւ սփիւռքեան տարրեր ասփերու վրայ, գիտաժողով, ցուցահանդէս, կայքէջ, հրատարակութիւններ միայն օրինակներ են նախատեսուած ծրագիրներու երկար շարքէն:



մատնել կազմակերպիչներուն գործը: Ու տակաւին, մերօրեայ աշխարհին մեջ, պատրաստութիւնը կ'ենթադրէ արդի արհեստագիտութեան նորագոյն միջոցներու կատարեալ տիրապետութիւն: Երկիրէ երկիր ու ցամաքամաս ցամաքամաս փոխանցուող տեղեկութիւնները, թրթածրարները եւ համացանցային ժողովները հեռաւարտութիւնները կը մօտեցնեն եւ ժամանակի ու նիւթականի ահագին խնայողութիւն կը կատարեն:

Պատրաստութիւնը գործի մը յաջողութեան կէտն է, ըսուած է իրաւամբ: Երկրորդ կէտը գործի մը ճիշդ ձեւով կատարումն է:

Ահա, թէ ինչպիսի՜ հսկայական աշխատանքի լըծուած են այսօր Հ.Մ.Ը.Մ.Ի վարիչները քիչ մը ամէն տեղ, Կեդրոնական, Շրջանային, Սեկուսի թէ մասնաճիւղային մակարդակի: Շնչառապա վազք մըն է, որ տեղի կ'ունենայ ճիշդ ժամանակին, ճիշդ տեղը եւ ճիշդ ձեւով, Հ.Մ.Ը.Մ.Ի պատմութեան մեծագոյն մարզախաղերը իրականացնելու, սկսուողական ամէնէն մեծաթիւ բանակումը յաջողցնելու եւ աղամանդեայ յոբելանին վայել տօնակատարութիւնները կատարելու համար:

Պատրաստութիւնը մաս կը կազմէ Հ.Մ.Ը.Մ.ական մշակոյթին: Սկսուողական իր առաջին քայլերը առնող պատանին միութեան մեջ կը սորվի որեւէ նախաձեռնութենէ առաջ թրթածրար ու նախահաշիւ պատրաստել, նպատակ ու առաջադրանք ճշդել: Մարզական կեանքի մեջ, նորահաս պատասխանատուներ չեն կրնար որեւէ քայլի դիմել՝ առանց նախապէս ծրագիր, յայտագիր եւ պիւտճէ պատրաստելու:

Այս բոլորը, անշուշտ, կրնային դիրքին ըլլալ, եթէ երբեք Հ.Մ.Ը.Մ. ունենար նիւթական լայն կարելիութիւններ: Բախտատր այդ օրուան չենք հասած տակաւին եւ, հետեւաբար, մեծ ճիգեր ի գործ կը դրուին նախատեսուած ծրագիրներու պիւտճէները ապահովելու, պատուոյ նախագահներ գտնելու եւ միութեան առաքելութեան հաւատացող բարերարներ ապահովելու համար: Սկզբունքը յստակ է. նիւթականի պատճառով ո՛չ մէկ Հ.Մ.Ը.Մ.ական պէտք է գրկուի 100-ամեակի հաւաքներուն մասնակցելու կարելիութենէն: Վարչութիւններ թէ Շրջանային Վարչութիւններ հարկ է դիմեն կարելի ամէն միջոցի՝ նախատեսուած իրադարձութիւնները առաւելագոյն մասնակիցներով արժեւորելու համար:

Պատրաստութիւնը միութեանական դաստիարակութեան կարեւոր մէկ մասն է, որովհետեւ ան կ'ենթադրէ ի սկզբանէ սերտել ու ճանչնալ տուեալ ձեռնարկի մը իրականացման միջավայրը, ձեռնարկի մասնակիցներուն մտայնութիւնն ու հոգեբանութիւնը, կազմակերպչական աշխատանքներու հանգրուանային ընթացքը, հաւանական դժուարութիւնները, անոնց դիմագրաման կարելիութիւնները, անհրաժեշտ մարդուժի եւ նիւթականի ապահովման միջոցները եւ այլն: Պատահականութեան բան չի կրնար ձգուիլ:

100-ամեակի պատրաստութիւնները ունին նաեւ այլ կարեւորութիւն: 100-ամեակը հանրային քննութեան մերկայացման պահն է: Հարկ է գնահատումը կատարել միութեան 100-ամեայ երթին եւ, ըստ այնմ, հրապարակային հաշուետուութեամբ ներկայանալ

Պատրաստութիւնը կ'ենթադրէ նաեւ որոշ կարգապահութիւն՝ աշխատանքի մը յաջողական հանգրուաններուն յարգումին համար: Ժամանակացոյց եւ առաջնահերթութիւններ կը պարտադրեն յստակ կանոններ, որոնց շրջանցումը ձախողութեան կրնայ



ամենուր: Անհրաժեշտ է լուսարձակի տակ առնել միութեան պատուարեր անցեալը՝ պարզելու համար դեպի յաղթական ապագայ առաջնորդող անոր ուղին: Անցեալը գրուած պատմութիւնն է, արխիւ եւ լուսանկար է, արձանագրուած ձայն ու ֆիլմ է: Պէտք է դասատրել, ուսումնասիրել եւ օգտագործել այդ բոլորը՝ հաւաքական հաշուետուութեան բաց ճակատով ներկայանալու համար, ներքին թէ արտաքին ճակատներու վրայ: Աշխատանքին տարողութիւնը մեծ է, լուրջ պատրաստութիւն կ'ենթադրէ ու տեղ-տեղ մասնագիտական մօտեցում կը պահանջէ:

100-ամեակի պատրաստութիւնները, բնականաբար, կ'ընդգրկեն նաեւ միութեան 100-ամեակին յաջորդող հանգրուանը: Բոլորը կը խորհրդածեն, պէ՛տք է խորհրդածեն, որ 100-ամեակը ի՞նչ պիտի փոխէ Հ.Մ.Ը.Մ.ի մէկ դարեայ կեանքին մէջ: 2018-էն վերջը չի կրնար 2018-էն առաջուան նման ըլլալ, այլապէս 100-

ամեակի տօնակատարութիւնները պիտի մնան ընթացիկի եւ ձեւականութեան սահմաններուն մէջ: Հ.Մ.Ը.Մ.ի բովանդակ ընտանիքը այսօր պարտաւորութիւնը ունի ճշդելու միութեան երկրորդ 100-ամեակին ընդհանուր ուղղութիւնն ու դերակատարութիւնը՝ յարափոփոխ մեր կեանքին մէջ: Նման աշխատանք մը սկսուած է արդէն Հ.Մ.Ը.Մ.ի ռազմավարական ծրագիրին մշակումով, կը մնայ որ պատրաստութիւնները շարունակուին եւ 100-ամեակի նշանակալից այս հանգրուանին մշակուին նաեւ այդ ծրագիրին անմիջական գործնականացման միջոցները:

100-ամեակը կոչուած է անկիւնադարձային հանգրուան մը նշելու Հ.Մ.Ը.Մ.ի պատմութեան մէջ: Պատրաստութիւնները կ'ընթանան այդ ուղղութեամբ: Պէտք է յուսալից ըլլալ, որովհետեւ Հ.Մ.Ը.Մ. երբ կը պատրաստուի՝ կը յաջողի՝

Սպասենք ու տեսնենք անպայման:

Հ.Մ.Ը.Մ.Ի 24 ՇՐՋԱՆՆԵՐ, 108 ՄԱՍՆԱԾԻՒՂԵՐ ԵՒ ՄԻԱՒՈՐՆԵՐ

Հայաստան: Երեւան, Մալաթիա, Ջեյթուն, Կոմիտաս, Էրեբունի, Արուսեան, Չարենցաւան, Հրազդան, Արմաւիր, Էջմիածին, Մարտունի/Չորաքար, Մարտունի/Ճովինար, Կիւմրի, Վերի. **Վրաստան:** Ախալքալաք, Ախալցխա, Թիֆլիս. **Ռուսիա:** Մոսկուա. **Լիբանան:** Պէյրութ, Չահլէ, Թրիփոլի, Պուրճ Համուր, Այննար, Ծիւնի, Անթիլիաս, Ժբրէյրէ, Պատշիքի, Ռատուրա. **Սուրիա:** Հալէպ, Դամասկոս, Լաքաթիա, Գամիշլի, Քեսապ. **Յորդանան:** Ամման. **Պաղեստին:** Երուսաղէմ, Հայֆա, Եաֆա. **Եգիպտոս:** Գահիրէ, Աղեքսանդրիա. **Իրաք:** Պաղպաւ, Մուսուլ. **Քուէյթ:** Բուէյթ. **Կիպրոս:** Նիկոսիա. **Յունաստան:** Աթէնք, Գոթինիա, Սելանիկ. **Անգլիա:** Լոնդոն. **Աւստրիա:** Վիեննա. **Ֆրանսա:** Փարիզ, Վալանս, Մարսէյ. **Հոլանդիա:** Ալմեյդա, Ալքմար, Ամստըր. **Գերմանիա:** Միւնիխ. **Շուէդ:** Սթոքհոլմ, Վեստերոս, Սուդերթելիա. **Պուլիպիա:** Մոֆիա, Ռուսէ, Փրովրիփ, Վառնա, Շումն, Պուրկաս, Տոպրիչ. **Գանատ:** Մոնթրէալ, Համիլթըն, Թորոնթօ, Քեմպրիճ, Սէնթ Գաբրիէլ, Լաւալ. **Արեւմտեան Մ. Նահանգներ:** Լոս Անճելէս, Սան Բրասիլիս, Ֆրէզնօ, Մոնթրէալ, Փասափինս, Կլէմարէլ, Օրէնճ Բաունթի, Սան Ֆրանսիսկո, Սան Տիէյո, Ինըրսի Էմիլիոյ, Սանթա Գաբրիէլ, Քրեմլինս Կոլիպ, Պրայմէք, Լաս Վեկաս, Ֆինիքս, Ուոլնոք Բրիք, Նորթ Հոլիվուդ, Սաքրամենթօ. **Արեւելեան Մ. Նահանգներ:** Ուաշինգթըն, Պոսթըն, Նիւ Եորք, Նիւ Ճրքզի, Շիքսօ, Ֆիլադելֆիա, Տիքոնթ, Փրովիպրենս, Ֆլորիդա, Ալպրնի, Շարլոթ. **Հարաւային Ամերիկա:** Պուէնոս Այրէս, Գորյուպա, Մոնթեւիդէօ. **Աւստրալիա:** Սիդնի («Անդրանիկ»), Սիդնի («Արար»), Սիդնի («Կամք»), Սիդնի («Արարար»), Մելբուրն.

ՀԱՄԱ-Հ.Մ.Ը.Մ.ԱԿԱՆ ՄԱՐԶԱԿԱՆ ՄԵԾԱԳՈՅՆ ՀԱՄԱԽՄԲՈՒՄԸ ԱՅՍ ԱՄԱՌ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԷՋ

20-29 Յուլիս 2017-ին, Հայաստանի Հանրապետության վարչապետի ղեկավարությամբ Հ.Մ.Ը.Մ.ական մեծ ընտանիքի մարզական «կամաւոր բանակ»ի աշխարհասփիւղ ներկայացուցիչներուն: Միութեան 17 շրջաններէն շուրջ 1000 մարզիկներ առիթը պիտի ունենան 10 օրեր միասնաբար ըլլալու, 9 մարզախաղերու արտոյեանական բաժակներուն համար մրցելու, իրենց հայրենիքը ճանչնալու եւ հայկականութեամբ լեցուցնելու:

Համա-Հ.Մ.Ը.Մ.ական 10-րդ մարզախաղերու յայտագրերին վրայ են 9 մարզաձեւեր.- Փութպոլ (տղաք կրտսեր, երէց)՝ 14 խումբ, պասքեթպոլ (տղաք ու աղջիկներ կրտսեր եւ երէց)՝ 35 խումբ, վոլիպոլ (աղջիկներ)՝ 6 խումբ, թենիս (տղաք ու աղջիկներ), աթլետիզմ (տղաք ու աղջիկներ), փինկ-փոնկ (տղաք ու աղջիկներ), լող (տղաք ու աղջիկներ), ճատրակ (տղաք ու աղջիկներ): 10-րդ մարզախաղերու նորութիւնն է սրահային Փութպոլը՝ Փութսայլը (տղաք եւ աղջիկներ)՝ 10 խումբ:

Մարզախաղերու կողքին, նախատեսուած են մարզիկներու համար հանրային ծառայութեան օր մը (20 Յուլիսին), Մեծ Եղեռնի Ծիծեռնակաբերդի յուշահամալիր այցելութիւն, պաշտօնական մամուլի ասուլիս (21 Յուլիսին), դաստիարակչական-գեկուցական հանդիպում մը (22 Յուլիսին) եւ ազատ օր մը (26 Յուլիսին):

Տէր եւ տիկ. Սարգիս եւ Ալիս Տէր Պետրոսեաններու նախագահութեամբ եւ Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան կազմակերպութեամբ իրականացուող 10-րդ մարզախաղերուն իրենց մասնակցութիւնը կը բերեն միութեան 17 շրջաններէ պատուիրակութիւններ եւ Թեհրանի Հ.Մ.Ա.Կ.-ը ներկայացնող մարզական խումբեր: Մարզախաղերու մասնակից շրջաններն են.- Հայաստան, Մոսկուա, Արեւմտեան Մ. Նահանգներ, Արեւելեան Մ. Նահանգներ, Հարաւային Ամերիկա, Գանատա, Աւստրալիա, Պոլշա, Լոնտոն, Փարիզ, Մարսէյ, Վալանս, Երուսաղէմ, Գահիրէ, Քուէյթ, Լիբանան եւ Սուրիա:

Հ.Մ.Ը.Մ.ի 100-ամեակին նուիրուած այս մարզախաղե-



րուն պաշտօնական բացումը կը կատարուի Շաբաթ, 22 Յուլիսին, թէեւ խաղերը ընթացք կ'առնեն երկու օր առաջ՝ 20 Յուլիսին եւ կ'երկարին 10 օրուան վրայ: Բացի աթլետիզմի մրցումներէն, որոնք կը կատարուին Արտաշատի մէջ, մնացեալ բոլոր խաղերը տեղի կ'ունենան Երեւանի դաշտերուն եւ մարզական համալիրներուն մէջ: Խաղերու աւարտին, փակման հանդիսութիւնը եւ մրցանակաբաշխութիւնը տեղի կ'ունենայ Շաբաթ, 29 Յուլիսին: Հանդիսութեան կը յաջորդէ յաղթանակի ճաշկերոյթ-պա-

րահանդէսը: Ինչպէս նախորդ մարզախաղերուն, այս անգամ եւս, արտոյեանական 16 բաժակները կը կրեն Հ.Մ.Ը.Մ.ի հիմնադիրներու, վաստակաշատ անդամներու եւ Արցախեան նահատակներու անուններ: Նկատի առնուած անուններն են.- Շաւարշ Բրիսեան, Գրիգոր Յակոբեան, Յովհաննէս Հինգլեան, Մինաս Զերազ, Բիւզանդ Թորիկեան, Միհրան Շիմշիրեան, Պետրոս Ալահայտոյեան, Տիգրան Ոսկունի, Յովհաննէս Պայթարեան, Արմէն Տէյրմէնճեան, Նշան Թիւսիւզեան, Սիւմանթօ Կարապետեան, Դանիէլ Դանիէլեան, Վահրամ Դանիէլեան, Վարդան Բախշեան եւ Վիգէն Զաքարեան:

ԾԱՆՕԹԱՑՈՒՄ

Հ.Մ.Ը.Մ.ի երբեմնի միջ-մասնաձեւալիս խաղերուն միջնորդութիւնը վերակենդանացնող համա-Հ.Մ.Ը.Մ.ական մարզախաղերը ունին աւելի քան 35 տարուան պատմութիւն: 1981-էն մինչեւ օրս կազմակերպուած են համա-Հ.Մ.Ը.Մ.ական 9 մարզախաղեր Գանատայի (Մոնթրէալ, Թորոնթօ), Արեւմտեան Մ. Նահանգներու (Լոս Անճելըս), Ֆրանսայի (Վալանս), Արեւելեան Մ. Նահանգներու (Ուաշինկթըն, Նիւ Ճրքի), Լիբանանի (Պէյրութ), Յունաստանի (Աթէնք) եւ Հայաստանի մէջ (Երեւան, Արտաշատ): Գանատա եւ Հայաստան երկուքական անգամ հիւրընկալած են համա-Հ.Մ.Ը.Մ.ական մարզախաղեր:

Սկզբնական շրջանին, մարզախաղերը յատկացուած են

ՏԵՐ ԵՒ ՏԻԿ. ԵՂԲ. ՍԱՐԳԻՍ ԵՒ ԱԼԻՍ ՏԵՐ ՊԵՏՐՈՍԵԱՆՆԵՐ ՀԱՄԱ-Հ.Մ.Ը.Մ.ԱԿԱՆ 10-ՐԴ ՄԱՐԶԱԽԱՂԵՐՈՒ ՊԱՏՈՒՈՅ ՆԱԽԱԳԱՀ



.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչությունը մեծ ուրախությամբ կը տեղեկացնէ, որ համա-Հ.Մ.Ը.Մ.ական 10-րդ մարզախաղերու պատուոյ նախագահութիւնը ստանձնած են Աստրալիայէն տէր եւ տիկ. եղբ. Սարգիս եւ Ալիս Տեր Պետրոսեանները:



ուին երկու զաւակով՝ Մակի եւ Աւօ, կը հարստանան երեք թոռներով:

1965-1981, եղբ. Սարգիս Տեր Պետրոսեան Հ.Մ.Ը.Մ.ի «Անդրանիկ» մասնաճիւղին մէջ ստանձնած է վարչական եւ յանձնախմբային պատասխանատու զանազան պաշտօններ: 1981-ին, Միտնիի արեւելեան շրջանին մէջ քնակութիւն հաստատած Հ.Մ.Ը.Մ.ական խումբ մը եղբայրներու հետ ան կը հիմնէ «Կամք» մասնաճիւղը եւ կը յաջողի հաւաքաւայր մը ապահովել մասնաճիւղի աշխատանքներուն համար: Ան երկար տարիներ ձեռնհասօրէն կը վարէ «Կամք» մասնաճիւղին ատենապետութեան պաշտօնը եւ 1995-1997 կը ստանձնէ Հ.Մ.Ը.Մ.ի Աստրալիոյ Շրջանային Վարչութեան ատենապետի պաշտօնը:

Սարգիս եւ Ալիս Տեր Պետրոսեան ամուր ծանօթ ու ճանչցուած անուն մըն է Հ.Մ.Ը.Մ.ի աշխարհասփիւռ ընտանիքին ու յատկապէս Հ.Մ.Ը.Մ.ի Աստրալիոյ շրջանին համար:

Եղբ. Սարգիս Տեր Պետրոսեան Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան նախկին անդամ է: 1999-2007, ան երկու շրջան մաս կազմած է Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան: Արժանացած է Հ.Մ.Ը.Մ.ի «Արժանաց» շքանշանին՝ 12 Հոկտեմբեր 2013-ին: Ան արժանացած է նաեւ Հ.Մ.Ը.Մ.ի «Արտակարգ» պատուանշանին՝ 6 Դեկտեմբեր 1995-ին:

Եղբ. Տեր Պետրոսեան ջերմ ջատագովը եղած է ու կը մնայ նորահաս սերունդի հայապահպանութեան եւ հայեցի դաստիարակութեան անփոխարինելի աւանդին, իր կնիքը դրոշմելով Համազգայինի Գոլտարն Եւմարանի ազնուասիրտ բարերարներու շարքին:

Եղբ. Սարգիս Տեր Պետրոսեան ծնած է Աղեքսանդրիա (Եգիպտոս) եւ փոքր տարիքէն անդամակցած է «Կամք Մարմնամարզական եւ Հայ Հետազօտիչներու Ընկերակցութեան Ակումբ»-ին (այժմ՝ Հ.Մ.Ը.Մ.-«Կամք»), իբրեւ գայլիկ, ապա՝ սկաուտ, բարձրանալով սկաուտական գրեթէ բոլոր աստիճանները, մինչեւ խմբապետութիւն, միաժամանակ հետեւելով կարգ մը մարզաձեւերու: 1964-ին, ան կը տեղափոխուի Աստրալիա եւ կը հաստատուի Միտնիի արեւելեան շրջանը: Կ'անդամակցի Հ.Մ.Ը.Մ.ի Միտնիի այդ օրերու նորակազմ մասնաճիւղին, որ ներկայիս կը կոչուի «Անդրանիկ» մասնաճիւղ: 1968-ին ան կը կազմէ ընտանեկան իր բոյնը՝ Ալիս Տեր Պետրոսեանի հետ: Կը բախտատու-

Տեր եւ տիկ. եղբ. Սարգիս եւ Ալիս Տեր Պետրոսեաններ Հ.Մ.Ը.Մ.ի 100-ամեակին նուիրուած համա-Հ.Մ.Ը.Մ.ական 10-րդ մարզախաղերուն նախագահութիւնը ստանձնելով պատուաբեր նոր էջով մը կը հարստացնեն միութեանկան իրենց նուաճումները:

Հ.Մ.Ը.Մ.Ի ԿԵԳՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

մէկ մարզաձեւի՝ պասքեթպոլի (1981, 1990) կամ Ֆուլթպոլի (1985, 1993): 1993-էն սկսեալ, իւրաքանչիւր մարզախաղի հետ որդեգրուած է նաեւ երկրորդ մարզաձեւ մը՝ աթլետիզմ (1993-ին, Ֆուլթպոլի հետ) եւ վոլիպոլ (1997-ին, Ֆուլթպոլի հետ):

2001-ի 6-րդ մարզախաղերը Ֆուլթպոլի եւ աթլետիզմի հետ առաջին անգամ ըլլալով որդեգրած են փինկ-փոնկը, իսկ 2005-ի 7-րդ մարզախաղերը պասքեթպոլի եւ վոլիպոլի հետ՝ լողը:

8-րդ եւ 9-րդ մարզախաղերը որդեգրած են նոր մարզաձեւեր՝ ճատրակ (2009) եւ թենիս (2013): Այսպէս, 2009-ի 8-րդ մարզախաղերը ընդգրկած են Ֆուլթպոլ, պասքեթպոլ, փինկ-փոնկ, ճատրակ եւ լող: Իսկ վերջին՝ 9-րդ մարզախաղերը իրենց յայտագիրին վրայ ունեցած են ութը մարզաձեւեր. Ֆուլթպոլ, պասքեթպոլ (կրտսեր, երէջ), վոլիպոլ (աղջիկներ),

փինկ-փոնկ, թենիս, ճատրակ, լող եւ աթլետիզմ:

Մասնակցութեան պատկերը եւս փոփոխութիւն կրած է համա-Հ.Մ.Ը.Մ.ական մարզախաղէ մարզախաղ, յատկապէս վերջին տասնամեակին արձանագրելով մասնակից շրջաններու թիւի աճ:

Արդարեւ, առաջին մարզախաղերուն մասնակցած են 8 շրջաններ (1981), 2-րդ մարզախաղերուն՝ 7 շրջաններ (1985), 3-րդ մարզախաղերուն՝ 9 շրջաններ (1990), 4-րդ մարզախաղերուն՝ 7 շրջաններ (1993), 5-րդ մարզախաղերուն՝ 9 շրջաններ (1997), 6-րդ մարզախաղերուն՝ 10 շրջաններ (2001), 7-րդ մարզախաղերուն՝ 7 շրջաններ եւ Թեհրանի Հ.Մ.Ա.Կ.ը (2005), 8-րդ մարզախաղերուն՝ 14 շրջաններ եւ Թեհրանի Հ.Մ.Ա.Կ.ը (2009), իսկ վերջին 9-րդ մարզախաղերուն՝ 16 շրջաններ եւ Թեհրանի Հ.Մ.Ա.Կ.ը (2013):

ՄԱՍԼՈՅ ԱՍՈՒԼԻՍՈՎ ՄԸ՝

Հ.Մ.Ը.Մ.Ի ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ ԱԶԳԱՆՇԱՆԸ ԿՈՒ ՏԱՅ ՄԻՈՒԹԵԱՆ 100-ԱՄԵԱԿԻ ՉԵՌՆԱՐԿՆԵՐՈՒՆ

2018-ը կը նշէ Հ.Մ.Ը.Մ.Ի հիմնադրութեան 100-ամեակը: Այս առիթով, Չորեքշաբթի, 8 Փետրուար 2017-ին, Հ.Մ.Ը.Մ.Ի Կեդրոնական Վարչութեան կեդրոնատեղիին մէջ տեղի ունեցաւ մամուլի ասուլիս մը, ուր ազդանշանը տրուեցաւ միութեան 100-ամեակի ձեռնարկներուն: Ասուլիսին ներկայ եղան Հ.Մ.Ը.Մ.Ի Կեդրոնական Վարչութեան ատենապետ եղբ. Գառնիկ Մկրտիչեան, անդամներ՝ եղբայրներ Բաֆֆի Կէփօղյանեան, Վաչէ Նաճարեան, Իշխան Եղիայեան, «Ազդակ» օրաթերթի, «Վանայ ձայն» ռատիոկայանի, OTV պատկերասփիւռի կայանի ներկայացուցիչներ եւ միութեան «Մարզիկ» պաշտօնաթերթի խմբագիրը:



Photo by Ashnag©

Մամուլի ասուլիսին սկիզբը, ներկաները ողջունեց Կեդրոնական Վարչութեան ատենապետ եղբ. Գառնիկ Մկրտիչեան: Ապա, ան փառաբար-փոյնքով ներկայացուց միութեան 100-ամեակի նախաձեռնութիւններուն ծրագիրը եւ անոնց կազմակերպման ընդհանուր տեղեկութիւնները: Ան յայտնեց, որ Հ.Մ.Ը.Մ.Ի 100-ամեակի զլխաւոր ձեռնարկները տեղի պիտի ունենան 2018-ի Յունիս-Օգոստոս ամիսներուն: Ձեռնարկներուն բացումը պիտի կատարուի համա-Հ.Մ.Ը.Մ.ական 10-րդ մարզախաղերուն ընթացքին, 20-29 Յունիս 2017-ին:

100-ամեակի կազմուած են հետեւեալ կեդրոնական մարմիններն ու յանձնախումբերը: 100-ամեակի յրեքլեւական մարմին, 100-ամեակի կեդրոնական յանձնախումբ, գործադիր յանձնախումբ, քարոզչական յանձնախումբ, ընկերային յանձնախումբ եւ սկաուտական յանձնախումբ, որ պիտի ղեկավարէ համա-Հ.Մ.Ը.Մ.ական 11-րդ բանակումը եւ 100-ամեակի սկաուտական բոլոր ձեռնարկները:

Եղբայր Մկրտիչեան հաստատեց նաեւ, որ 100-ամեակի ձեռնարկներուն համար պատրաստուած է յատուկ քայլերդ, որ մօտ օրէն սեփականութիւնը պիտի դառնայ հանրութեան: Քայլերդին խօսքը կը պատկանի Ներսէ՛ Հիպարեանին (Գանատա), երաժշտութիւնը՝ Վահրամ Էմմիեանին (Լիբանան), իսկ կատարումը՝ Գառնիկ Մարգիսեանին (Երզնի քառերդ տեսնել առանձին): Պատրաստուած է 100-ամեակի խորհրդապատկերը՝ Արի Պոյաճեանին կողմէ (Արեւմտեան Մ. Նահանգներ): 100-ամեակի նշանաբանն է՝ «Պատուաբեր անցելն՝ յաղթական ապագայ», հեղինակ՝ Վանիկ Գասարճեան (Լիբանան):

Շարունակելով, եղբ. Մկրտիչեան նշեց, որ 100-ամեակի սեմին, Հ.Մ.Ը.Մ.ը շուտով կ'ունենայ համացանցի արդիական իր նոր կայքէջը եւ առցանց վաճառատունը, ուր պիտի ներկայացուին Հ.Մ.Ը.Մ.ական զանազան յուշանուէրներ, տա-

Հ.Մ.Ը.Մ. 1018-2018
Համա-Հ.Մ.Ը.Մ.ական 10րդ Մարզախաղեր
10th Pan-Homenetmen Games
20կն 29 Յունիս 2017 • July 20-29, 2017
Հայաստան • Armenia

Ֆուտբոլ • Գանգեթապու • Վոլեյբոլ • Ֆուտբոլ • Գնկն • Փին-փինկ • Լոկ • Տասրակ • Աթլետիկ
Soccer • Basketball • Volleyball • Futsal • Tennis • Table Tennis • Swimming • Chess • Track & Field

ՔԱՆՏԱՆ ՀԱՆԳՈՒՄՈՒԹԻՒՆ
Շաբաթ, 22 Յունիս 2017
ՓՈՒԿԱՄՆ ՀԱՆԳՈՒՄՈՒԹԻՒՆ
Շաբաթ, 29 Յունիս 2017
ՑԱՊՈՍՏԱԿ ԳՎԱԸՆԱԳԻՎ
Շաբաթ, 29 Յունիս 2017

OPENING CEREMONY
Saturday, July 22, 2017
CLOSING CEREMONY
Saturday, July 29, 2017
VICTORY BANQUET
Saturday, July 29, 2017

<https://www.facebook.com/Homenetmen>
Բանկայ տնօրէնութիւն: Խախտ կասուկ office@homenetmen.org Ինքնակն: Իր մաս ինֆօ@homenetmen.org

րազներ, սկառուտական եւ մարզական իրեր:

Ներկայացումն էն ետք, ներկաներու հարցումներուն պատասխանելով, եղբ. Մկրտիչեան յատակացուց, որ յոբելենական մարմինը պատուով մարմին մըն, որ պիտի գլխավորէ 100-ամեակի յանձնախումբերը: 100-ամեակի կեդրոնական յանձնախումբը իր աշխատանքները պիտի ծրագրէ Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան հետ: Գործադիր յանձնախումբը պիտի իրագործէ Հայաստանի մէջ կատարուելիք ձեռնարկները: Քարոզչական յանձնախումբին աշխատանքի ծիրը յայտնի է, իսկ ընկերային յանձնախումբը գործի պիտի լծուի միութեան կազմակերպական բոլոր շրջաններէն Հ.Մ.Ը.Մ.ական քոյրերն ու եղբայրները 2018-ի ամառը Հայաստան համախմբելու եւ մէկ շարթուան ընթացքին տեղի ունենալիք ձեռնարկներուն մասնակցելու համար:

Կեդրոնական Վարչութեան ատենապետը նաեւ դիտել տուաւ, որ նշեալ ձեռնարկները միայն Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան կողմէ կազմակերպուած ձեռնարկներն են: Հ.Մ.Ը.Մ.ի 9 Շրջանային Վարչութիւնները եւ 35 մեկուսի



վարչութիւնները, իրենց կարգին, աշխարհի տարածքին պիտի կազմակերպեն 100-ամեակի նուիրուած իրենց տեղական ձեռնարկները:

Հայաստանի մէջ կազմակերպուելիք ձեռնարկներուն մասին խօսելով, եղբ. Մկրտիչեան յայտնեց, որ Հայոց Ցեղասպանութեան թանգարանին մէջ պատմական արժէք ներկայացնող Հ.Մ.Ը.Մ.ական իրերու եւ հրատարակութիւններու ցուցահանդէս պիտի կատարուի: Կիւմրիի մէջ, ըստ կարելիութեան, պիտի տեղադրուի Վահան Չերագի կիսանդրին, իսկ Հ.Մ.

Ը.Մ.ի Բիւրականի բանակավայրին մէջ պիտի գետեղուի Հ.Մ.Ը.Մ.ի երրորդութեան կիսանդրին: Պիտի կատարուի նաեւ 100-ամեակի ձեռնարկները եզրափակող յոբելենական պաշտօնական հանդիսութիւն՝ Երեւանի մէջ:

«Թէեւ կը գիտակցինք, որ այս ծրագիրը լուրջ աշխատանք եւ մեծ մարդու լի էնթազըէ, բայց նոյն ատեն կը հաւատանք, որ Հ.Մ.Ը.Մ.ականները կամաւոր աշխատանքով եւ զոհարերութեամբ մենք պիտի յաջողինք միութեան 100-ամեակը արժանավայել ու փառահեղ կերպով տօնել մեր հայրենիքին մէջ», հաստատեց եղբ. Մկրտիչեան:

ԴԱՐԵԿԱՆ Հ.Մ.Ը.Մ.ԻՆ

(Հ.Մ.Ը.Մ.ի 100-ԱՄԵԱԿԻ ՔԱՅԼԵՐԳ)

Խօսք՝ Ներսէս Լիպարեանի, Երաժշտ. Վահրամ Էմմիեանի, Կատարում՝ Գառնիկ Սարգիսեանի:

**Կամաւորներու սերունդներ անվախ,
Մեսրոպեան ուխտի հսկիչներ խիզախ:
Յետնորդ Հայկի եւ չարքաշ որդիք,
Դարեկան, մատղաշ Հ.Մ.Ը.Մ.ի:**

Կրկն. Հ.Մ.Ը.Մ., օճ, յառա՛ջ,
Կը մնաս միշտ պատրաստ:
«Բարձրացի՛ր-բարձրացու՛ր»,
Պատգամդ է ամենուր:

**Սկաւումներ ինչպէս հայ բանակ,
Հողներու մնաց բնութեան զուակ:
Մարզական խումբեր փառքով պանծալի,
Միշտ արագ, հեռու, բարձր իտէալի:**

Կրկն. Հ.Մ.Ը.Մ., օճ, յառա՛ջ,
Կը մնաս միշտ պատրաստ:
«Բարձրացի՛ր-բարձրացու՛ր»,
Պատգամդ է ամենուր:



100-ԱՄԵԱԿԻ ԾՐԱԳԻՐՆԵՐՈՒ ԱՌ Ի ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒԹԻՒՆ

ՏԵՍԱԿՑՈՒԹԻՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՆԱԽԱԳԱՀ ՍԵՐԺ ՍԱՐԳՍԵԱՆԻ ՀԵՏ

ՀՄԼՄ-ի 100-ամեակի ծրագիրներու նախապատրաստութեան ծիրէն ներս, 21 Ապրիլ 2017-ին, ՀՄԼՄ-ի Կեդրոնական Վարչութեան ատենապետ եղբ. Գառնիկ Մկրտիչեան տեսակցութիւն մը ունեցաւ Հայաստանի նախագահ Սերժ Սարգսեանի հետ: Տեսակցութեան ընթացքին քննարկուեցան միութեան 100-ամեակի ձեռնարկները, որոնք 2017-ի ամրան Երեւանի մէջ ընթացք կ'առնեն համա-ՀՄԼՄ-ական 10-րդ մարզախաղերով եւ իրենց լրումին կը հասնին 2018-ի ամրան, Բիւրականի մէջ կազմակերպուած համա-ՀՄԼՄ-ական 11-րդ բանակումով եւ Երեւանի մէջ նախատեսուած 100-ամեակի պաշտօնական հանդիսութիւններով:



ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ ԵՒ ՍՓԻՒԲԻ ՆԱԽԱՐԱՐԻՆ ՀԵՏ
Նախագահ Սերժ Սարգսեանի հետ կատարուած տեսակցութեանէն օր մը առաջ, 20 Ապրիլ 2017-ին, ՀՄԼՄ-ի Կեդրոնական Վարչութիւնը ներկայացնող պատուիրակութիւն մը, բաղկացած՝ եղբայրներ Գառնիկ Մկրտիչեանէ, Բագրատ Եսայեանէ, Օշին Փիրումեանէ, ընկերակցութեամբ ՀՄԼՄ-ՀԱՍԿ-ի վարչութեան ատենապետ եղբ. Դաւիթ Յա-



կորեանի, նոյն նպատակով այցելեց էջմիածին եւ հանդիպում մը ունեցաւ Ամենայն Հայոց Գարեգին Բ. Կաթողիկոսին հետ: ՀՄԼՄ-ի Կեդրոնական Վարչութեան պատուիրակութիւնը, ՀՄԼՄ-ՀԱՍԿ-ի վարչութեան անդամ եղբայրներ Դաւիթ Յակոբեանի եւ Մհեր Պոյաճեանի ընկերակցութեամբ, հանդիպում մը ունեցաւ նաեւ Սփիւռքի նախարար Հրանոյշ Յակոբեանին հետ՝ միութեան 100-ամեակի ծրագիրներուն շուրջ խորհրդակցելու համար:

ԵՒՐՈՊԱՅԻ ՀԱՅՈՒԹԵԱՆ ՈՒԺԻ ՍՏԵՂԾՄԱՆ ԱՌԱՋԻՆ ՔԱՅԼԸ

(Հ.Մ.Ը.Մ.Ի ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ԱՏԵՆԱՊԵՏ ԵՂԲ. ԳԱՌՆԻԿ ՄԿՐՏԻՉԵԱՆԻ ԽՕՍՔԸ՝ ՀԱՄԱԵՒՐՈՊԱԿԱՆ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ԱՌԱՋԻՆ ՀԱԻԱՔԻՆ, ՎԻԵՆՆԱ)

Հ.Մ.Ը.Մ.Ի Կեդրոնական Վարչութեան անունով ուրախութիւնը եւ պատիւը ունիմ բացառաձ յայտարարելու իր տեսակին մէջ եզակի այս հաւաքը, որ կազմակերպուած է Հ.Մ.Ը.Մ.Ի Վիեննայի Մեկուսի շրջանի վարչութեան կողմէ:

32 տարի առաջ հիմնուած Վիեննայի սիրելի մասնաճիւղը, հակառակ համեմատաբար իր երիտասարդ տարիքին եւ փոքր թիւին, այսօր հանդէս կու գայ ողջունելի նախաձեռնութեամբ մը, որուն մասին կարելի է մեր գնահատանքը չարձանագրել:

Հ.Մ.Ը.Մ. երիտասարդական կազմակերպութիւն է, սակայն առաջին անգամն է, որ նման հաւաք մը կը կազմակերպէ: Մինչեւ մեր մօտիկ անցեալը Հ.Մ.Ը.Մ.ի գործունէութիւնը կը սահմանափակուէր սկառտական եւ մարզական գործունէութեամբ: Կը պակսէր սակայն երիտասարդականը, որ պիտի համախմբէր սկառտական եւ մարզական թեւերէն դուրս մնացողները, այն տղաքն ու աղջիկները, որոնք կա՛մ տարիքի բերումով, կա՛մ ալ նախասիրութիւններու պատճառով, իրենք զիրենք սկառտական կամ մարզական կեանքին մէջ չէին գտներ, բայց հոգուով-սրտով Հ.Մ.Ը.Մ.ական էին, խանդավառ էին անոր գործունէութեամբ, ազգային եւ ընկե-

Մենք կը հաւատանք, որ եթէ Եւրոպայի մեր տղաքը համախմբուին ու կազմակերպուին, կրնան հասնիլ նաեւ իրենց, ուր հայութիւն կայ, բայց կազմակերպութեամբ չկայ՝ Պելճիքայէն մինչեւ Գերմանիոյ եւ Ֆրանսայի կարգ մը քաղաքները, մինչեւ Սպանիա, Ռումանիա, Հունգարիա եւ այլուր:

րային շրջանակով եւ ամէն գնով կ'ուզէին քով-քովի գալ, իրարու հետ ըլլալ եւ իրարմով զօրաւոր հայեր ըլլալ:

Ահա, այսօր այդ առիթն է, որ կը ըստեղծուի համաեւրոպական մակարդակի կազմակերպուած այս հաւաքով: Եւ այս ինքնին ուշադրութեան արժանի այլ երեւոյթ մըն է, որովհետեւ մենք այսօր Եւրոպայի մէջ ունինք ձեզի նման խոստմնալից սերունդ մը, որ ծարաւը ունի Հ.Մ.Ը.Մ.ին, կարիքը ունի տարին մէկերկու անգամ քով-քովի գալու, միասնաբար ընկերային հաճելի պահեր անցընելու եւ հայկականութեամբ լեցուելու:

Հ.Մ.Ը.Մ.ի բացակայութեան, մինչեւ օրս ուրիշներ կը փորձէին կատարել այդ մէկը՝ մնալով սակայն քաղաքի մը, շրջանակի մը, ընկերային միջոցառումի մը սահմաններուն մէջ: Այսօր, Հ.Մ.Ը.Մ.ի նախաձեռնութեամբ այս աշխատանքը կը դուրս աւելի ամուր, աւելի կազմակերպ եւ աւելի լուրջ հիմնուած վրայ, նպատակ ունենալով ընկերայինէն ու մարզակա-նէն անդին՝ ազգայինը: Ով որ լսած է, կամ գիտէ, Հ.Մ.Ը.Մ.ի դերակատարութիւնն ալ ա՛յդ է արդէն. հաւաքել, համախմբել մեր ցիր ու ցան երիտասարդութիւնը եւ կարելի բոլոր միջոցներով անոր ջամբել հայկական պատկանելիութեան զգացում, հայկականութեան դիմագիծ եւ ինքնութիւն:

Սիրելի՛ տղաք,

Աշխարհը կը զարգանայ շատ արագ: Ամէն ինչ կը փոխուի մեր շուրջ եւ մենք ալ, իբրեւ ժողովուրդ, իբրեւ Սփիւռք, ամէն օր կ'ենթարկուինք հակայական փոփոխութիւններու: Կը դիմագրաւենք տեսակ-տեսակ դժուարութիւններ, որոնց դէմ դնելու մեր մեծագոյն գէնքը մեր ուժն է: Այդ ուժը նիւթականը չէ: Նիւթականը կարելոր է, բայց անբաւարար է: Այդ ուժը մեր ունեցած միջոցները չեն, որոնք այդքան ալ շատ չեն: Այդ ուժը, մեր մարդուժն

Թող այս հաւաքը մեկնակէտը ըլլայ Եւրոպայի հայութեան ուժի ստեղծման առաջին քայլին: Գալիք օրերուն պիտի յաջորդեն նոր քայլեր, աւելի մեծ եւ աւելի ինքնավստահ քայլեր, որոնք Եւրոպայի մեր տղաքը պիտի համախմբեն համաեւրոպական Հ.Մ.Ը.Մ.ական մարզախաղերու եւ բանակումներու շուրջ, երիտասարդական նման հաւաքներու շուրջ եւ նոր եռանդ ու խանդավառութիւն պիտի տան մեր կեանքին: Հաւատացէ՛ք, դուք շատ բան կրնաք ընել մեր ժողովուրդին եւ հայրենիքին համար: Անհրաժեշտ է միայն կազմակերպուիլ, աւելի շատ քով-քովի ըլլալ եւ մեր ապրած քաղաքներուն եւ երկիրներուն մէջ Հ.Մ.Ը.Մ.ական խանդավառութիւն եւ ջերմութիւն տարածել:

է, դո՛ւք էք, որ ձեր գաղափարներով, ձեր նորութիւններով ու ձեր աշխատանքով մեր կեանքը յառաջ պիտի տանիք եւ օրէ օր աւելի պիտի զօրացնէք մեզ:

Թող այս հաւաքը մեկնակէտը ըլլայ Եւրոպայի հայութեան ուժի ստեղծման առաջին քայլին: Գալիք օրերուն պիտի յաջողեն նոր քայլեր, աւելի մեծ եւ աւելի ինքնավստահ քայլեր, որոնք Եւրոպայի մեր տղաքը պիտի համախմբեն համաեւրոպական Հ.Մ.Ը.Մ.ական մարգարադերու եւ բանակումներու շուրջ, երիտասարդական նման հաւաքներու շուրջ եւ նոր եռանդ ու խանդավառութիւն պիտի տան մեր կեանքին:

Հաւատացէ՛ք, դուք շատ բան կրնաք ընել մեր ժողովուրդին եւ հայրենիքին համար: Անհրաժեշտ է միայն կազմակերպուիլ, աւելի շատ քով-քովի ըլլալ եւ մեր ապրած քաղաքներուն եւ երկիրներուն մէջ Հ.Մ.Ը.Մ.ական խանդավառութիւն եւ ջերմութիւն տարածել:

Հ.Մ.Ը.Մ.ը 99 տարեկան միութիւն է. ան մէկ դարու փորձառութիւն ունի: Յառաջիկայ տարի միութիւնը կը պատրաստուի ձեռնարկներու շարքով մը մեծ շուքով տօնելու իր հիմնադրութեան 100-ամեակը: Մեր սպասումն է, որ 100-ամեակի այդ ձեռնարկներուն, յատկապէս հոս՝ Եւրոպայի մէջ

Կը դիմագրաւենք տեսակ-տեսակ դժուարութիւններ, որոնց դէմ դնելու մեր մեծագոյն զէնքը մեր ուժն է: Այդ ուժը նիւթականը չէ: Նիւթականը կարեւոր է, բայց անբաւարար է: Այդ ուժը մեր ունեցած միջոցները չեն, որոնք այդքան ալ շատ չեն: Այդ ուժը, մեր մարդուժն է, դո՛ւք էք, որ ձեր գաղափարներով, ձեր նորութիւններով ու ձեր աշխատանքով մեր կեանքը յառաջ պիտի տանիք եւ օրէ օր աւելի պիտի զօրացնէք մեզ:

Թէ Հայաստանի տարածքին տեղի ունենալիք ձեռնարկներուն, տեսնենք ձեզմէ իւրաքանչիւրդ իր ընկերներով ու հարազատներով: Այսօր, 50-55 հոգիով սկսած այս օղակը մինչեւ 100-ամեակ հարկ է որ յայնայ, մեծնայ եւ իր մէջ ներառնէ մեծ թիւով երիտասարդութիւն, որ այսօր սիրուած է Եւրոպայի տարածքին՝ Վիեննայէն մինչեւ Փարիզ, Լոնտոն եւ Միւնիխ, Հոլանտայէն մինչեւ Յունաստան եւ Շուէտ, առանց մոռնալու արեւելեան Եւրոպան՝ Պոլկարիայով եւ մնացեալ երկիրներով, ուր այնքան շատ գործ կայ կատարելիք:

Մենք կը հաւատանք, որ եթէ Եւրոպայի մեր տղաքը համախմբուին ու կազմակերպուին, կրնան հասնիլ նաեւ հո՛ն, ուր հայութիւն կայ, բայց կազմակերպւածութիւն չկայ՝ Պելճիքայէն մինչեւ

Գերմանիոյ եւ Ֆրանսայի կարգ մը քաղաքները, մինչեւ ըՍպանիա, Ռումանիա, Հունգարիա եւ այլուր:

Այս ակնկալութիւններով, Հ.Մ.Ը.Մ.ի կեդրոնական Վարչութեան անունով, անգամ մը եւս կ'ողջունենք Վիեննայի մասնաճիւղին կազմակերպած երիտասարդական այս հաւաքը եւ յաջողութիւն կը մաղթենք անոր աշխատանքներուն:



Pink Kimberley™
AUSTRALIA

PinkKimberley.com.au



Diamonds beyond rare

Pink Kimberley is an exquisite blend of natural Australian pink diamonds from the Argyle mine and white diamonds surrounded by 18ct gold. The jewellery designs are unique and distinctive. Australian Argyle pink diamonds are the rarest & most precious diamonds in the world.

ԱՐԺԱՆԻ ԺԱՌԱՆԳՈՐԴՆԵՐԸ ԸԼԼԱԼ Հ.Մ.Ը.Մ.Ի ՀԱՐՈՒՍՏ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ

(Հ.Մ.Ը.Մ.Ի ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ԱՆԴԱՄ
ԵՂԲ. ԲԱՖՖԻ ԿԵՎՕՂԼԱՆԵԱՆԻ ՊԱՏԳԱՄԸ՝
«ՀԱՅ ՍԿԱՌՈՒՏԻ ՕՐ»ՈՒԱՆ ՀԱՆԴԻՍՈՒԹԵԱՆ, ԼԻԲԱՆԱՆ)

Հայ Մարմնակրթական Ընդհանուր Միութիւնը. Հայ իրականութեան մեծագոյն միութիւնը, որ դար մը շարունակ սկստուական եւ մարզական գոյգ թեւերով սաւառնելով, տարածուած է աշխարհասփիւռ 108 մասնաճիւղերու մէջ եւ այսօր կը հաշուէ աւելի քան 26 հազար անդամ:

Հ.Մ.Ը.Մ.Ի-ը ուր որ եղած է կախարդանքով մը իր շուրջը իւրապատուկ գրաւչութիւն եւ խանդավառութիւն ստեղծած է:

Ազգային բանակի կարօտ սփիւռքահայր տասնամեակներ շարունակ սկստական կանոնաւոր շարքերու տողանցքը դիտելով անկախութիւն երազած է, մինչեւ որ հասած է իր մուրազին:

Յաղթանակի ծարաւ հայորդին մարզական խումբերու նուաճումներով եւ յաղթանակի բաժակներու հաւաքածոներով տարիներ շարունակ գմայլած է եւ կը շարունակէ գմայլի:

Ժառանգ մը, սկսեալ միութեան հիմնադիրներէն, մինչեւ այսօր, 99 տարի շարունակ կորով, պարծանք եւ հոգեկան գոհունակութիւն սփռելով եղած է փրկութեան յաստ եւ մեր գոյութիւնը իսթարող վտանգներու դէմ անառիկ պարիսպ:

Պատահական չէր, որ աւելի քան 36 տարի առաջ, Լիբանանի մէջ «Հայ սկստուտի օր»ուան գաղափարը յղացող եղբ. Կարօ Թիւթիւնճեան եւ իր գլխաւորած Սկստական խորհուրդի անդամները, կը ծրագրէին այնպէս մը, որ ան գուզադիպի Վարդանանց յիշատակի շարթուան:

«Հայ սկստուտի օր»ուան նշումին եւ Վարդանանց հերոսամարտին միջեւ գուզահեռ մը գծելով կարելի եղաւ ներշնչումի մնայուն աղբիւր ապահովել: 451-ին, հայոց պատմութեան մեծագոյն դէպքէն քաղուած կարեւորագոյն դասերէն մէկը եղաւ այն, որ գորաւոր կամքով, յարատեւ աշխատանքով ու հաւատքով անպարտելի թուող մեծագոյն մարտահրաւէրներն իսկ կարելի է յաղթահարել:

Ահաւասիկ, Հ.Մ.Ը.Մ.Ի սկստուտները, այսօր 21-րդ դարու արդիականացման քողին տակ պահուած դժուարութիւններու դէմ յանդիման՝ հոսանքն ի վեր կը թիալարեն: Անոնցմէ



իւրաքանչիւրը կանգնած է իբրեւ մէկական պահակ Հայ լեզուի, Հայ մշակոյթի, Հայ գիրի եւ հայկական սովորութիւններու ու բարքերու:

Հ.Մ.Ը.Մ.Ի սկստուտները մեծ դերակատարութիւն ունին Հայ պատանիներն ու երիտասարդները ազգային եւ բարոյական արժէքներէ հեռացնող հոսանքներու դէմ պաշտպանելու խմաստով:

Շրջանային խմբապետութեան եւ Շրջանային Սկստական խորհուրդի տարեկան յայտագիրին մէջ տեղ գտած դաստիարակչական ծրագիրին մօտէն հետեւողը հոգեկան մեծ գոհունակութեամբ կը լեցուի՝ տեսնելով որ գործը կը շարունակէ մնալ ապահով ձեռքերու մէջ:

Խմբապետական սեմինարներն ու Վկայեալ Կարգի դասընթացները բարձր մակարդակով եւ վերանորոգուած ձեւով կիրարկելն ու յաջողցնելը գորաւոր փաստեր են, որ տակաւին կա՛ն խմբապետ-խմբապետուհիներ, որոնք հինէն եկած աւանդին պահպաններն են:

Միութեան մէջ տակաւին կա՛ն երիտասարդ տղաք ու աղջիկներ, որոնք արտաքին աշխարհի մակերեսային հաճոյքները մէկ կողմ ձգած՝ եկած են ըսկստական շարքերու մէջ գիտելիք փոխանցելով մատղաջ սերունդի դաստիարակչական հաճոյքը վայելելու:

Այս դաստիարակչական միջոցներն արդիւնքը ակնյայտ է լիբանանահայու-

Հ.Մ.Ը.Մ.Ի սկստուտները, այսօր 21-րդ դարու արդիականացման քողին տակ պահուած դժուարութիւններու դէմ յանդիման՝ հոսանքն ի վեր կը թիալարեն: Անոնցմէ իւրաքանչիւրը կանգնած է իբրեւ մէկական պահակ հայ լեզուի, հայ մշակոյթի, հայ գիրի եւ հայկական սովորութիւններու ու բարքերու:

Թեան կեանքին մէջ, ինչպէս նաեւ՝ բոլոր գաղութներու մէջ, հոն ուր Հ.Մ.Ը.Մ.ը ներկայութիւն է:

Միրելի՛ ներկաներ, պիտի խնդրեմ վայրկեան մը փակէք ձեր աչքերը եւ մեր գաղութի ազգային, կրօնական եւ մշակութային կեանքի զանազան առիթները պատկերացնէք առանց Հ.Մ.Ը.Մ.ի ըսկառուներու ներկայութեան եւ մասնակցութեան:

Պատկերացուցէ՛ք կաթողիկոսարանի շրջափակը Անթիլիասի ուխտի օրը կամ այլ տօնական առիթներու՝ առանց Հ.Մ.Ը.Մ.ի սկառուներու մեծաթիւ, խիտ ու օրինապահ շարքերուն:

Պատկերացուցէ՛ք մեր բոլոր եկեղեցիներու անուանակոչութիւնները՝ առանց Հ.Մ.Ը.Մ.ի սկառուական խումբերուն եւ շեփորախումբին:

Եւ մանաւանդ, պատկերացուցէ՛ք Մայիս 28-ի տօնակատարութիւն մը՝ առանց Հ.Մ.Ը.Մ.ի փառատօնին եւ առանց հայկական բոլոր վարժարաններու մէջ տեղի ունեցող դրօշակի արարողութեան եւ հայ աշակերտութեան ուղղուած Հ.Մ.Ը.Մ.ի անկախութեան ուղերձին:

Եւ ասոնց պէս քանի՛-քանի՛ առիթներ, տօնակատարութիւններ եւ հաւաքներ...

Այո՛, սիրելի ներկաներ, Հ.Մ.Ը.Մ.ի սկառուները մեծ դերակատարութիւն ունին ազգային հպարտութիւն ներշնչելու եւ հայրենի գոյատեւման աւելի ներարկելու իմաստով:

Եւ տակաւին, 1918-ին ծնունդ առած Եռագոյն դրօշը Հաստատանի առաջին հանրապետութեան օրերէն ետք, 70 երկար տարիներ Հ.Մ.Ը.Մ.ը եւ իր սկառուները պահեցին բարձր:

Այսպէս, սկառուական իւրաքանչիւր հաւաքի եւ դրօշակի արարողութեան ընթացքին, Եռագոյնն ու Հ.Մ.Ը.Մ.ի դրօշները կողք-կողքի բարձրացան եւ ծածանեցան: Սկառուական շարքերը յարգանքով բարեւի կանգնեցան, քայլերզը երգեցին

Հ.Մ.Ը.Մ.ի Լիբանանի սկառուները իրենց միութեանկան պատկանելիութեամբ պարծենալու բոլոր տունայները առատօրէն ունին: Հը - պարտութիւն մը, որ շարքերուն յաւելեալ պացք եւ խանդ կու տայ հաստատ եւ ինքնավստահ քայլերով փառապանծ ապագայ ուղղուելու:

եւ երկար տարիներ երազեցին Եռագոյնը ծածանած տեսնել Հայաստանի պետական ու պաշտօնական բոլոր հաստատութիւններուն վերեւ:

Հ.Մ.Ը.Մ.ի սկառուները խոր հաւատքով եւ հաստատակամօրէն երազեցին, մինչեւ որ 1991-ին եկաւ այդ փառապանծ անկախութեան օրը, ուր Եռագոյնը վերագտաւ իր իսկական տեղը:

Հ.Մ.Ը.Մ.ի սկառուները տասնամեակներ շարունակ երգեր յօրինեցին ըսելով՝ «Արարատի գագաթին Եռագոյն պարզել կ'ուզենք»: Ու, ահաւասիկ, Հ.Մ.Ը.Մ.ական խմբապետներ ու խմբապետուհիներ

այսօր կու գան այդ իղձը իրականութեան վերածելու, ո՛չ թէ երգով կամ թատրոնով, այլ իրողապէս մագլցելով Արարատ լեռը եւ անոր սրբազան կատարին կողք-կողքի կոթողելով Եռագոյնն ու Հ.Մ.Ը.Մ.ի դրօշը:

Ասիկա մարզական սովորական չարքաշ արարք մը չէ, սիրելի ներկաներ: Ասիկա մեր միութեան հիմնադիրներուն, տասնեակ տարիներ անոնց տեսլականով առաջնորդուելու եւ հազարաւոր հայ սկառուներու մուրազին իրականացումն է:

Հ.Մ.Ը.Մ.ի Լիբանանի սկառուները իրենց միութեանկան պատկանելիութեամբ պարծենալու բոլոր տուեալները առատօրէն ունին: Հպարտութիւն մը, որ շարքերուն յաւելեալ սլացք եւ խանդ կու տայ հաստատ եւ ինքնավստահ քայլերով փառապանծ ապագայ ուղղուելու:

Այս սրահին մէջ ներկայ են Լիբանանի սկառուական շարքերուն մէջ գործած վեթերան աւագ խմբապետ-խմբապետուհիներ, որոնք քանի մը տասնեակ տարիներ առաջ սկառուական իրենց գիտելիքներն ու դասախօսութիւնները թուղթին յանձնելով զարգացուցին «Հ.Մ.Ը.Մ.ի սկառուական գրականութիւն» կոչուած մշակոյթ մը: Մեր սկառուները բնութեան մէջ չարքաշ գործունէութիւն ունենալու կողքին ունեցան նաեւ սեմինարներու թղթածրարներ, խմբապետներու վերա-

որակաւորման դասախօսական շարքեր եւ մանաւանդ՝ սկառուական բոլոր կարգերու յատուկ գիրքեր, որոնք այսօր աշխարհասփիւռ Հ.Մ.Ը.Մ.ականներու կողմէ կ'օգտագործուին իբրեւ միութեանկան եւ սկառուական գիտելիքներու հարուստ գրադարան:

Այս բոլորին վրայ կ'աւելնայ եղբայր Բիւզանդ Թորիկեանի Հ.Մ.Ը.Մ.ի պատմութեան չորս հատորներուն մէջ ամփոփուած հսկայ գանձը, որ դէպքերու, դէմքերու, ժողովներու, նուաճումներու եւ ձեռքբերումներու երկար շարան մը մէկտեղելով, կ'անմահացնէ միութեան անգին ժառանգը, մնայուն ներշնչումի եւ դասեր քաղելու աղբիւր հանդիսանալով:

Հ.Մ.Ը.Մ.ը այսօր կանգնած է իր

Հ.Մ.Ը.Մ.ի սկառուները տասնամեակներ շարունակ երգեր յօրինեցին ըսելով՝ «Արարատի գագաթին Եռագոյն պարզել կ'ուզենք»: Ու, ահաւասիկ, Հ.Մ.Ը.Մ.ական խմբապետներ ու խմբապետուհիներ այսօր կու գան այդ իղձը իրականութեան վերածելու, ո՛չ թէ երգով կամ թատրոնով, այլ իրողապէս մագլցելով Արարատ լեռը եւ անոր սրբազան կատարին կողք-կողքի կոթողելով Եռագոյնն ու Հ.Մ.Ը.Մ.ի դրօշը:
Ասիկա մարզական սովորական չարքաշ արարք մը չէ, սիրելի ներկաներ: Ասիկա մեր միութեան հիմնադիրներուն, տասնեակ տարիներ անոնց տեսլականով առաջնորդուելու եւ հազարաւոր հայ սկառուներու մուրազին իրականացումն է:
Հ.Մ.Ը.Մ.ի Լիբանանի սկառուները իրենց միութեանկան պատկանելիութեամբ պարծենալու բոլոր տունայները առատօրէն ունին: Հպարտութիւն մը, որ շարքերուն յաւելեալ պացք եւ խանդ կու տայ հաստատ եւ ինքնավստահ քայլերով փառապանծ ապագայ ուղղուելու:

100-ամեակի սեմին, ու անդամներին կը պահանջուի ըլլալ արժանի ժառանգորդները այս հարուստ պատմութեան եւ իրագործումներուն, արժանաւորապէս յիշատակելու համար այս պատմական տարեգարձը եւ պատշաճ կերպով կանխածրագրելու համար զալիք ամեակները:

Այս ծրագիրները յաջողցնելու համար հարկ է մեր ճիգերը մէկտեղել: Կը գրանուինք դժուար ժամանակաշրջանի մը մէջ, ուր պատանիներու ուշադրութիւնն ու կեդրոնացումը խանգարող այլազան պատճառներ կան: Թուլութիւնը, անտարբերութիւնը եւ փոխադարձ յարգանքի նուազումը շատ մը բնագաւառներու մէջ աւերներ կը գործեն: Նախաձեռնութեան ոգին հազուադէպ կը թուի ըլլալ:

Ուստի, անհրաժեշտ է մասնագիտական մօտեցումով վերամշակել մեր գործունէութեան ոճը, միշտ հաւատարիմ մնալով Հ.Մ.Ը.Մ.ի սկզբունքներուն եւ տեսլականին: Հարկ է գիտահետազոտական աշխատանք տանիլ, յարաբերական լայն գործունէութիւն մշակել եւ արհեստագիտութեան ընձե-

Անհրաժեշտ է մասնագիտական մօտեցումով վերամշակել մեր գործունէութեան ոճը, միշտ հաւատարիմ մնալով Հ.Մ.Ը.Մ.ի սկզբունքներուն եւ տեսլականին: Հարկ է գիտահետազոտական աշխատանք տանիլ, յարաբերական լայն գործունէութիւն մշակել եւ արհեստագիտութեան ընձեռնարկները օգտագործել «Բարձրացի՛ր-բարձրացուր» նշանաբանը առօրեայ ապրումի վերածելու համար:




Հ.Մ.Ը.Մ.ի սկաուտութիւնը պարարտ հող է: Հոն սերմանելը արդիւնաւետ գործ է:

ուած այլազան կարելիութիւնները օգտագործել «Բարձրացի՛ր-բարձրացուր» նշանաբանը առօրեայ ապրումի վերածելու համար:

Հ.Մ.Ը.Մ.ի սկաուտութիւնը պարարտ հող է: Հոն սերմանելը արդիւնաւետ գործ է: Միութեանական կազմաւորումը հոն է որ տեղի կ'ունենայ: Տիպար եւ օրինակելի անդամը հոն է որ փորձառութիւն ձեռք կը ձգէ: Գիտակից ժողովականն ու ժողովապարը այդ հնոցին մէջ է որ կը թրծուի:

Ճիշդ այս պատճառներով, սկաուտական շարքերուն եւ խմբապետական կազմերուն նեցուկ կանգնիլը, բարոյապէս եւ նիւթապէս աջակցիլը, հեռատես վարչականին եւ գիտակից միութեանականին առաջնահերթութիւնները պէտք է ըլլան:

Ուստի, «Պատուաբեր անցեալէն՝ յաղթական ապագայ» 100-ամեակի նշանաբանին հաւատարիմ՝ շարունակենք մեր ընթացքը, բանիւ եւ գործով, դէպի Հ.Մ.Ը.Մ.ի հարիւրամեակ եւ նաեւ՝ յաւելեալ փայլուն ամեակներ:



- Full of Charme Hotel, New Construction, French Architecture, International Standards, 100 m from the Republic Square and 15 minutes from the Yerevan International Airport.
- 44 Rooms and 3 Suites with all comforts, all climate controled, minibar, shower or bathroom with private WC, hairdryer. Satellite TV, international direct dial phone. Internet & Email access.
- Individualized and personal service, 24 hour reception and room service
- Bar



Feel at home, away from home...

Yerevan
32-38, Hanrabadoutian Street,
Yerevan 375010, Armenia
Tel 374 10 54 60 60 • Fax 374 10 54 60 50
sales@europehotel.am

Reservations

StudioVCKEN 2005 PARIS

www.europehotel.am

ՎԱՍՏԱԿԱՇԱՏ Հ.Մ.Ը.Մ.ԱԿԱՆ ԵՂԲ. ՍՈՒՐԷՆ ՆԱԶԱՐԵԱՆԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ

(Հ.Մ.Ը.Մ-ի ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ԱՆԴԱՄ ԵՂԲ. ԲԱՖՅԻ ԿԵՎՕՂԼԱՆԵԱՆԻ ԱՐՏԱՍԱՆԱԾ ԽՕՍՔԸ՝ «ԳԻՐՔ ԵՐԱԽՏԻՔԻ» ՀԱՏՈՐԻ ՇՆՈՐ ՀԱՀԱՆԴԵՍԻՆ)

Ուրբաթ, 29 Մարտ, 1991, Աթէնք, Յունաստան:

Հ.Մ.Ը.Մ-ի Ե. Պատգամաւորական Ընդհանուր Ժողով:

Չորրորդ օրակարգ՝ մնայուն դիւանի ընտրութիւն:

Հակառակ կրտսերագոյն ժողովականներէն մէկը ըլլալու, Պատգամաւորական Ընդհանուր Ժողովը, անարժանաբար, զիս ընտրեց մնայուն դիւանի չորս ատենադպիրներէն մէկը:

Ու երբ դիւանի սեղանը բարձրացայ եւ ինքզինքս ծանօթացնելով ձեռքս կողքիս նստած երէց եւ փորձառու ատենադպիրին երկարեցի, մտքիս ծայրէն իսկ չանցաւ, որ աւելի քան քառորդ դար ետք, ինծի պիտի վիճակուէր վաստակաւատ այդ եղբոր գիրքի շնորհահանդէսին Հ.Մ.Ը.Մ-ի Կեդրոնական Վարչութեան խօսքը արտասանելը:

Սուրէն Նազարեանը եղած է այն հաւատաւոր Հ.Մ.Ը.Մ-ականներէն մէկը, որ շատերու հետ իր բաժինը բերած է Հայէպի ազգային-հասարակական կեանքի յառաջընթացին:

Եղբ. Սուրէն, 1932-ին, 9 տարեկանին, իր երէց եղբոր հետ անդամակցած է Հ.Մ.Ը.Մ-ին, իբրեւ գայլիկ: Այնուհետեւ, ան հասակ առած է Լեւոն Արզարեանի, Նշան Թիւլսիգեանի, Լուստեր Մասպանաձեանի եւ այլոց շունչին տակ եւ կերտած է Հ.Մ.Ը.Մ-ականի գաղափարական իր նկարագիրը:

1952-ին, Սուրիոյ մարզական բոլոր միութիւններն ու

սկառուտական խումբերը պետական հրամանագիրով մը լուծուած յայտարարուեցան: Այդ ծանր օրերուն եղբայր Սուրէնի ուսերուն դրուեցաւ Հ.Մ.Ը.Մ-ի գրեթէ կազմալոյծ սկառուտութիւնը վերականգնելու աշխատանքը:

Յաջա սուրիական պետութեան ան դարձաւ պատասխանատուն Հայէպի 8-րդ միաւորին, որ կը գործէր սուրիական սկառուտութեան ծիրէն ներս: Հ.Մ.Ը.Մ-ի Հայէպի վարչութիւնը անոր շնորհեց մասնաճիւղի ընդհանուր խմբապետի պաշտօնը, զոր արժանաւորապէս վարեց մօտ քառորդ դար:

Հետագային, Մերձաւոր Արեւելքի Շրջանային Վարչութեան կողմէ ան նշանակուեցաւ Սուրիոյ Շրջանային Խմբապետ: Աւելի ուշ, երբ Սուրիոյ Հ.Մ.Ը.Մ-ը ունեցաւ իր Շրջանային Վարչութիւնը, ան հրաւիրուեցաւ նախ՝ Շրջանային ու ապա՝ Շրջանային ընդհանուր խմբապետի պաշտօնին:

1953-1975, իբրեւ սկառուտութեան ներկայացուցիչ, եղբայր Սուրէն ընդհատաբար մաս կազմած է Հ.Մ.Ը.Մ-ի Հայէպի մասնաճիւղի վարչութիւններուն եւ Սկառուտ. Խորհուրդներուն, ապա՝ 1977-1987 ան ընտրուած է Սուրիոյ Շրջանային Վարչութեան անդամ, ստանձնելով ատենադպիրի պաշտօն:

1954-ին, եղբայր Սուրէն ընտրուած է հիւսիսային Սուրիոյ Արաբական Սկառուտական Խորհուրդի անդամ: Ամբողջ 23 տարի, անընդմէջ ան վերընտրուած է ու դարձած ձեռով մը անպաշտօն ներկայացուցիչը Հայէպի հայկական սկառուտական բոլոր կազմերուն:

Եղբայր Սուրէն մասնակցած է Հ.Մ.Ը.Մ-ի Մերձաւոր Արեւելքի երեք Շրջանային Ներկայացուցչական Ժողովներուն, իսկ համազարուցային կառուցի ստեղծումէն ետք՝ 6 Պատգամաւորական Ընդհանուր Ժողովներուն:

1983-ին ան ընտրուած է Կեդրոնական Վարչութեան փոխ անդամ:

Հ.Մ.Ը.Մ-ի Կեդրոնական Վարչութիւնը գնահատելով բազմամիաստակ եղբոր երկար տարիներու նուիրումը եւ ծառայութիւնը Հ.Մ.Ը.Մ-ին եւ Սուրիոյ սկառուտական կեանքի վերելքին ու զարգացման, նաեւ գնահատելով անոր կատարած աշխատանքը միութենա-

Յետադարձ ակնարկով մը, երբ կը նայիմ եղբայր Սուրէն Նազարեանին եւ Սուրէն Նազարեաններուն, ինծի համար պարզ եւ յստակ կ'ըլլայ այս մեծ միութեան գոյատեւման գաղտնիքը: Միութիւն մը, որ հինգ ցամաքամասերու մէջ, իր դրօշին տակ հաւաքած է հայու ճակատագրով աշխարհի հեռաւոր ծայրամասերը հասած հայորդիները, որոնք «Յառաջ նահատակ» քայլերդէն, շեփորախումբերու երաժշտութեան եւ եղբայր Սուրէններու ժառանգէն աիշ առած՝ իրենց փառապանծ ջերթը կը շարունակեն մինչեւ 100-ամեակ ու անկէ ալ անդին:

Այսօր, ցահը ձեռքն է ներկայ սերունդին, որուն վիճակուած է կա՛ն նորանոր գագաթներ մագլցիլ եւ նորանոր նուաճումներ արձանագրել եւ կա՛ն անտարբերութեամբ, անհոգութեամբ ու թուլութեամբ փլլել մեր գոյատեւումն ու ծաղկումը երաշխատող պարիսպները, որոնցմէ մէկը կը կոչուի Հ.Մ.Ը.Մ.:

կան եւ ազգային մարզերու մէջ, միութեան հիմնադրութեան 70-ամեակի հանդիսութեան ընթացքին, 20 Նոյեմբեր 1988-ին, զայն պարգևատրած է Հ.Մ.Ը.Մ.ի «Արժանեաց» շքանշանով:

Ե. Պատգամաւորական Ընդհանուր Ժողովին սկիզբը, երբ ձեռքս երկարեցի եւ պատուաբեր կենսագրականով հարուստ Հ.Մ.Ը.Մ.ական այս եղբօր հետ ձեռնուեցայ, եղբայր Սուրէնին կենսագրական գիծերը Հ.Մ.Ը.Մ.ի պարբերաթերթ «Մարգրիկ»ի մէջ յափշտակութեամբ կարդացած էի արդէն:

Շատ հպարտ եւ խօսելու անկարող ըլլալու չափ հրճուած էի: Կարծես Հ.Մ.Ը.Մ.ի աւանդով եւ արժէքներով կը հաղորդուէի:

Քանի մը օրերու վրայ երկարած այդ Պատգամաւորական Ընդհանուր Ժողովը խտացուած դասընթացքի մը համազօր ժամանակահատուած մը եղաւ: Ականատես եղանք, թէ ինչպէ՛ս եղբայր Նազարեան չափազանց մանրամասնութեամբ, բծախնդրութեամբ եւ կոկիկութեամբ կ'արձանագրէր ժողովին ընթացքին եղած արտայայտութիւններն ու ելոյթները:

Ատենադպրութեան հմտութիւնը ակնյայտ էր: Կարծէք ձեռքի գրիչն իսկ ուրախ ու հանգիստ էր, որովհետեւ ճիշդ տեղը ինկած էր:

Նոյն այս ժողովի աւարտին, Մարտ 1991-ին, եղբայր Սուրէն աշխարհասփիւռ միութեան գերագոյն մարմինի՝ Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան անդամ ընտրուեցաւ եւ քառամեակ մը ամբողջ իր փորձառութիւնն ու կարողութիւնը դրաւ իր շատ սիրելի միութեան տրամադրութեան տակ:

Այսօր, յետադարձ ակնարկով մը, երբ կը նայիմ եղբայր Սուրէն Նազարեանին եւ Սուրէն Նազարեաններուն, ինձի համար պարզ եւ յստակ կ'ըլլայ այս մեծ միութեան գոյատեւման գաղտնիքը: Միութիւն մը, որ հինգ ցամաքամասերու մէջ, իր դրօշին տակ հաւաքած է հայու ճակատագրով աշխարհի հեռաւոր ծայրամասերը հասած հայորդիները, որոնք «Յառաջ նահատակ» քայլերգէն, շեփորախումբերու երաժշտութենէն եւ եղբայր Սուրէններու ժառանգէն աւել յառա՛ծ՝ իրենց փառապանծ շքերթը կը շարունակեն մինչեւ 100-ամեակ ու անկէ ալ անդին:

Այսօր, ջահը ձեռքն է ներկայ սերունդին, որուն վիճակաւ չէ կա'մ նորանոր գազաթներ մագլցել եւ նորանոր նուաճումներ արձանագրել եւ կա'մ անտարբերութեամբ, անհոգութեամբ ու թուլութեամբ փլել մեր գոյատեւումն ու ծաղկումը երաշխաւորող պարիսպները, որոնցմէ մէկը կը կոչուի Հ.Մ.Ը.Մ.:

Այսօրուան այս շնորհանդէսը վաստակաւոր մշակի եւ օրինակելի միութենականի մը մեծարանքի առիթը ըլլալու կողքին, շատ լաւ առիթ մըն է նախ խարազանելու մեր միտքերը ու գարթուցիչ ժամացոյցի դօղանջով մէկգմէկու արթնցնելու, որպէսզի մեզի հասած ջերմ խարոյկը միշտ վառ պահենք:

Վարձքը կատա'ր, յարգանքի արժանի եղբայր Սուրէն Նազարեան:



ՀԱՄԱԶԳԱՅԻՆԻ ՎԱԷ ՍԵԹԵԱՆ ՏՊԱՐԱՆ - ՀՐԱՏԱՐԱԿՉԱՏՈՒՆ
HAMAZKAYIN VAHE SETHIAN PRINTING AND PUBLISHING HOUSE

ԳԻՐՔԸ
ՄԱՐԴՈՒ
ԼԱՌԱԳՈՅՆ
ԲԱՐԵԿԱՄՆ Է

BOOKS ARE
A MAN'S BEST FRIEND



«Ըաղզոյեան» կեդրոն, Պոլսի Համուտ | Հեռ՝ +961 1 241262/3/4
Ֆաքս՝ +961 1 260329 | Ե-նամակ՝ print@hamazkayin.com
Կայքէջ՝ www.hamazkayin-bookstore.com
Դիմատետր՝ Գանձարան - Hamazkayin
Publishing, Bookstore

ՀԵԾԵԼԱՐՇԱՒԻ ԱՇԽԱՐՀԻՆ Հ.Մ.Ը.Մ.ԱԿԱՆ ԴԵՍՊԱՆԸ՝ ԵՂԲ. ՎԱՀԷ ԾԱՏՈՒՐԵԱՆ

Անցնող ամիսներում, հեծելաքառախի աշխարհին մեջ բարձր հնչեց Հ.Մ.Ը.Մ.ական եղբ. Վաչէ Ծատուրեանի անունը, որ երկու ամսուան մեջ ընտրվեցաւ Ասիոյ եւ արաբական ֆետերասիոններու գործադիր մարմիններու անդամ:

Ծատուրեան երեք տասնամեակի մարզական կենսագրութիւն ունի Հ.Մ.Ը.Մ.ին մէջ, իբրեւ մարզիկ, մարզիչ եւ վարչական պատասխանատու: «Մարզիկ» եղբոր ընտրութիւնները շնորհատրելով լուսարձակի տակ կ'առնէ միութենական անոր նուաճումներն ու միջազգային յաջողութիւնները:

ԱՌԱՋԻՆ ՔԱՅԼԵՐԸ

Եղբ. Վաչէ Ծատուրեան ծնած է 1974-ին, Հ.Մ.Ը.Մ.ական ընտանիքի մէջ: Փոքր տարիքէն մարմանամարզի նկատմամբ իր սէրը կ'արտայայտէ զանազան մարզախաղեր կիրարկելով:

1987-ին ան կը հանդիսանայ ԼԵՎԱՄ-ի փինկ-փոնկի կրտսերներու ախոյեան, որմէ անմիջապէս ետք ան մաս կը կազմէ Հ.Մ.Ը.Մ.ի փինկ-փոնկի կրտսերներու ներկայացուցչական խումբին: Քանի մը ամիս ետք, ան ամբողջովին կը նւերկրուի իր ընտանեկան աւանդական մարզաձեւին՝ հեծելաքառախ, հետեւողական ու լուրջ մօտեցումով: 1988-1990, ան իր փորձերը կը կատարէ հօրեղբոր՝ Յովհաննէս Ծատուրեանի եւ հօր՝ Վարդգէս Ծատուրեանի հսկողութեամբ եւ իր եղբոր՝ Հրաչի ցուցմունքներով: 1991-ին կը մասնակի Լիբանանի հեծելաքառախ կրտսերներու ախոյեանութեան եւ կը հանդիսանայ ախոյեան:



1992-ին, ան կը մասնակցի Պարսերոնայի ամառնային 25-րդ ողիմպիական խաղերուն եւ Սուրիոյ համարաբական խաղերուն:

Այնուհետեւ, եղբ. Վաչէ կը մասնակցի միջազգային բազմաթիւ մրցումներու եւ ախոյեանութիւններու՝ արձանագրելով փայլուն արդիւնքներ, միշտ բարձր պահելով Հ.Մ.Ը.Մ.ի եւ Լիբանանի անունները: 1997-ին, վերջին անգամ ըլլալով, ան մաս կը կազմէ Լիբանանի հեծելաքառախ ազգային խումբին եւ կը մասնակցի Պէյրութի մէջ տեղի ունեցած համարաբական խաղերուն:

1998-ին, փրիսոփայութեան եւ միջազգային յարաբերութիւններու համալսարանական երկու վկայականները ստանելէ ետք, եղբ. Վաչէ վերջ կը դնէ իր մարզական ասպարէզին՝ անցնելով վարչական գործունէութեան: 2001-ին, իբրեւ երիտասարդ պատասխանատու, ան կը մասնակցի Ֆրանսախօս երկիրներու խաղերուն, Գանատա:

ՄԱՐԶԻՉՆ ՈՒ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆ

2004-ին, եղբ. Վաչէ կը ստանձնէ Հ.Մ.Ը.Մ.ի հեծելաքառախ տղոց եւ աղջրկանց ներկայացուցչական խումբերուն մարզիչի պաշտօնը:

Սեպտեմբեր 2004-ին, ան առաջին

անգամ ըլլալով կ'ընտրուի Լիբանանի հեծելաքառախ ֆետերասիոնի նախագահ: 2005-ին մաս կը կազմէ հեծելաքառախ արաբական ֆետերասիոնի թեքնիք յանձնախումբին, եւ Զուլիգերիոյ մէջ մարզումի դասընթացներու հետեւելով՝ ան կը ստանայ մասնաճիւղի պայքի մարզիչի վկայական: Եղբ. Վաչէ Ծատուրեանի հսկողութեան տակ մարզուած Հ.Մ.Ը.Մ.ի հեծելաքառախ տղոց ներկայացուցչական խումբերը Լիբանանի ախոյեան կը հանդիսանան 2005, 2006, 2007 եւ 2008 տարիներուն:

2008-ին, եղբ. Վաչէ կը վերընտրուի Լիբանանի հեծելաքառախ ֆետերասիոնի նախագահ, իսկ Մարտ 2009-ին կ'ընտրուի Ասիոյ հեծելաքառախ գործադիր մարմնի անդամ՝ ստանձնելով փարասայլիկի յանձնախումբին նախագահութիւնը: Տարի մը ետք, ան կը ստանայ իրաւարարի վկայական՝ Պէյրութի մէջ:

6 Փետրուար 2010-ին, եղբ. Վաչէ կ'ընտրուի Լիբանանի Ողիմպիական կոմիտէի անդամ՝ ներկայացնելով հայ համայնքը՝ Հ.Մ.Ը.Մ.ի ճամբով: 2012-ին ան կը ստանայ մարզական կազմակերպութիւններու վարչագիտական մագիստրոսի վկայականը Պեյճիքայի կաթողիկէ Լիւվէն համալսարանէն:

2014-ին, ան երկրորդ անգամ ըլլալով կ'ընտրուի Լիբանանի Ողիմպիական կոմիտէի անդամ եւ Հ.Մ.Ը.Մ.ի Լիբանանի Շրջանային Վարչութեան անդամ՝ ստանձնելով մարզական խորհուրդի պատասխանատուի պաշտօնը: Նոյն տարուան Հոկտեմբերին ան կ'ընտրուի Ֆրանսախօս երկիրներու հեծելաքառախ ֆետերասիոնի գործադիր մարմնի անդամ: 2015-ին, եղբ. Վաչէ կը նշանակուի համահայկական խաղերու Լիբանանի կոմիտէին ընդհանուր քարտուղար եւ կը գլխաւորէ համահայկական Երկր խաղերուն մասնակցող Հ.Մ.Ը.Մ.ի պատուերկուցութիւնը, որ կը վերադառնայ Լիբանան:

նան մէկ ոսկի մետալով՝ հեծելարշաւի մէջ:

Մայիս 2016-ին, Հայ Յեղափոխական Դաշնակցութիւնը զինք կ'առաջադրէ թեկնածու Պրումանայի քաղաքապետական ընտրութիւններուն ու ան կ'ընտրուի քաղաքապետական խորհուրդի անդամ: Նոյն տարուան Օգոստոսին, առաջին մասնակցութենէն 24 տարի ետք, այս անգամ իբրեւ պատւիրակութեան պատասխանատու, ան կը մասնակցի Պրագիլի ամառնային 31-րդ ողիմպիական խաղերուն: Քանի մը ամիս ետք, Դեկտեմբերին, երրորդ նստաշրջանի մը համար ան դարձեալ կ'ընտրուի Լիբանանի Ողիմպիական Կոմիտէի անդամ՝ լիբանանահայութիւնը լաւապէս ներկայացնելով:

ՆՈՐԱԳՈՅՆ

ՅԱԶՈՂՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Կրթական մարզին մէջ ունեցած երկարամեայ փորձառութեան եւ մարզական կազմակերպութիւններու վարչա-



գիտական մագիստրոսի վկայականին շնորհիւ, Յունուար 2017-ին, եղբ. Վաչէ կը նշանակուի Լիբանանի Ողիմպիական Կոմիտէի ակադեմիայի տնօրէն ու կը մասնակցի համաշխարհային սեմինարի՝ Յունաստանի Ողիմպիա քաղաքին մէջ:

Մարտ 2017-ին, հեծելարշաւի Ասիոյ Ֆետերասիոնին ընդհանուր ժողովին, Պահրէյնի մէջ, ան կ'ընտրուի գործադիր մարմնի անդամ՝ ստանձնելով

մատուցըն պայքի յանձնախումբին նախագահութիւնը: Ամիս մը ետք, Քաղապլանքայի մէջ (Մարոք) տեղի ունեցած հեծելարշաւի արաբական ֆետերասիոնի ընդհանուր ժողովին, Մատուրեան կ'ընտրուի գործադիր մարմնի անդամ՝ նոր նուաճում մը արձանագրելով:

Եղբ. Վաչէ Մատուրեան 1999-էն ի վեր իմաստասիրութիւն կը դասուանողէ Համագայինի Մելանքթոն եւ Հայկ Արսլանեան Ճեմարանին մէջ:

Ան ամուսնացած է Լորիկ Սապունճեանին հետ եւ բախտաւորուած է երկու մանչ զաւակով:

«Մարզիկ»ի հարցումին պատասխանելով եղբ. Մատուրեան կ'ըսէ. «Բոլոր նուաճումներս կը պարտիմ Մատուրեան ընտանիքին, Ճեմարանին, Հ.Մ.Ը.Մ-ին եւ Հայ Յեղափոխական Դաշնակցութեան»:

The Champs Élysées just steps away and the Parc Monceau nearby

HOTEL

★ ★ ★

PAVILLON MONCEAU

PARIS

Full of charme,
Tastefully decorated 36 rooms and 6 suites with individual heating/air conditioning, direct access telephone line, internet connection, minibar, safety box and satellite TV. Private bathroom with hairdryer.
The suites can accommodate 3 adults or a family with parents and 2 children.

43 rue Jouffroy d'Abbans 75017 Paris
Tel 331 56 79 25 00 - Fax 331 42 12 99 38
infos@pavillon-monceau.com
www.pavillon-monceau.com

Հ.Մ.Ը.Մ.Ը ԱԶԳԱՅԻՆ-ՊԱՀԱՆՋԱՏԻՐԱԿԱՆ ԱՌԱՋԻՆ ԳԻԾԻ ՎՐԱՅ

Սերոբ Սահակեան
ԵՐՈՒՍԱՂԵՄ

Հայոց Ցեղասպանութեան ոգեկոչման 100-ամեակը մնաց մեր ետին: Բոլորիս, նաեւ իմ գնահատումս եւ համոզումս այն էր, որ 100-ամեակը պիտի ըլլար անկիւնադարձային, բայց եւ այնպէս ժամանակի թաւալքը եւս պիտի ունենար իր խօսքը:

Պարզ է, որ Հալէպի նման մայր դադութի մը ահաւոր տատանումը, Հայաստան աշխարհի արտահոսքը ու, վերջապէս, արեւմտեան փերուն նոր Սփիւռքի կազմութիւնը անպայման որ հայոց պահանջատիրական ասպարէզին մէջ իրենց բացասական ու ջրատիչ անդրադարձները պիտի ունենային:

Վերջապէս, պարզ էր գէթ իմ հոտառութեանս, թէ նահատակաց վերացումը եւ անոնց սրբադասումը որոշ իմաստով պիտի աղօտէր համազգային պայքարի հոգեւոր, բայց եւ գործնապէս ազդու դաշտը, հետեւաբար նաեւ՝ պահանջատիրական թափը:

Այնուամենայնիւ, այսօր երբ դիմատետրի էջերուն վրայ պտոյտ մը կը կատարեմ ամբողջ Սփիւռքով մէկ՝ Հալէպ, Պէյրուս, Հոլանտա, Նիւ Եորք, Լոս Անճրոս, Սիանի թէ փոքրիկն Կիպրոս, կատարուած Ապրիլեան նշումներուն կը ծանօթանամ, կը նկատեմ, որ փա՛ռք Տիրոջ տակաւին բաւական տիրական է պահանջատէր հայութեան ներկայութիւնը բոլոր բեմերու վրայ, ուր պայման եւ պատշաճ է գտնուիլ:

Ու փա՛ռք Հ.Մ.Ը.Մ.ին, որ չես գիտեր ուրիշ՞ ամբարած իր ուժերով թէ ոգեչնչումով, ան պայքարի առաջին գիծի վրայ է, տեղին իր դրօշակակիրով, տեղին իր սկսուտով, տեղին բարձրախօսով, տեղին իր թմբկահարով, տեղին կանչերով ու տեղին միայն ժամ առաջ միութեան ատենապետներու ընդհանուր ժողովէ արձակուած վարչական եղբայրներով:

Վերջապէս, անգամ մը եւս կու գամ հաստատելու, թէ ինչքան ազգանուէր է Հ.Մ.Ը.Մ.ի դերը: Ինչքան հակայական է անոր դերը նաեւ այս օրերուն, մանաւանդ այս օրերուն, սփիւռքեան ահաւոր աւազախրման ենթարկուած մեր զաւակներուն ազգային ոգիի եւ դիմագիծի պահպանման, գուրդուրանքի եւ կազմաւորման իմաստով:

Վա՛յ անոր, որ կը համարձակի որեւէ ձեռով հարուածել կամ դոյզն քննադատութեան ենթարկել Հ.Մ.Ը.Մ.ի ազգանուէր ու ոչ-նուազ հայրենանուէր երթը:

Նմաններ պարզապէս կացինահարած պիտի ըլլան ազգին ոգնայարը, որովհետեւ կրնա՞ք երեւակայել Ապրիլեան երոյթ մը, Ապրիլեան ցոյց մը, հոգեւոր արարողութիւն մը, ուր Հ.Մ.Ը.Մ. ի դրօշը կամ շունչը բացակայ ըլլայ:



6-18 ՏԱՐԵԿԱՆՆԵՐՈՒ ԱՐՏԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՈՐԱԿԱՒՈՐ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԵԱՆ ԿԱՐԵՒՈՐՈՒԹԻՒՆԸ

ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԳՈՐԾԵԼԱԿԵՐՊԻ ԲԱՐԵՓՈԽՈՒՄԸ ԵՒ ՅԵՏ-ՀԱՐԻՒՐԱՄԵԱԿԻ Հ.Մ.Ը.Մ.Ի ԴԵՐԸ


**Շահէ Ենիզունշեան
ՄԱՆԹԱ ՉԼԱՐԱ**

Շատ անգամ կը խօսինք այն իրողութեան մասին, որ մեր ազգի համահայկական հաւաքական գործին հանդէպ աւելի մեծ հաւատք ունեցող, աւելի մեծ արժէք տուող, գիտակից հասարակութեան մը պէտքը ունինք: Եթէ մենք մեզի հարց տանք, թէ ի՞նչպէս կրնանք հզօրանալ իբրեւ ազգ ու պետութիւն, մեր ազգային իրականութեան հանդէպ աւելի պահանջկոտ մօտեցումի կողքին, պարտինք պատրաստել ապագայի աւելի յանձնառու հայր: Նման նպատակի մը արդիւնքին յաջողութիւնը ունի բազմաթիւ նախադրեալներ, որոնց ամէնէն կարեւորներէն կը հանդիսանան ռազմավարական գործելակերպի նոր ձեւ, ղեկավարութեան սերնդափոխութիւն, պետական կառույցներու եւ կազմակերպութիւններու շարքերու թարմացում: Այս բոլորը կը պահանջեն թէ՛ մտածելակերպի ու աշխատելաձեւի բարեփոխութիւն եւ թէ՛ ապագայ սերունդի որակաւոր դաստիարակութիւն, ի մասնաւորի՝ 6-18 տարեկանին:

Մեզմէ շատերը, որոնք Սփիւռքի մէջ կ'ապրին ու կը պատկանին ոչ-երիտասարդ սերունդին, բախտն ու առիթը ունեցան յաւաքային մշակներու շունչով դաստիարակուելու, օգտուելով անոնց միտքէն եւ ոգիէն: Մեր ծնողքն ու դպրոցը մեր մէջ դարբնեցին հայ յեղուին եւ հայ ինքնութեան արժէքները, իսկ կուսակցութիւն-միութիւն-կազմակերպութիւն եռեակը ներկայացնող ազգային մշակները մեր սերունդին մղում տուին բարձրանալու սեփական եսերէն վեր՝ տեսնելու հաւաքական մեր ուժին առաւելութիւնները: Անոնք ներարկեցին հպարտ հայու գագացումը՝ դիւրացնելով ամէնօրեայ կեանքին հետ մեր համարկումը: Անոնք գարգացուցին եւ ամրապնդեցին յանձնառու հայու կերպարը: Այսօրուան հայ իրականութիւնը տարբեր է սակայն: Մարտահրաւէրները աւելի ճնշիչ են եւ այսօրուան պատանիներն ու երիտասարդները չունին նոյն պատեհութիւնն ու բախտը: Եւ որպէսզի ապագայի գործը աւելի արդիւնաբեր ըլլայ, նորօրեայ մարտահրաւէրները համահայկական ռազմավարութեան տարբեր մարզերու մէջ կը պահանջեն բարեփոխուած գործելակերպ, ներառեալ՝ կազմակերպական եւ դաստիարակչական մարզերու մէջ, ուր ուրիշներու կարգին կը գործէ նաեւ Հ.Մ.Ը.Մ.Ի:



Հայ ազգի հրամայականը, առաջին՝ Հայաստանի եւ երկրորդ՝ Սփիւռքի հզօրացումն է: Մեր ազգային համահայկական նպատակներն են Հայաստանի եւ Արցախի հզօրութիւնը եւ անոնց դիմադրականութիւնը, Հայ Դատի արդարութեան հետապնդումը եւ հայ ազգի աշխարհացրիւ մասնիկներուն, Սփիւռքի ազգային ինքնութեան եւ հայ մշակութիւնը պահպանումը: Այս բոլորին հետապնդման աշխատանքը ունի տարբեր մարզեր․․ քաղաքական, դիւանագիտական, քարոզչական, կրօնական, տնտեսական եւ կազմակերպական, որ իր մէջ կը ներառնէ դաստիարակչականը, թէ՛ թուային եւ թէ՛ որակային ներուժով: Քաղաքական մարզը վստահուած է Հայաստանի պետականութեան, կուսակցութիւններուն եւ Հայ Դատի յանձնախումբերուն: Տնտեսական աշխատանքը բոլորին պարտականութիւնն է, ներառեալ՝ անհատներուն: Կազմակերպականը ունի եկեղեցական-հոգեւոր, ուսումնական-դաստիարակչական, պատանեկան-երիտասարդական, մարմ-



նամարզական, մշակութային, ընկերային օգնություն, բարեփոխական եւ այլ կառույցներու ներդրումը, որոնք կ'ամբողջացնեն զիրար:

Այսօր, ազգային հրամայականի առաջնահերթությունը քաղաքական-հասարակական նոր կացություն մը ստեղծելն է: Պետություն, եկեղեցի, կուսակցություններ, հաստատություններ, կազմակերպություններ, ուղեկից եւ այլ միություններ, նաեւ անհատներ, բոլորն ալ ունին աշխատանքային իրենց կարեւոր ծիրը: Դժբախտ իրականությունը սակայն այն է, որ ներկայիս ուսումնական-դաստիարակչական ծիրը նուազ արժեքորուած է, իսկ արտադպրոցական դաստիարակչական ներուժը տակաւին գնահատուած չէ:

Հասարակական-քաղաքական նոյն հրամայականներու պատճառով, Հ.Մ.Ը.Մ-ի նման մարմնակրթական կազմակերպություն մը ազգային կարեւորությունը երկրորդական կը նկատուի: Սակայն, Հ.Մ.Ը.Մ-ը ինքնանպատակ չէ, իր հրամայականը նոյնն է, ինչ որ է հայ ազգի հրամայականը՝ Հայաստանի եւ Սփիւռքի հզօրացումը: Իր գաղափարաբանությունը նոյնն է, ինչ որ են մեր ազգային, համահայկական նպատակները եւ իր աշխատանքային դաշտը կազմակերպական եւ դաստիարակչական է: Հ.Մ.Ը.Մ-ը գիտակից է կազմակերպական եւ դաստիարակչական իր պարտականություններ, եւ մանաւանդ գիտակից է այդ մարզի անհրաժեշտությունները: Ուսումնական-դաստիարակչական շրջագիծին մէջ, հայկական վարժարանին դաստիարակչությունը անզուգական է, բայց պէտք է շեշտել արտադպրոցական հայեցի որակաւոր դաստիարակչական կարեւորությունը եւս, եւ հաս հոս կու գայ Հ.Մ.Ը.Մ-ի դերը եւ աշխատանքային դաշտը:


Ի՞նչ է ուրեմն ազգային ուղղամարտական ակնոցով դիտուած՝ Հ.Մ.Ը.Մ-ի իսկական նպատակը համահայկական ն-

պատակներու եւ զաղուծային ղեկավարման աշխատանքներուն:

Սկսելու համար խօսինք Հ.Մ.Ը.Մ-ի Հայաստանեան իրականություն մասին: Իբրեւ ազգ, մենք ունինք կարգ մը բանավէճեր, որոնցմէ մէկն է ըՍփիւռք-Հայաստան բանավէճը: Սփիւռքը հզօրացնել թէ Հայաստանը: Այս իմաստով Հ.Մ.Ը.Մ-ը Սփիւռք-Հայաստան բանավէճերէն վեր է: Իբրեւ կազմակերպություն, Հ.Մ.Ը.Մ-ը համահայկական ուղղամարտություն կը կիրարկէ: Հ.Մ.Ը.Մ-ի Հայաստանեան գործունէությունը հայրենիք այցելելով եւ նիւթական ներդրումներ ընելով չէ սահմանափակուած: Հ.Մ.Ը.Մ-ը իբրեւ կառույց աւելի քան 25 տարիէ ներկայ է Հայաստանի կեանքին մէջ, ուր ունի Հայաստանի քաղաքացի երիտասարդ անդամներ: Իր առաքելությունն է դարձնել տիպար քաղաքացին, որ կը հաւատայ երկրի ընկերային արդարություն հաստատման եւ կը նպաստէ երկրի զարգացման: Մինչեւ օրս Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ-ի շարքերուն մէջ թրծուած

են հազարաւոր պատանի-երիտասարդներ, որոնք դարձնուած են սկաուտական եւ Հ.Մ.Ը.Մ-ական կարգախօսերով եւ այս ձեւով՝ Հ.Մ.Ը.Մ-ը Հայաստանի մէջ պատրաստած է ու կը պատրաստէ Հայաստանաբնակ սերունդ մը, որ մաքուր է իր նկարագիրով, ինքնավստահ եւ գործօն քաղաքացի է, կը հաւատայ ընկերային արդարություն եւ իր հետ ուրիշներ բարձրացնելու սկզբունքին: Հ.Մ.Ը.Մ-ի Հայաստանեան գործունէությունը ուրիշներու նման խօսքով չէ, երեւմնի այցելություն մը չէ, այլ իբրեւ քաղաքացի՝ ամէնօրեայ ներկայություն մը եւ շարունականություն մը է: Այս իմաստով, Հ.Մ.Ը.Մ-ը նաեւ վեր է այն բանավէճէն, թէ «Սփիւռքը ժամանակաւոր է», թէ՛ «կարեւորը հայրենասէր ըլլալ չէ, այլ՝ հայրենադարձ եւ հայրենատէր»: Հ.Մ.Ը.Մ-ը արդէն իսկ հայրենադարձ է, հայրենատէր է եւ կը հաւատայ ազգի մէկություններ: Այս կարեւոր իրողությունը, սակայն, մեր ազգային ուղղամարտություններ մէջ չէ գնահատուած եւ չէ օգտագործուած:

Հայաստանեան գործունէություն կողքին, Հ.Մ.Ը.Մ-ը ունի իր պատմական գործունէությունը, սփիւռքեան 99-ամեայ իր վաստակը: Այսօր Հ.Մ.Ը.Մ-ը կը ծառայէ հայություն պատկառելի մէկ զանգուածին, բայց իբրեւ ազգային կառույց, նուազագոյն չափով կ'օգտագործուի ան: Առարկայականօ-





րէն, ան աշխարհասփիւռ հայկական մեծագոյն կազմակերպութիւնն է՝ աւելի քան 26 հազար անդամներով, 25-է աւելի երկիրներու մէջ 108 մասնաճիւղերով, իսկ Արեւմտեան Միացեալ Նահանգներու շրջանին մէջ 6500 անդամներով, որոնցմէ մօտ 5 հազարը 25 տարեկանէն վար են: Այո, Հ.Մ.Ը.Մ-ը յարգանք կը վայելէ, բայց եթէ հարցին նայինք ազգային-ուսումնական հրամայականներու դիտանկիւնէն, անհասկնալի է, որ յաճախ իր արժէքը կը բնութագրուի իբրեւ ազգային հպարտութիւն ներշնչող միջոց: Օրինակ, Լիբանանի մէջ մարզական յաղթանակներու ամէն գնով կերտիչ, իսկ ներքին իմաստով, ազգային-քաղաքական, կրօնական կամ մշակութային ձեռնարկներու սկառսներու եւ Հ.Մ.Ը.Մ-ի շեփորախումբի մասնակցութեամբ եւ մարզական փառատօններու ընծայած ուժի ցուցադրութիւն: Զեռնարկներու մասնակցութիւնը եւ ազգային հպարտութիւն ներշնչող ազգային բոլոր կառույցներու կողմէ թէ՛ ակնկալուած է եւ թէ կը գնահատուի: Լաւ է, բայց երբ Հ.Մ.Ը.Մ-ի ազգային նպաստը ձեռնարկներու մասնակցութեամբ կը սահմանափակուի, արդեօք հաւաքական կառույցի մը ուժին եւ ներուժին արժեւորումը թերագնահատուած չ'ըլլա՞ր:

Ինչպէս ամէն մարզի մէջ, կայ ըՄ-փիւռքի դեկավարման աշխատանքը կատարող ազգային համակարգ մը, որ ունի իր ռազմավարութիւնը: Այդ ռազմավարութեան նպատակակէտը Սփիւռքի հզօրացումն է, որ կը նշանակէ՝ առաջին՝ Սփիւռքը աւելի հայօրէն պահել, այսինքն՝ հայապահպանում կատարել, երկրորդ՝ սերունդներու մէջ քաղաքական գիտակցութիւն արթնցնել: Քաղաքականացնել կը նշանակէ առաւելագոյն թիւով հայ երիտասարդներ յանձնառու դարձնել, զանոնք մեր ազգային կեանքի առօրեային եւ ազգի նպատակներուն կապելով: Հարցը այն է, թէ երիտասարդ

բազմութիւններու մօտ ի՞նչպէս կարելի է զարգացնել քաղաքական գիտակցութիւն, մանաւանդ որակաւոր եւ մեծ համրանքով:

Օր ըստ օրէ վերել յիշուած համակարգին զուգահեռ մէջտեղ կու գան անհատական կառույցներ, ընդհանրապէս աւելի նեղ նպատակներով: Հ.Մ.Ը.Մ-ը բոլորին մէջ ալ արժէք կը տեսնէ, բայց իբրեւ կազմակերպութիւն կը հաւատայ հաւաքական նպատակի եւ յիշուած ազգային ռազմավարութեան մասնակից եւ ուղեկից կառույց է ան: Մենք մեզի հարց տանք, թէ 20 տարեկանը բոլորելէ ետք, քանի՞ հայ երիտասարդի գիտակցութիւնը կարելի է կերտել, եթէ մինչ այդ երիտասարդները հայկական առօրեային, մանաւանդ հայեցի մթնոլորտէն հեռու մեծցած են: Ներկայիս, հայ երիտասարդութեան պատկառելի խաւի մը պարագային, ազգային օրակարգը ամէնօրեայ ուշադրութեան առանցք չէ: Խոստովանինք, որ այսօրուան Եւրոպայի, Ամերիկաներու եւ հետզհետէ նաեւ Միջին Արեւելքի մէջ, իբրեւ ազգ, կաղալով կը բարձրանանք: Տուն-դպրոց-եկեղեցի-ակումբ շրջագիծը որակական նահանջ արձանագրած է: Լատտեղեակ աղբիւրներու համաձայն, Միջին Արեւելքէն դուրս, ամբողջ Սփիւռքի հայկական վարժարաններու աշակերտութեան թիւը 10 հազարը չ'անցնիր: Գալիֆօրնիոյ մէջ կան մօտ 5 հազար աշակերտներ, որոնք հայկական դպրոց կը յաճախեն եւ աւելի քան 50 հազար ուրիշներ, որոնք ոչ-հայկական վարժարաններ կը յաճախեն: Եւ ահա հո՞ս կը յայտնաբերուի մեր ազգային մէկ այլ բանավէճը, թէ միայն հայոց լեզուի ուսուցումով կը կազմաւորուի հայ մարդուն ազգային դիմագիծը թէ՛ ոչ:

Հ.Մ.Ը.Մ-ը, իբրեւ պատասխանատու համահայկական կազմակերպութիւն, չի կրնար կրաւորական մնալ այս բանա-





վէճին մէջ, երբ իր ներուժը տրամադրած է ազգային հաւաքական աշխատանքին: Աւելի քան որեւէ այլ կազմակերպութիւն, Հ.Մ.Ը.Մ-ը արտադպրոցական հայեցի դաստիարակութեան իտէյալ միջավայր է: Իր կառույցին քաջողականութեամբ, Հ.Մ.Ը.Մ-ի կ'անդամակցին թէ՛ հայկական վարժարան յաճախող եւ թէ՛ ոչ-հայկական վարժարան յաճախող պատանիներ: Ներկայիս իր անդամներուն համեմատական տոկոսը, անոնք որոնք 18 տարեկանէն փոքր են եւ հայկական դպրոց չեն յաճախեր, 50-60 առ հարիւր է, այսինքն՝ մօտ 8 հազար պատանի-երիտասարդներ միայն Հ.Մ.Ը.Մ-ի երգիքին տակ կը ստանան հայկական ազգային սնունդ, նոյնիսկ եթէ անկատար: Արդեօք ո՞ր կազմակերպութիւնը կընայ մօտենալ այս թիւերուն: Հ.Մ.Ը.Մ-ի այս դերակատարութիւնը թերեւս ակնյայտ չէ, բայց իրողութիւն է, եւ կարեւոր իրողութիւն:

Ուրեմն ի՞նչ է Հ.Մ.Ը.Մ-ի ներդրումը: Արեւմտեան Սփիւռքի մէջ Հ.Մ.Ը.Մ-ը կը փորձէ հաւասարակշռութիւն պահել բնակավայր երկրի պարտադրած իրականութիւններուն եւ հայեցի դաստիարակութեան հրամայականին միջեւ, փորձելով մէջտեղ բերել 21-րդ դարու սփիւռքի եւ երկրի քաղաքացիի նախատիպ մը, որ հպարտ է իր ապրած երկիրով, բայց աւելի հպարտ եւ մանաւանդ յանձնառու է իր հայկական պատկանելիութեամբ: Այս երկակենցաղ դրութեան հետապնդումը եւ կրաւորական ընթացքէն դէպի կամովին յանձնառու՝ հայր առաջնորդելու ճիգը Հ.Մ.Ը.Մ-ի համար գիտակից ռազմավարութիւն է: Կ'արժէ կրկնել. Սփիւռքի ամէնօրեայ կեանքի իրականութեան մէջ Հ.Մ.Ը.Մ-ը ոչ միայն հայեցի շունչի, ոգիի եւ մշակոյթի առիթ կ'ընծայէ, այլեւ կը փորձէ պատրաստել

6-18 տարեկան հայու տիպար մը, որուն կապը հայութեան հետ հիմնուած է գիտակցութեան եւ կամաւոր յանձնառութեան վրայ: Այս ձեւով Հ.Մ.Ը.Մ-ը ենթահողը կը պատրաստէ 20 տարեկանէն վեր ապագայի Հ.Մ.Ը.Մ-աւարտ ոչ կրաւորական երիտասարդներու պատրաստութեան եւ, ինչու չէ, քաղաքական գիտակցութեամբ օժտուած դաստիարակութեան:

Ահա այս կէտն է, որ քաղաքական, կրօնական եւ տնտեսական մարզերու կողքին, մեր ազգային ռազմավարութեան կազմակերպական, դաստիարակական ծիրէն ներս պէտք է աւելիով նկատի ունենալ եւ զարգացնել: Իրականութիւնը այն է, թէ մեր անցեալի եւ ներկայի ազգային կառույցներու շրջագիծը եւ ռազմավարական գործընթացը, ուր առանձնաբար կը գործէին դպրոցը, Համազգայինը, ՀՕՄ-ը, Հ.Մ.Ը.Մ-ը, երիտասարդական միութիւնները, Հայ Դատը եւ ուրիշներ, այլեւս անցեալի իր յաջող արդիւնքը չի տար, ոչ ալ կընայ կատարեալ արդիւնք տալ: Շատ մը կառույցներու քանակական թիւը պակասած է, իսկ բոլորին որակը եւ մարդուժը բաւական նուազած է: Դաստիարակչական շրջագիծին մէջ, հայկական վարժարանին դաստիարակութիւնը անզուգական է, բայց որովհետեւ աշակերտութեան թիւը կը նուազի, արտադպրոցական հայեցի որակաւոր դաստիարակութեան կարեւորութիւնը եւ հայ մշակոյթի պաշտպանութիւնը աւելիով պահանջ է: Հոս կու գայ Հ.Մ.Ը.Մ-ը դերը եւ աշխատանքային նոր հնարաւորութիւններու ներկայիս թաքուն դաշտը, որ աւելի ընդարձակ պէտք է ըլլայ՝ քան ինչ որ է այսօր:

Կայ ռազմավարական իմաստով չօգտագործուած հսկայական առիթ, որ անհրաժեշտ է քննել եւ անոր համեմատ ներուժ տրամադրել: Հ.Մ.Ը.Մ-ը արտադպրոցական դաստիարակութեան օժանդակող միակ կազմակերպութիւնը չէ, կան նաեւ ուրիշներ: Բայց քանի Հ.Մ.Ը.Մ-ը քանակային պատրաստ ուժ մը ունի, ան աւելի խոստմանալից ռազմավարական կարողականութիւն ունի: Թերեւս աւելի ճկուն, ի հարկին նոր ուղիներ որոնելով, նմանօրինակ առաքելութեան կոչւած այլ կառույցներու հետ միասնաբար Հ.Մ.Ը.Մ-ի դերը եւ աշխատանքային դաշտը պէտք է աւելի ընդարձակել եւ Հ.Մ.Ը.Մ-ի կառույցը օգտագործել նպատակներու համար, որոնք անցեալին Հ.Մ.Ը.Մ-ի ծիրին մէջ նկատի առնուած չէին: Պէտք է մոռնալ կառուցային մեր ներկայ սահմանափակումները եւ



գաղութ առ գաղութ ուսումնասիրել հաւաքական ուժերով՝ եկեղեցի-Հ.Մ.Ը.Մ., Հ.Մ.Ը.Մ.-ՀՕՄ-Համազգային եւ այլ կառույցներու մասնակի մէկտեղումով եւ գործակցութեամբ ստեղծուող ճկուն տարբերակ մը, ուր մարմնամարզն ու սկաուտութիւնը միջոց կը ծառայեն 6-18 տարեկան պատանիներու աւելի ընդարձակ արտադպրոցական դաստիարակութեան մը, ուր շեշտը կը դրուի դաստիարակութեան որակին վրայ եւ աւելի մշակուած կերպով ազգային դիմագիծ կը կերտուի: Ռազմավարութեան նպատակը կ'ըլլայ մէջտեղ բերել 21-րդ դարու սփիւռքցիի եւ երկրի քաղաքացիի որակաւոր նախատիպ մը, որ հպարտ է իր ապրած երկիրով, բայց աւելի հպարտ եւ մանաւանդ յանձնառու է իր հայկական պատկանելիութեամբ: Հ.Մ.Ը.Մ.ի երդիքին տակ յղկուած 6-18 պատանիները կրաւորական ընթացքէն կամովին յանձնառու հայ դարձնելու առաքելութիւնը կը շարունակուի եւ այս ձեւով Հ.Մ.Ը.Մ.ը ենթահողը կը պատրաստէ 20 տարեկանէն վեր ապագայի Հ.Մ.Ը.Մ.աւարտ ոչ կրաւորական երիտասարդներու պատրաստութեան եւ, ինչու չէ, քաղաքական գիտակցութեամբ օժտուած դաստիարակութեան:

Պատանիներն ու երիտասարդները մեր ազգային հարցերուն աւելիով մասնակից դարձնելու եւ գիտակից սերունդ մը պատրաստելու համար պէտք ունինք ներկայ իրականութիւնները տարբեր ձեւով դիտելու անհրաժեշտութեան (Paradigm shift): Հ.Մ.Ը.Մ. ունի աւանդ, վաստակ եւ խիտ շարքերու ուժ:

Ինչպէս մեր ազգային մնացեալ կառույցները ան եւս սերնդափոխութեան սեմին է: Բարեփոխուելու եւ նոր նուաճումներ կատարելու համար պէտք չունինք փոխելու համահայկական մեր ռազմավարութիւնը: Պէտք չունինք փոխելու կազմակերպութիւններու նպատակներն ու կանոնադրութիւնները: Միակ փոփոխութիւնը գործընթացի մէջն է, ռազմավարական ուղեգիծը եւ այսօրուան որդեգրուած աշխատեցածները որոշ վերաքննութեան ենթարկելն է, ի նպաստ աւելի ճկուն գործունէութեան: Շուտով Հ.Մ.Ը.Մ.ը կը թեւակոխէ իր երկրորդ հարիւրամեակը եւ եթէ պատանեկան տարիքի արտադպրոցական հայեցի որակաւոր դաստիարակութիւնը եւ հայ մշակույթի պաշտպանութիւնը մեր ազգային ռազմավարութեան մէջ աւելիով արժեւորուի, Հ.Մ.Ը.Մ.ի աշխատանքային դաշտը, որ կ'ընդգրկէ 6-18 տարեկան պատանիները, բնականաբար պէտք է ընդլայնի: Այս աւելի լայն գործունէութեան կարիքներուն հասնելու եւ նպատակի արդիւնաբերութեան համար, գաղութի համակարգին եւ ղեկավարութեան կողմէ Հ.Մ.Ը.Մ.ի հանդէպ նոր մարտավարութիւն ու վճռականութիւն պէտք է ցուցաբերուի եւ յաւելեալ մարդուժ տրամադրուի:

Յաջորդիւ պէտք է խօսիլ ծրագրի հետապնդման եւ միջոցառումներու մասին, յստակացնելով անոր իրականացման միջոցները եւ գործադրութեան մանրամասնութիւնները:

with the complements of

Restaurant Al-Mayass

Հ.Մ.Ը.Մ.Ի ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ՆԱԽԱԶԵՌՆՈՒԹԵԱՄԲ ԵՒ ՎԻԵՆՆԱՅԻ ՄԱՄՆԱՃԻՒՂԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԵԱՄԲ՝

Հ.Մ.Ը.Մ.Ի ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ԱՌԱՋԻՆ ՀԱՒԱՔԸ ԼԱՒԱԳՈՅՆ ԱՌԻԹԸ ՀԱՆԴԻՍԱՑԱԻ ԵՒՐՈՊԱՅԻ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹԵԱՆ ՆԵՐՈՒԺԻ ՀԱՄԱԽՄԲՄԱՆ

Թղթակից
ՎԻԵՆՆԱ

17 -19 Փետրուար 2017-ին, Վիեննայի մէջ տեղի ունեցաւ Հ.Մ.Ը.Մ.Ի Եւրոպայի երիտասարդական առաջին հաւաքը, հովանաւորութեամբ Հ.Մ.Ը.Մ.Ի Կեդրոնական Վարչութեան եւ կազմակերպութեամբ Հ.Մ.Ը.Մ.Ի Վիեննայի մասնաճիւղին: Հաւաքին իրենց մասնակցութիւնը բերին Անգլիայէն, Ֆրանսայէն, Հոլանտայէն, Գերմանիայէն, Աւստրիայէն, Շուէտիէն, Պելճիքայէն, Յունաստանէն, Երոսաղէմէն եւ Հայաստանէն ժամանած 60 Հ.Մ.Ը.Մ.ակա՛ն երիտասարդներ: Կազմակերպիչ մասնաճիւղի վարչութեան կողքին, հաւաքին ներկայ գտնուեցան Հ.Մ.Ը.Մ.Ի Կեդրոնական Վարչութեան ատենապետ եղբ. Գառնիկ Մկրտիչեան եւ Կեդրոնական Վարչութեան անդամ եղբ. Ալէք Խաչատրեան:

ՆՊԱՏԱԿԸ

Հաւաքի կազմակերպման գաղափարը կը ծնէր միութեան 2015-ին վերամրշակուած ընդհանուր ծրագիր-կանոնագիրէն եւ ռազմավարական ծրագրաւորումի առաջադրանքներէն, որոնք կը բեւորութեամբ կ'անդրադառնան երիտասարդութեան դերակատարութեան եւ Հ.Մ.Ը.Մ.Ի դիմաց կը բանան երիտասարդութիւնը համախմբելու եւ կազմակերպելու նոր հորիզոններ: Հաւաքը կը նպատակադրէր նաեւ, առաջին անգամ ըլլալով, մօտէն ծանօթանալ Եւրոպայի հայ երիտասարդութեան եւ զայն յուզող ազգային, միութենական, ընկերային մերօրեայ հարցերուն ու մտահոգութիւններուն: Արդարեւ, վերջին հնգամեակին, Եւրոպայի հայկական գաղութները կ'ապրին զգալի աշխուժութիւն մը Իրաքէն եւ Սուրիայէն ժամանած մեծաթիւ հայութեան շնորհիւ: Օրէ օր կը յառաջա-

նան նոր գաղութներ, կը հիմնուին Հ.Մ.Ը.Մ.Ի նոր մասնաճիւղեր, որոնք կը ջանան ազգային միջավայր ու միջնորոտ ստեղծել նորակազմ գաղութներու մէջ, ուր ձուլումի վտանգները մեծ են: Հաւաքին նպատակներէն էր նաեւ զարկ տալ Հ.Մ.Ը.Մ.Ի Եւրոպայի կազմակերպական ցանցին եւ միութեան մարմիններուն ու յանձնախումբերուն մէջ ներգրաւել երիտասարդ նոր տարրեր, առ ի պատրաստութիւն Հ.Մ.Ը.Մ.Ի 100-ամեակի ծրագիրներու իրականացման:

ԲԱՑՈՒՄԸ

Հաւաքը եռօրեայ իր աշխատանքներուն սկսաւ բացման պաշտօնական հանդիսութեամբ մը, որ տեղի ունեցաւ 17 Փետրուարի երեկոյեան: Բացման ողջոյնի խօսք փոխանցեց Հ.Մ.Ը.Մ.Ի Կեդրոնական Վարչութեան ատենապետ եղբ. Գառնիկ Մկրտիչեան: Եղբ. Մկրտիչեան իր խօսքին մէջ





զնահատեց նման հաւաքի մը կազմակերպման գաղափարը եւ նշեց, որ համաերոպական այս հաւաքը ուշադրութեան արժանի երեւոյթ է, որովհետեւ այսօր Եւրոպայի մէջ հասակ կ'առնէ երիտասարդ նոր սերունդ մը, որ ծարաւը ունի Հ.Մ.Ը.Մ-ին, կարիքը ունի տարին մէկ-երկու անգամ քով-քովի գալու, միասնաբար ընկերային հաճելի պահեր անցընելու եւ հայկականութեամբ լեցւելու: «Հ.Մ.Ը.Մ-ի բացակայութեան, մինչեւ օրս ուրիշներ կը փորձէին կատարել այդ մէկը՝ մնալով սակայն քաղաքի մը, շրջանակի մը, ընկերային միջնորդութի մը սահմաններուն մէջ: Այսօր, Հ.Մ.Ը.Մ-ի նախաձեռնութեամբ այս աշխատանքը կը դրուի աւելի պիտի, աւելի կազմակերպ եւ աւելի լուրջ հիմերու վրայ, նպատակ ունենալով ընկերայինէն ու մարզականէն անդին՝ ազգայինը: Ով որ լսած է, կամ գիտէ, Հ.Մ.Ը.Մ-ի ղերակատարութիւնն ալ այդ է արդէն. հաւաքել, համախմբել մեր ցիր ու ցան երիտասարդութիւնը եւ կարելի բոլոր միջոցներով անոր ջամբել հայութեան պատկանելիութեան զգացում, հայկականութեան դիմագիծ եւ ինքնութիւն», ըսաւ եղբ. Մկրտիչեան:

Ապա, հաւաքին կարեւորութեան մասին արտայայտուելով, Կեղրոնական Վարչութեան ատենապետը յայտնեց, որ կը դիմապրակենք տեսակ-տեսակ դըժ-

ւարութիւններ, որոնց դէմ դնելու մեր մեծագոյն զէնքը մեր ուժն է: Այդ ուժը նիւթականը չէ: Նիւթականը կարելոր է, բայց անբաւարար է: Այդ ուժը մեր ունեցած միջոցները չեն, որոնք այդքան ալ շատ չեն: Այդ ուժը, մեր մարդուժն է, որ իր գաղափարներով, իր նորութիւններով ու իր աշխատանքով մեր կեանքը յառաջ պիտի տանի եւ օրէ օր աւելի պիտի զօրացնէ մեզ:

Շարունակելով, եղբ. Մկրտիչեան հաստատեց. «Թող այս հաւաքը մեկնակէտը ըլլայ Եւրոպայի հայութեան ուժի ստեղծման առաջին քայլին: Գալիք օրերուն պիտի յաջորդեն նոր քայլեր, աւելի մեծ եւ աւելի ինքնավստահ քայլեր, որոնք Եւրոպայի մեր տղաքը պիտի հա-

մախմբեն համաերոպական Հ.Մ.Ը.Մ-ական մարզախաղերու եւ բանակումներու շուրջ, երիտասարդական նման հաւաքներու շուրջ եւ նոր եռանդ ու խանդավառութիւն պիտի տան մեր կեանքին:

«Հաւատացէ՛ք, դուք շատ բան կրնանք ընել մեր ժողովուրդին եւ հայրենիքին համար: Անհրաժեշտ է միայն կազմակերպուիլ, աւելի շատ քով-քովի ըլլալ եւ մեր ապրած քաղաքներուն եւ երկիրներուն մէջ Հ.Մ.Ը.Մ-ական խանդավառութիւն եւ ջերմութիւն տարածել», շեշտեց ան (խօսքին ամբողջութիւնը տեսնել էջ 9-10):

Իր խօսքին աւարտին, եղբ. Մկրտիչեան ներկայացուց անակնկալ մը, երբ





Հ.Մ.Ը.Մ-ի «Ծառայութեան» շքանշանով պարգևատրեց Վիեննայի մասնաճիւղի բազմամասնակ եղբայրներ Սամուէլ Նահապետեանը եւ Գրիգոր Հալլաճեանը:

Հանդիսութեան պաշտօնական բաժինին յաջորդեց ընթրիք-խրատականք:

րաւած մարտահրաւէրներուն մէջ. հայեցի դիմագիծ, առաջնահերթութիւններ, միութենական կեանք» նիւթը: Զեկուցաբերներն էին քոյր Սեւան Նազարեան Յրանսայէն եւ եղբ. Վրդէն Գապաբեան Պեյճիքայէն:

Զեկուցաբերները մանրամասնօրէն

ներկայացուցին Հ.Մ.Ը.Մ-ի դերը հայ երիտասարդութեան դիմագրաւած մարտահրաւէրներու յաղթահարման մէջ: Անոնք օրինակներ նշեցին Եւրոպայի մէջ մեծցող սերունդներու դաստիարակութեան մէջ Հ.Մ.Ը.Մ-ի ունեցած եւ ունենալիք դերակատարութեան մասին, վերլուծեցին Եւրոպայի հայ երիտասարդութեան դիմագրաւած տագնապները, անդրադարձան անոնց դիմագրաւած դժուարութիւններուն, յատկապէս կանգ առնելով յեզուական հարցի դժուարութեան վրայ: Արդարեւ, այսօր մեծ թիւ կը ներկայացնեն հայերէնին չտիրապետող երիտասարդները, նաեւ՝ անոնք որոնք Միջին Արեւելեան գաղութներէն Եւրոպա նոր հաստատուած ըլլալով, տեղաբնակներու անծանօթ կամ յաճախ իրարմէ տարբեր հայերէն մը կը խօսին (Պոլսոյ հայերէն, Իրաքի հայերէն, Սուրիոյ հայերէն...):

Զրոյցին մասնակիցները հաստատե-

ԸՆԹԱՅԲԸ

Երիտասարդական հաւաքը 18 Փետրուարին ունեցաւ աշխատանքային չորս նիստեր: Իւրաքանչիւր նիստին յատուկ գեկուցաբերներ ներկայացուցին նիւթ մը, որուն յաջորդեց գրոյց-քննարկում:

Նիստերը երկարեցան ամբողջ օրուան վրայ: Երեկոյեան, անոնք եզրափակուեցան ընթրիքով:

«Հ.Մ.Ը.Մ-ի ԴԵՐԸ...»

Առաջին նիստին, հաւաքին մասնակիցները քննարկեցին «Հ.Մ.Ը.Մ-ի դերը Եւրոպայի երիտասարդութեան դիմագ-





ցին, որ Հ.Մ.Լ.Մ-ը ջերմ օժախ մըն է իրենց համար, ուր իրենք կը գտնեն հայեցի առողջ մթնոլորտ, հարազատութիւն եւ ազգային արժէքներու ծանօթանալու կարելիութիւն: Անոնք առաջարկեցին, որ Հ.Մ.Լ.Մ-ը ճիշդ շինայէ Եւրոպայի տարածքին ապրող բազմաշերտ ու բազմաճաշակ երիտասարդութեան կարիքները բաւարարելու, ո՛չ սկստաւ, ո՛չ մարզիկ երիտասարդներու ընկերային միջավայր ապահովելու եւ գանոնք ներգրաւող ծրագիրներ մշակելու համար:

Փափաք յայտնուեցաւ, որ Եւրոպայի տարածքին գործող Հ.Մ.Լ.Մ-ի մասնաճիւղերը իրենց տեղական պայմաններուն համաձայն ընկերային ձեռնարկներ եւ միջ-մասնաճիւղային հաւաքներ կազմակերպեն, հայերէնի գործնական ու դիւրին դասընթացներ հաստատեն եւ իրենց գործունէութեան մէջ որպէսզ րեն այնպիսի մօտեցումներ, որոնք



21-րդ դարու պահանջներուն համապատասխան ըլլան:

«Հ.Մ.Լ.Մ-Ը ԻՐԲԵՒ ԿԱՄՈՒՐՋ...»
 Երկրորդ նիստին քննարկման նիւթն էր՝ «Հ.Մ.Լ.Մ-ը իբրեւ կամուրջ Եւրոպայի երիտասարդութեան եւ Հայաստան-Արցախի միջեւ»: Զեկուցաբերն էր քոյր Հռիփսիմէ Յարութիւնեան Յունաստանէն:

Այս նիստին իստուեցաւ, թէ Եւրոպայի մեր երիտասարդութիւնը համա-Հ.Մ.Լ.Մ-ական բանակումներէ եւ բանակումներէ անդին՝ ի՞նչպէս կրնայ շրջման մէջ ըլլալ Հայաստանի եւ Արցախի հայութեան հետ: Կարծիքներ յայտնուեցան Երեւանէն դուրս, տարբեր մարզերու եւ սահմանային շրջաններու մէջ ընկերային բնոյթի ծրագիրներ իրականացնելու, երիտասարդական շրջապատային կազմակերպելու, հայոց բանակին զօրակցելու, հայ կնոջ եւ երիտասարդին դերակատարութիւնը ամրապնդող նախաձեռնութիւններու դիմելու եւ, ամէնէն կարեւորը, Հայաստան ապրող երիտասարդներու հետ մնայուն կապեր հաստատելու, հայրենաճանաչութեան մակարդակը բարձրացնելու, Հայաստանն ու Արցախը իր-





րեւ գործընկերներ եւ ոչ թէ նպաստընկալներ նկատի ունենալու համար:

«ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹԵԱՆ ԴԵՐԸ...»

Երրորդ նիստով քննարկուեցաւ «Եւրոպայի երիտասարդութեան դերը Հ.Մ.Ը.Մ.ի մէջ, 21-րդ դարու պայմաններուն տակ» նիւթը: Զեկուցումներ ներկայացուցին քոյր Անէթ Մոսկոֆեան Անգլիայէն եւ եղբ. Գէորգ Յակոբեան Աւստրիայէն:

Նիւթը ընդգրկեց Եւրոպայի երիտասարդութեան իրավիճակը ընդհանրապէս, իր դրական եւ բացասական կողմերով: Նշուեցաւ, թէ երիտասարդութիւնը օրէ օր կը հեռանայ ազգային հաւաքական կեանքէ, սակայն երբ շօշափելի գործ եւ արդիական մօտեցումով նորութիւն մը ներկայացուի անոր, ան կ'ընդառաջէ: Մասնակիցները շեշտեցին, որ մեր ընկերութիւններն ու միութիւնները պէտք է վստահին երիտասար-

դութեան եւ երբեք չթերազնահատեն անոնց կարողութիւնները: Երիտասարդութիւնը ընկիւք ունի իր գործով, գիտութեամբ, գիտակցութեամբ եւ ձեռքբերումներով իր շրջապատին վստահութիւնը շահելու համար: Այս իմաստով առաջարկուեցան երիտասարդութեան ճամբով միութիւնը աւելի արդիական ձեւով ղեկավարելու մեթոտներ: Ներկայացուեցան նաեւ միութեան մէջ երիտասարդութեան ներուժը, մասնագիտութիւնները եւ ժամանակակից փորձառութիւնները համակարգուած ձեւով օգտագործելու եղանակներ:

Մասնակիցները շեշտեցին Հ.Մ.Ը.Մ.ի մէջ երիտասարդութեան աւելի տեղ ու առիթ տալու անհրաժեշտութիւնը, երիտասարդութեան պատասխանատու գործեր վստահելու եւ հակազդողէ աւելի զայն նախաձեռնող ազգակի վերածելու հրամայականը: Այս ուղղութեամբ օրինակներ տրուեցան, թէ տար-

բեր մասնաճիւղերու մէջ երիտասարդներ ինչպիսի՞ քայլերով կրնան նպաստել Հ.Մ.Ը.Մ.ի եւ համայն հայութեան վերելքին եւ յառաջդիմութեան:

«Հ.Մ.Ը.Մ.Ը ԵՒ ԱՐԴԻ ԱՐՀԵՍՏԱԳԻՏՈՒԹԻՒՆ»

Չորրորդ նիստը արձարծեց «Հ.Մ.Ը.Մ.ը եւ Communication strategies and Social Media» նիւթը: Զեկուցաբերներն էին եղբայրներ Յարութ Պաղամեան եւ Գօգօ Սահակեան Երուսաղէմէն:

Բոլորին սրտին խօսող այս նիւթը գիտականօրէն ներկայացուց, թէ ի՞նչպէս կարելի է արդի հաղորդակցութեան միջոցներն ու ընկերային ցանցերը օգտագործել Հ.Մ.Ը.Մ.ի յառաջդիմութեան եւ քարոզչութեան համար, հանրային կարծիք ստեղծելու եւ զանազան գաղութներու մէջ ապրող եւ մէկ ընտանիքի պատկանող միութեան անդամներ-





ըր իրարու աւելի կապելու համար: Առարկայականօրէն մատնանշուեցաւ, որ Հ.Մ.Ը.Մ-ը տակաւին շատ ընելիքներ ունի այս մարզին մէջ, հետեւաբար պէտք է դիմել աւելի լուրջ քայլերու:

Նոյն նիստին խօսուեցաւ նաեւ արդի հաղորդակցութեան միջոցներու սխալ ձեւով օգտագործման լուրջ հետեւանքներուն մասին: Զգուշացում կատարուեցաւ, որ միութենական պատշաճութիւնները եւ ժողովական կարգերը պէտք է յարգել եւ այնտեղ քննարկուելիք նիւթերը ընկերային ցանցերով հանրութեան սեփականութիւնը չդարձնել:

Հ.Մ.Ը.Մ-ի 100-ԱՄԵԱԿԻ ՊԱՏՐԱՍՏՈՒԹԻՒՆՆԵՐ

Հաւաքին եզրափակիչ նիստը յատկացուեցաւ Հ.Մ.Ը.Մ-ի 100-ամեակի ծրարագիրներուն ներկայացման: Տեղեկութիւններ փոխանցուեցան այն բոլոր ձեռնարկներուն մասին, որոնք կեդրո-

նական Վարչութեան նախաձեռնութեամբ պիտի իրականացուին Հայաստանի եւ Սփիւռքի մէջ: Խօսուեցաւ նաեւ Եւրոպայի մասնաճիւղերուն ունենալիք դերակատարութեան՝ այդ աշխատանքներու յաջողութեան եւ երիտասարդ շրջանակներու մասնակցութեան ապահովման մէջ:

ԱՅՅԵԼՈՒԹԻՒՆՆԵՐ

Երիտասարդական հաւաքին վերջին օրը, 19 Փետրուարին, մասնակիցները այցելեցին ազգային, պատմական եւ մշակութային մեծարժէք կարեւորութիւն ներկայացնող Մխիթարեան Միաբանութեան Վիեննայի կեդրոնատեղին, թանգարանը, գրադարանն ու արխիւատունը, ուր մեծ հետաքրքրութեամբ ծանօթացան կեդրոնի գանձերուն: Անոնք այցելեցին նաեւ հայ ազգի մեծ բարեկամ, «Մուսա լեւոն քառասուն օրերը» գործի հեղինակ՝ Յրանց Վերֆե-

լի յուշարձանը եւ երախտագիտութեան ծաղիկներ զետեղեցին անոր առջև:

ՏՊԱՒՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Հաւաքի մասնակիցներուն ջերմութիւնը, գոհունակութիւնն ու դրական տպաւորութիւնները կարելի է թղթակցութեան մը սեղմ տողերուն մէջ պարփակել: Իր տեսակին մէջ առաջինը նկատուող այս հաւաքը եկաւ հաստատելու, որ նման հաւաքներու ծարաւը ունի Եւրոպայի երիտասարդութիւնը: Հետեւաբար, այս եւ նմանօրինակ հաւաքները անյետաձգելի անհրաժեշտութիւն են Եւրոպայի հայ երիտասարդութիւնը համախմբելու, դաստիարակելու, նպատակաւորուած աշխատանք տանելու, համագործակցութեան առիթներ ստեղծելու, դժուարութիւններ յաղթահարելու եւ միութեան նպատակները իրականացնելու համար:



Հ.Մ.Ը.Մ.Ի ԵՒՐՈՊԱՅԻ ՄԱՍՆԱԾԻՒՂԵՐՈՒ ԱՏԵՆԱՊԵՏՆԵՐՈՒ ԵՐԿՐՈՐԴ ԺՈՂՈՎԸ



29 Ապրիլ 2017-ին, Հոլանտայի Ալմեր քաղաքին մէջ տեղի ունեցաւ Հ.Մ.Ը.Մ.Ի Եւրոպայի մասնաճիւղերու ատենապետներու երկրորդ ժողովը, կազմակերպութեամբ Հ.Մ.Ը.Մ.Ի Կեդրոնական Վարչութեան, հիւրընկալութեամբ Ալմերոյ մասնաճիւղի վարչութեան:

Ժողովին ներկայ գտնուեցան Հ.Մ.Ը.Մ.Ի Կեդրոնական Վարչութեան ատե-

նապետ եղբ. Գառնիկ Մկրտիչեան, անդամներ՝ եղբայրներ Վաչէ Նաճարեան, Անդրանիկ Պահարեան եւ Ալէք Խաչատրեան: Մասնաճիւղերէն ներկայ էին Ալմերոյ, Առնհեմի, Ալքմարի (Հոլանտա), Սթոքհոլմի, Սոսերթելիոյ (Շուէտ), Երուսաղէմի, Վիեննայի, Միւնիխի, Լոնտոնի, Մարսէյի, Փարիզի եւ Վարշայի վարչութիւններէն 17 ներկայացուցիչներ: Հիւրաբար ներկայ էր նա-

եւ Նանսիի գաղութէն (Ֆրանսա) ներկայացուցիչ մը:

ԲԱՑՈՒՄԸ

Ժողովին բացումը կատարեց եւ ներկաները ողջունեց Հ.Մ.Ը.Մ.Ի Կեդրոնական Վարչութեան ատենապետ եղբ. Գառնիկ Մկրտիչեան: Ան գնահատեց ժողովին հիւրընկալ շրջանը՝ Հ.Մ.Ը.Մ. Ալմերոյն, որ վերջին շրջանին կ'ապրի զգալի աշխուժութիւն: Այսօր, Եւրոպայի հայկական գաղութները կը բազմանան ու կը զարգանան, - ըսաւ եղբ. Մկրտիչեան, - շնորհիւ Միջին Արեւելքէն գաղթող հայորդիներով, որոնք Հ.Մ.Ը.Մ.Ի շուրջ համախմբուելով կը փորձեն պահպանել իրենց ազգային ինքնութիւնն ու գիմագիծը:

Բացման խօսքին յաջորդեց Հ.Մ.Ը.Մ.Ի Կեդրոնական Վարչութեան գեկոյցը՝ Եւրոպայի մասնաճիւղերու առաջին ժողովէն (19 Մարտ 2016) մինչեւ օրս կատարուած աշխատանքներու մասին: Եղբ. Մկրտիչեան ընդհանուր գիծերով ներկայացուց միութեան 100-ամեակի տօնակատարութիւններուն նախապատրաստական աշխատանքները: Ան



խօսեցաւ Հ.Մ.Ը.Մ-ի Վիեննայի մասնաճիւղին եւրոպական երիտասարդական հաւաքին (17-19 Փետրուար 2017: Այս մասին կարդալ ճախարդ էջերով), ամբողջ տեղի ունենալիք համա-Հ.Մ.Ը.Մ-ական մարզախաղերուն եւ Եւրոպայի տարածքին նոր մասնաճիւղերու ստեղծման աշխատանքներուն մասին (Նանսի, Լիոն, Քէօլն եւ այլն):

Խօսք առաւ նաեւ Կեդրոնական Վարչութեան ղանձապահ եղբ. Վաչէ Նաճարեան եւ ներկայացուց Կեդրոնական Վարչութեան նիւթական իրավիճակը: Ան նշեց, որ միութիւնը ղէմ յանդիման կը գտնուի համա-Հ.Մ.Ը.Մ-ական երեք մեծ նախաձեռնութիւններու (համա-Հ.Մ.Ը.Մ-ական մարզախաղեր, 100-ամեակի տօնակատարութիւններ, համա-Հ.Մ.Ը.Մ-ական բանակում), որոնք կ'ենթադրեն հսկայական ծախսեր: Իր գեկոյցին մէջ, եղբ. Նաճարեան բաւական երկար անդադարձաւ մասնաճիւղերու ցնեղերու պատկերին եւ շեշտեց Կեդրոնական Վարչութեան հանդէպ նիւթական պարտաւորութիւնները անյապաղ կատարելու անհրաժեշտութիւնը:

**ԱՏՏԵԱՊԵՏՆԵՐՈՒ
ՉԵԿՈՒՑՈՒՄՆԵՐԸ**

Կեդրոնական Վարչութեան նիւթաբարոյական գեկուցումէն ետք, հանդէս եկան Եւրոպայի մասնաճիւղերու ներկայացուցիչները եւ գեկուցեցին իրենց շրջաններու ընդհանուր իրավիճակին եւ



ղիմազրաւած ղժուարութիւններուն մասին: Զեկուցումներէն պարզուեցան հետեւեալները.-

ԱԼՄԵԼՕ

Շրջանը կը ղիմազրաւէ սկստաւորական ղեկավար տարրերու պակաս: Շարքերը մեծ մասամբ բաղկացած են խանդավառ նորեկներէ, կարիքը կը զգացւի փորձառու պատասխանատուներու: Մասնաճիւղը բաւարար մարզական խումբեր չունի:

ԱՌՆՀԵՄ

Մասնաճիւղը կարիքը ունի պատանի սկստաւորներու: Գործող սկստաւորները 25 տարեկանէն վեր են: Երիտասարդութիւնը ընդհանրապէս հեռու կը մնայ միութեանական աշխատանքներէ: Կայ

մտայնութեան եւ մօտեցումի հարց:

ԱԼՔՄԱՐ

Մարդուժի պակասի պատճառով, նորաստեղծ այս մասնաճիւղին սկստական եւ մարզական աշխատանքները ակնկալուած թափը չունին: Նորեկները կը ղժուարանան Եւրոպայի պայմաններուն ընտելանալու:

ՍԹՈՔՉՈԼՄ

Մասնաճիւղը ունի տեղի հարց: Գործող կեդրոնը նեղ կու դայ անդամներուն: Կայ նաեւ հայերէն գրողներու տագնապ, ինչ որ կը ղժուարացնէ մասնաճիւղին քարտուղարական-վարչական աշխատանքները:

Մասնաճիւղին ֆութպոլի խումբը ղաղղած է գոյութիւն ունենալէ՝ փորձի





դաշտ եւ մարզիչ չունենալու պատճառով: Շրջանի եկեղեցին դրական մտեցում չունի Հ.Մ.Ը.Մ-ի հանդէպ:

ԵՐՈՒՍԱԳԷՄ

Մասնաճիւղը կը դիմագրաւէ սրահի հարց: Հայֆայի եւ Եաֆայի պարագային, մասնաճիւղերը կը գործեն եկեղեցիին սրահին մէջ:

ՎԻԵՆՆԱ

Մասնաճիւղը կը տառապի մարզական խումբերու եւ սրահի անյարմարութիւնէ: Կան նաեւ նիւթական դժուարութիւններ, որոնք լրջօրէն կը խոչընդոտեն աշխատանքներու ծաւալումը:

Մասնաճիւղին գլխաւոր իրադրժոււմը եղաւ, անցնող ֆետրուարին, համաեւրոպական երիտասարդական հաւաքի կազմակերպումը, ինչ որ ունեցաւ դրական մեծ արձագանգ:

ՄԻՒՆԻՍ

Մասնաճիւղը յատուկ դժուարութիւններ չի դիմագրաւեր:

ԼՈՆՏՈՆ

Սրահներու եւ մարզադաշտերու վարձքերը բաւական սուղ են: Կայ նիւթականի եւ մարդուժի լուրջ տագնապ: Ժողովական ներկայութիւնը բաւարար չէ:

ՄԱՐՍԷՅ

Մասնաճիւղը ունի ֆուլթայոյի քանի մը խումբեր, որոնց անդամներուն 75 առ հարիւրը հայեր են: Շուտով, մասնաճիւղը կը ձեռնարկէ սկստական աշխատանքներու կազմակերպման (Կարդալ քովի էջով):

ՓԱՐԻՉ

Հիմնական հարցը կը մնայ ակումբի մը չգոյութիւնը:



ՎԱԼԱՆՍ

Ունի կեդրոնի հարց, այլապէս ըսկառտական աշխատանքները բաւական աշխոյժ կերպով թափ առած են:

ՆԱՆՍԻ

Նանսին ունի կիրակնօրեայ դպրոց մը, ուր կը տրուին հայկական երգի ու պարի դասեր: Գաղութը մեծ մասամբ բաղկացած է Հայաստանէն արտագաղթած հայերով, որոնք իրենք զիրենք հեռու կը պահեն ազգային-միութենական մեր առօրեայէն:

ԵՒՐՈՊԱՅԻ ՄԷՉ ԱՇԽԱՏԵԼԱՌՈՒՆ ԴՇՎՈՒՄ

Մասնաճիւղերու գեկուցումները լրսելի եւ ընդհանրական մտահոգութիւններուն եւ դժուարութիւններուն ծանոթանալի ետք, ժողովականները քննար-





կեցին Հ.Մ.Ը.Մ.ի Եւրոպայի ընտանիքը յուզող հարցերը եւ զանոնք միացեալ ձեռքերով դիմադրաւելու կարելիութիւնները: Խօսուեցաւ միացեալ բանակումներու եւ մարզախաղերու կազմակերպման մասին:

Մտահոգութեամբ արծարծուեցաւ կարգ մը շրջաններու մէջ արհեստավարժ մարզական կեանքի կիրարկումը, ինչ որ միութենական իմաստով անըմբռնելի է: Այլ մտահոգութիւն մըն էր ընկերային հաղորդակցութեան ցանցերուն մէջ յաճախ մեր միութենական բարձրերուն անյարիր երեւոյթներու դրսեւորումը, ինչ որ մերժելի նկատուեցաւ ըստ ամենայնի:

Ժողովը անդրադարձաւ նաեւ «Մարզիկ» պաշտօնաթերթի բովանդակութեան, յաճախականութեան եւ առաքման կապուած դժուարութիւններուն:



ՄԱՐՁԻԿ, 360-Ն ՏԱՐԻ, ԹԻՒ 406

Հ.Մ.Ը.Մ.ԱԿԱՆ ՍԿԱՌԻՏԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄ՝ ՄԱՐՍԵՅԻ ՄԵՉ

Ուրախութեամբ կը տեղեկանանք, որ տարիներու սպասումէ ետք, Մարտի 3.Մ.Ը.Մ.-«Արծի»-ը սկսած է սկաուտական գործունէութեան:

Կատարուած է արդէն խըմբապետական կազմաւորման սեմինար մը, օժանդակութեամբ Հ.Մ.Ը.Մ.-Ֆրանսի խըմբապետ եղբայրներ Պօղոս Մահպուպեանի եւ Մաքսիմ Աճեմեանի:

Սկաուտական ընթացիկ աշխատանքները կը սկսին շուտով:



ԵՂԲ. ՎԱՅԷ ՆԱԾԱՐԵԱՆ ԿԸ ՊԱՐԳԵՒԱՏՐՈՒՄ ԲՈՐԷԱԿԱՆ ՍԿԱՌԻՏԱԿԱՆ ՇՔԱՆՇԱՆՈՎ



Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան եւ Լիբանանի Սկաուտական Ֆետերասիոնի անդամ եղբ. Վայէ Նաճարեան Փետրուարին պարգեւատրուեցաւ Զորեական սկաուտական շքանշանով:

Պարգեւատրումը կատարուեցաւ քորեական սկաուտական պատուիրակութեան մը

Պէյրութ այցելութեան առիթով: Պատուիրակութիւնը շքանշանով պատուեց Լիբանանի Սկաուտական Ֆետերասիոնի նախագահը եւ Համաշխարհային Սկաուտական Շարժումին մօտ Լիբանանի Սկաուտական Ֆետերասիոնի ներկայացուցիչ եղբ. Վայէ Նաճարեանը:

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԲԱԺԱՆՈՒՄ, 100-ԱՄԵԱԿ ԵՒ ԱՅԼ ՀԱՐՑԵՐ

Յաջորդ օրակարգով ժողովը քննեց մինչեւ ատենապետներու յաջորդ ժողով կատարուելիք աշխատանքները: Որոշուեցաւ Եւրոպայի ատենապետներու երրորդ ժողովը կատարել Մարտ 2018-ին: Կարծիք յայտնուեցաւ ժողովին հրաւիրելու մասնաճիւղերու մարզական եւ սկաուտական պատասխանատուները:

Այս օրակարգով ներկայացուեցան նաեւ Հ.Մ.Ը.Մ.ի 100-ամեակի տօնակա-

տարութիւններուն Եւրոպայի մասնաճիւղերէն սպասուած աշխատանքները: Կատարուեցան միտքերու փոխանակումներ եւ ներկայացուեցան համապատասխան առաջարկներ:

Վերջապէս, ժողովը զբաղեցաւ այլ հարցերու քննութեամբ եւս եւ իր աշխատանքները աւարտեց յուշանուէրներու փոխանակութեամբ եւ «Յառաջ նահատակ» քայլերգով:



ՄԱՐԶԱԿԱՆ ՓԱՅԼՈՒՆ ՏԱՐԵՇՐՋԱՆԻ ՄԸ ԱԻԱՐՏԻՆ՝

**Հ.Մ.Ը.Մ.Ի ԱՂՋԻԿՆԵՐԸ
ԿԸ ՏԻՐԱՆԱՆ ԼԻՔԱՆԱՆԻ
ՊԱՍՔԵԹՊՈՒԼԻ
ԱՌԱՋՆՈՒԹԵԱՆ,
ՄԻՆՉ ՏՂԱՔԸ
ԿԸ ՀԱՆԴԻՍԱՆԱՆ
ԵՐԿՐՈՐԴ**

19 Մայիս 2017-ին կրկնուեցաւ 4 Յունիս 2016-ին պարգուած պատկերը, երբ 20 տարուան բացակայութենէ ետք, Հ.Մ.Ը.Մ.ի Անթիլիասի աղջկանց պասքեթպոլի խումբը յաջողեցաւ, երկ-



բորդ տարին ըլլալով, տիրանալ Լիբանանի առաջնութեան տիտղոսին եւ արժանաբար բարձրացնել ախտյեանութեան րաժակը:

Ուրախութիւնը կրնար կրկնապատկուիլ, եթէ աղջկանց ախտյեանութեան աւարտէն հինգ օր ետք, Հ.Մ.Ը.Մ.ի տղաքը եւս տիրանային տիտղոսին եւ 100-ամեակի նախօրեակին՝ աննախընթաց տաւալէ մը իրագործէին միութեան պատմութեան մէջ: Տաւալէն չիրագործուեցաւ, սակայն Հ.Մ.Ը.Մ.ի տղաքը, տասնամեակներէ ի վեր առաջին անգամ ըլլալով, յաջողեցան հասնիլ աւարտական հանգրուան, ուր իրենց առաջին երկու մրցումը յաղթելէ ետք, չորս մրցում տեղի տուին Լիբանանի վերջին երեք տարիներու ախտյեան Ռիատիի դէմ:

Պէտք է ընդգծել, որ 2016-2017 տարեշրջանին մեծագոյն յաղթականը հանդիսացան Հ.Մ.Ը.Մ.ի համակիրները, որոնք ամենայն հաւատարմութեամբ ու խանդավառութեամբ եղան աղջկանց եւ տղոց խումբերու կողքին, քաջալերեցին զանոնք թրիպիւններէն եւ ընկերային ցանցերու էջերէն, միշտ լաւագոյնը ցանկալով իրենց սիրելի միութեան:

ԱՂՋԿԱՆՑ ԱՆՈՑԵԱՆԱԿԱՆ ՏԻՏՂՈՍԻՆ ՊԱՀՊԱՆՈՒՄԸ

2016-ի տիտղոսակիր Հ.Մ.Ը.Մ.ի Անթիլիասի աղջկանց խումբին համար դիւրին չեղաւ տիտղոսին պահպանու-

մը, մանաւանդ՝ տիտղոսին լուրջ թեկնածու Ռիատիի աղջկանց խումբին ներկայութեամբ: Երթի ու դարձի մրցումներուն Հ.Մ.Ը.Մ. երկու անգամ տեղի տուաւ Ռիատիի դէմ, սակայն աւարտականին, շնորհիւ ամերիկացի իր աստղին՝ էյնճըյ Մաքքաֆթրիին, ան յաջողեցաւ պասքեթպօլի լաւ դաս մը տալ անոր եւ տիրանալ տիտղոսին:

Ախտյեանութիւնը երկարեցաւ հինգ ամսուան վրայ: Հ.Մ.Ը.Մ.ի աղջիկները երթի ու դարձի իրենց մրցումները աւարտեցին հինգական յաղթանակով եւ մէկական պարտութեամբ: 14 Յունուարին եւ 2 Մարտին, Մըզհերի եւ Մանարայի մէջ անոնք տեղի տուին Ռիատիի դիմաց, այլապէս անոնք արձանագրեցին բաւական հանգիստ յաղթանակներ: Երթի ու դարձի արդիւնքները պարզեցին հետեւեալ պատկերը.-

- Երթի մրցումներ**
- Հ.Մ.Ը.Մ.-Անդրանիկ Սին էլ Ֆիլ 106-47
- Թատամոն-Հ.Մ.Ը.Մ. 24-114
- Հ.Մ.Ը.Մ.-Ռիատի 48-68
- Շէպիպէ Շիահ-Հ.Մ.Ը.Մ. 37-69
- Հ.Մ.Ը.Մ.-Հուսիս 88-48
- Անդրանիկ-Հ.Մ.Ը.Մ. 60-69

- Դարձի մրցումներ**
- Անդրանիկ Սին էլ Ֆիլ-Հ.Մ.Ը.Մ. 25-123
- Հ.Մ.Ը.Մ.-Թատամոն 117-48
- Ռիատի-Հ.Մ.Ը.Մ. 71-58
- Հ.Մ.Ը.Մ.-Շէպիպէ Շիահ 67-38

- Հուսիս-Հ.Մ.Ը.Մ. 49-55
- Հ.Մ.Ը.Մ.-Անդրանիկ 82-56

Երկրորդ հանգրուանին, ախտյեանութեան մասնակիցները բաժնուեցան երկու խմբակի եւ Ապրիլին մրցեցան իրարու դէմ: Հ.Մ.Ը.Մ. մաս կազմեց երկրորդ խմբակին եւ երեք մրցում կատարեց Շէպիպէ Շիահի եւ Թատամոնի դէմ: Երեք մրցումներն ալ աւարտեցան յաղթական հետեւեալ արդիւնքներով.-

- Հ.Մ.Ը.Մ.-Շէպիպէ Շիահ 63-44
- Շէպիպէ Շիահ-Հ.Մ.Ը.Մ. 45-91
- Հ.Մ.Ը.Մ.-Թատամոն 97-23

Ֆայնլը ֆորի մրցումներուն, մարզիչ Փաթրիկ Սապայի աղջիկները իրենց դէմ ունեցան Անդրանիկի աղջիկները եւ 65-46, 56-43 արդիւնքով զոյգ մը յաղթանակ արձանագրեցին անոնց դէմ: Անդրանիկ երրորդ մրցումին չներկայացաւ Հ.Մ.Ը.Մ.ին դէմ եւ, հետեւաբար, 20-0 արդիւնքով պարտուած հռչակուեցաւ:

Աւարտականը իրարու դէմ հանեց Հ.Մ.Ը.Մ.ի եւ Ռիատիի աղջիկները: Հինգ մրցումէն երեքին յաղթականը կը տիրանար տիտղոսին: Ռիատի երթի ու դարձի մրցումներուն ախտյեանը ըլլալով, 13 Մայիսին, իր դաշտին վրայ հիւրնկալեց առաջին մրցումը եւ 68-75 արդիւնքով տեղի տուաւ: Երկու օր ետք, Հ.Մ.Ը.Մ. Մըզհերի մէջ դարձեալ յաղթեց, այս անգամ 67-59 արդիւնքով: Երրորդ մրցումին Հ.Մ.Ը.Մ. 65-74 արդիւնքով տեղի տուաւ Մանարայի մէջ, իսկ վերջին եւ ճակատագրական մրցումին, Մըզհերի մէջ, 19 Մայիսին, ան յաջողեցաւ 89-52





արդիւնքով պարտութեան մատնել մրցակիցը եւ բարձրացնել ախոյեանութեան բաժակը:

Հարկ է նշել, որ աւարտական հանգրուանի յաղթանակներուն իր կարեւոր բաժինը ունեցաւ NBA-ի աստղերէն էյնճըլ Մաքքաֆթրի (2017-ի Եւրոլիգի ախոյեան, 2012-ի եւ 2016-ի ողիմպիականներու ոսկէ մետալակիր, 2010-ի եւ 2014-ի աշխարհի ախոյեան), որ խումբին միացաւ Հ.Մ.Ը.Մ.-Ռիատի երկրորդ ճակատումի (15 Մայիսին):

Այսպէսով, Հ.Մ.Ը.Մ. Անթիլիաս տարեշրջանը աւարտեց 19 յաղթանակով եւ 3 պարտութեամբ, իր դաշտին վրայ կրելով միայն մէկ պարտութիւն: Խումբը մասնակցեցաւ նաեւ Լիբանանի բաժակի մրցումներուն եւ 5 Մայիսին Ռիատիէն պարտուելով դուրս մնաց մրցաշարէն:

Խումբին ախոյեանական տիտղոսին պահպանման մէջ մեծ դերակատարութիւն ունեցան մասնաճիւղին պասքեթպոլի յանձնախումբին անդամները, խումբին պատասխանատուները, մարզիչը, օգնականները եւ մարզիկուհիները:

Ստորեւ՝ ախոյեան խումբին կազմը՝ Ֆէյ Փրենս, Լարա Գրաճեան, Մեղրի Թորոսեան, Ճոյս Սալիպա, Լէյլա Ֆարէս, Ֆարահ Հարաքէ, Սանտրա Նաժմ, Քաթրին Հափ, Ճիւլյը Թանսլթալ, էյնճըլ Մաքքաֆթրի, Մակի Զաքարեան, Ալին Թանկուքեան, Թաքլա Քամել եւ Այտա Պախոս:

Մարզիչ՝ Փաթրիք Սապա, օգնական մարզիչ՝ Ռապիհ Յրանսիս:



PROFOTO

ՏՂՈՑ ԽՈՒՄԲԻՆ ԻՐԱԳՈՐԾՈՒՄԸ

Տղոց խումբը, իր կարգին, կարեւոր իրազուրծում մը կատարեց, երբ յաջողեցաւ ախոյեանութեան երկրորդ դիրքը գրաւել: Անցեալ տարի խումբը հասած էր կիսաւարտական հանգրուան, ուր Ռիատիի դէմ տեղի տուած էր 4-2 արդիւնքով (0-1, 1-1, 1-2, 2-2, 3-2, 4-2): Գրեթէ նոյն սենարիոն այս տարի կրկնուեցաւ աւարտական հանգրուանին, ուր անգամ մը եւս Ռիատիի հետ դէմ յանդիման դարձով խումբը դարձեալ պարտուեցաւ 4-2 արդիւնքով (1-0, 2-0, 2-1, 2-2, 2-3, 2-4):

Ի տարբերութիւն նախորդ տարւան, Հ.Մ.Ը.Մ.ի տղոց խումբը այս տարի հանդիսացաւ երթի ու դարձի ախոյեան: 18 մրցումի ընթացքին, մարզիչ Ճօ Մուսթաֆայի տղաքը արձանագրեցին 17 յաղթանակ եւ 1 պարտութիւն: Երթի մրցումներուն, Մանարայի մէջ, անոնք 66-73 արդիւնքով տեղի տուին հիւրընկալ խումբին դիմաց: Հ.Մ.Ը.Մ.ի ետին, Ռիատի 18 մրցումի ընթացքին արձա-



նագրեց 14 յաղթանակ եւ 4 պարտութիւն, Պիպլոս՝ 13 յաղթանակ եւ 5 պարտութիւն, Մուսթաֆայ՝ 10 յաղթանակ եւ 8 պարտութիւն:

Բ. հանգրուանի մրցումներուն, իր խմբակին մէջ, Հ.Մ.Ը.Մ. մնաց անպարտելի եւ փայլուն յաղթանակներով աւարտեց Սաթէսի, Լուէյզլի եւ Պիպլոսի դէմ իր կատարած երկուքական մրցումները:

Խումբը պարտութիւն չճանչցաւ նա-

եւ ֆայնըլ 8-ի մրցումներուն, ուր 3-0 արդիւնքով յաղթեց Շանվիլին: Ֆայնըլ 4-ը իրարու դէմ հանեց Հ.Մ.Ը.Մ.ը եւ Մուսթաֆայը: Հ.Մ.Ը.Մ. փայլուն ելույթներով արձանագրեց 3-1 արդիւնք եւ հասաւ աւարտական:

Մինչեւ աւարտական հանգրուան, Հ.Մ.Ը.Մ. իր կատարած 31 մրցումներէն 29-ը յաղթեց եւ միայն երկուքը պարտուեցաւ Ռիատիին (երթին, 8 Յունուարին, անոր դաշտին վրայ, 73-66 արդիւն-

Հ.Մ.Ը.Մ.Ի ՊԱՍՔԵԹՊՈՒԼԻ ՏՂՈՑ ԽՈՒՄԲԻՆ 2016-2017 ՏԱՐԵՇՐՉԱՆԻ ԱՐԴԻՒՆՔՆԵՐԸ

ԵՐԹԻ ՄՐՑՈՒՄՆԵՐ
 Լուէյզի-Հ.Մ.Ը.Մ. 72-75
 Հ.Մ.Ը.Մ.-Թատամն 96-80
 Մոսթաֆայ-Հ.Մ.Ը.Մ. 92-99
 Հ.Մ.Ը.Մ.-Սաթէս 129-55
 Սէյրուպա-Հ.Մ.Ը.Մ. 68-114
 Հ.Մ.Ը.Մ.-Պիպլոս 78-73
 Հուսիս-Հ.Մ.Ը.Մ. 70-91
 Ռիատի-Հ.Մ.Ը.Մ. 73-66
 Հ.Մ.Ը.Մ.- Շանվիլի 82-55

ԴԱՐՉԻ ՄՐՑՈՒՄՆԵՐ
 Հ.Մ.Ը.Մ.-Լուէյզի 86-83
 Թատամն-Հ.Մ.Ը.Մ. 92-112
 Հ.Մ.Ը.Մ.-Մոսթաֆայ 86-72
 Սաթէս-Հ.Մ.Ը.Մ. 96-108
 Հ.Մ.Ը.Մ.-Սէյրուպա 96-77
 Պիպլոս-Հ.Մ.Ը.Մ. 70-87

Հ.Մ.Ը.Մ.-Հուսիս 90-76
 Հ.Մ.Ը.Մ.-Ռիատի 67-49
 Շանվիլի-Հ.Մ.Ը.Մ. 70-81

Բ. ՀԱՆԳՐՈՒՄՆԻ ԵՐԹԻ ՄՐՑՈՒՄՆԵՐ
 Հ.Մ.Ը.Մ.- Սաթէս 86-65
 Լուէյզի-Հ.Մ.Ը.Մ. 62-96
 Հ.Մ.Ը.Մ.-Պիպլոս 80-59

Բ. ՀԱՆԳՐՈՒՄՆԻ ԴԱՐՉԻ ՄՐՑՈՒՄՆԵՐ
 Սաթէս-Հ.Մ.Ը.Մ. 67-68
 Հ.Մ.Ը.Մ.-Լուէյզի 98-77
 Պիպլոս-Հ.Մ.Ը.Մ. 65-73

ՖԱՅՆԸԼ 8-Ի ՄՐՑՈՒՄՆԵՐ
 Հ.Մ.Ը.Մ.-Շանվիլի 84-59

Շանվիլի-Հ.Մ.Ը.Մ. 80-87
 Հ.Մ.Ը.Մ.-Շանվիլի 90-82

ՖԱՅՆԸԼ 4-Ի ՄՐՑՈՒՄՆԵՐ
 Հ.Մ.Ը.Մ.-Մոսթաֆայ 95-74
 Մոսթաֆայ-Հ.Մ.Ը.Մ. 97-93
 Հ.Մ.Ը.Մ.-Մոսթաֆայ 95-82
 Մոսթաֆայ-Հ.Մ.Ը.Մ. 77-81

ԱՄԱՐՏԱԿԱՆ ՃԱԿԱՏՈՒՄՆԵՐ
 Հ.Մ.Ը.Մ.-Ռիատի 61-57
 Ռիատի-Հ.Մ.Ը.Մ. 79-82
 Հ.Մ.Ը.Մ.-Ռիատի 64-73
 Ռիատի-Հ.Մ.Ը.Մ. 86-75
 Հ.Մ.Ը.Մ.-Ռիատի 64-76
 Ռիատի-Հ.Մ.Ը.Մ. 70-57



քով) եւ Մուսթֆահէտէն (Փայնըլ 4-ի մրցումներուն, դարձեալ անոր դաշտին վրայ, յետ-երկարաձգման՝ 97-93 արդիւնքով): Խումբը Մրցահերի «Ատում եւ Սեյլա Թնճուկեան» մարզադաշտին

առանձին):

Հ.Մ.Ը.Մ-ի յաղթական արշաւը մինչեւ աւարտական, պասքեթպոլի բոլոր դէտերը մղեց զայն նկատելու տիտղո-

սին թիւ մէկ թեկնածուն: Աւարտական մրցումի առաջին երկու յաղթանակները աւելիով բարձրացուցին 67 տարուան երազի մը իրականացման հաւանականութիւնը: 1949-1950 տարեշրջանին, մարգիչ Յակոբ Գատեանի տղաքը՝ Վարդգէս Տէր Կարապետեան, Ժան Տիարպէքիրեան, Լեւոն Պէրպէրեան, Ալէն Ապուհայեթեան, Վարուժան Ազատեան, Համբարձում Արապեան եւ Գարլուս էսի յաջողած էին Լիբանանի պասքեթպոլի տղոց ախոյեանութեան բաժակին տիրանալ: Այնուհետեւ, աղջկանց յաջողութիւններուն ի տարբերութիւն, Հ.Մ.Ը.Մ-ի տղաքը երբեք չէին յաջողած մարզական նման նուաճում մը կատարել:



Հ.Մ.Ը.Մ-ի եւ Լիբանանի ազգային խումբի մարզիչ Ճօ Մուսաճէա այս տարեշրջանին իր տրամադրութեան տակ ունէր լիբանանեան պասքեթպոլի ամէնէն անուանի դէմքերը: Ֆատի Խաթիպ եւ Նետիմ Հաուրի Ռիատին, Էլի Շամուն եւ Քարամ Մըշէֆ Պիպլոսէն, Հայկ Կէօքճեան Սաթէսէն, ամերիկացիներ Տուայն Ճէքսըն եւ Գեւըն Կալուէյ, սուտանեան ծագումով եւ աստրալական հպատակութեամբ Աթեր Մաթոք: Անոնց խմբակիցներն էին Նետիմ Սուէյտ, Փաուլօ Պէտրիկեան, Տանիէլ Պաղտատեան եւ Սեւակ Քէթէնճեան:

Աւարտական մրցումները տրամաթիւք ընթացք ունեցան Հ.Մ.Ը.Մ-ի խումբին համար, յատկապէս երկրորդ խաղին նախապէրջին վայրկեաններուն, Ֆատի Խաթիպի ստացած ծանր հարւածով (ան վիրաւորուեցաւ դանկէն) խումբը իր կարգին ստացաւ ծանր հարւած: Երրորդ մրցումին Խաթիպ բացակայեցաւ մրցումէն եւ Հ.Մ.Ը.Մ-ի իր դաշտին վրայ կրեց այս տարեշրջանի առաջին պարտութիւնը: Չորրորդ խաղին Խաթիպ դաշտ ներկայացաւ շատ կարճ ժամանակով, առանց մեծ արդիւնքի: Խումբին խաղարկութիւնը արձանագրեց զգալի նահանջ, մինչ Ռիատի խաղէ խաղ բարելաւեց իր խաղաոճը, խմբային խաղն ու թեքնիքները: Փորձառութիւնը, պահեստի մարզիկներուն բարձր մակարդակը եւս ունեցան իրենց անդրադարձը: 2-0 արդիւնքով յառաջացած

Հ.Մ.Ը.Մ-ի վեց օրուան մէջ կրեց չորս յաջորդական պարտութիւն եւ 24 Մայիս 2017-ին կորսնցուց իրեն այնքան մօտիկ թուացող ախոյեանական տիտղոսը:

Հ.Մ.Ը.Մ- պարտուեցաւ, սակայն ունեցաւ գեղեցիկ յաղթանակներով փայլուն տարեշրջան մը, որ երկար ատեն անմոռանալի պիտի մնայ համակիրներուն յիշողութեան մէջ: Երթի ու դարձի ախոյեանը, Բ. հանգրուանին եւ ֆայնըլ

Ց-ի մրցումներուն անպարտելի կազմը յաւելեալ փորձառութեամբ ու ներդաշնակ խաղարկութեամբ կրնար տարբեր պատմութիւն գրել միութեան մարզական ոսկեմատեանին մէջ:

Այդ պատմութիւնը կրնայ գրուիլ նաեւ այլ առիթով, աւելի նպաստաւոր պայմաններով:

Հ.Մ.Ը.Մ-Ի ՖՈՒԹՊՈՒԼԻ ԽՈՒՄԲԸ 2016-2017 ՏԱՐԵՇՐՋԱՆԸ Կ'ԱՒԱՐՏԷ Բ. ԴԱՍԱԿԱՐԳԻ ՀԻՆԳԵՐՈՐԴ ԳԻՐՔԻՆ ՎՐԱՅ

Լիբանանի ֆութպոլի Բ. դասակարգի ախոյեանութիւնը իր լրումին հասաւ երթի ու դարձի 22 հանգրուաններէ բաղկացած ճակատամներէ ետք: 11 խումբեր պայքարեցան Ա. դասակարգ բարձրանալու կամ Գ. դասակարգ չփոխադրուելու համար:



Հ.Մ.Ը.Մ-ի ներկայացուցչական խումբը, որ քանի մը տարեշրջանէ ի վեր հանդէս կու գայ Բ. դասակարգին մէջ, ունեցաւ հազիւ գոհացուցիչ ելոյթներ եւ վերջին մրցումին Նասեր Պար Էլիաս խումբին հետ 1-1 հաւասարութիւն մը արձանագրելով՝ 30 կէտով գրաւեց ախոյեանութեան հինգերորդ դիրքը:

Հ.Մ.Ը.Մ. ախոյեանութեան իր 22 մրցումներուն արձանագրեց 8 յաղթանակ, 8 պարտութիւն եւ 6 հաւասարութիւն: Հ.Մ.Ը.Մ. նշանակեց 36 կոլ (միջին հաշուով 1.44 կոլ) եւ ստացաւ 31 կոլ (միջին հաշուով 1.40 կոլ):

49 կէտով ախոյեանութեան տիտղոսին տիրացաւ Շապապ Արապի խումբը, մինչ 46 կէտով Իպահ Պըրժ Շիմալի գրաւեց երկրորդ դիրքը: Չոյզ խումբերը ստացան Ա. դասակարգ բարձրացման իրենց տոմսը: Գ. դասակարգ փոխադրուելու դատապարտուեցան Շեպիպէր Մագրասա (18 կէտ) եւ Ռիատա Ռալ Ատապ (17 կէտ):

Հ.Մ.Ը.Մ-Ի ՊԱՍՔԵԹՊՈՒԼԻ ՊԷՅՐՈՒԹԻ ԱՂՋԿԱՆՑ ԽՈՒՄԲԸ ԿԸ ԴԱՍԱՊԱՐՏՈՒԻ Գ. ԴԱՍԱԿԱՐԳ ՓՈԽԱԳՐՈՒԵԼՈՒ

Քանի մը ամսուան ճակատամներէ ետք, ի վերջոյ յտակացաւ պասքեթպոլի Լիբանանի աղջկանց Բ. դասակարգի ընդհանուր դասաւորումը:

Հ.Մ.Ը.Մ-ի Պէյրութի աղջիկները վճռական իրենց վերջին մրցումին 55-61 արդիւնքով տեղի տուին Գ. դասակարգի «1875» խումբին դիմաց եւ դատապարտուեցան Գ. դասակարգ փոխադրուելու, մինչ «1875» եւ «Էներժի» խումբերը բարձրացան Բ. դասակարգ:



PROFOTO



«ԴԷՊԻ ՅԱՂԹԱՆԱԿԻ ՀԱՐԻՒՐԱՄԵԱԿ» ԵՐԹԸ ԸՆԹԱՅՔ Կ'ԱՌՆԵ Հ.Մ.Ը.Մ.Ի ՄԱՅԻՍԵԱՆ ՏՊԱՒՈՐԻՉ ՓԱՌԱՏՕՆՈՎ

Թղթակից
ՊԵՐՈՒԹ

Կիրակի, 28 Մայիս 2017-ին, Հայաստանի Ա. Հանրապետության անկախության հռչակման օրը ազդանշանը տուաւ Հ.Մ.Ը.Մ.ի Լիբանանի ընտանիքին «Դէպի յաղթանակի հարիւրամեակ» երթին մեկնարկին: Այդ օր, Պուրճ Համուտի քաղաքապետարանի դաշտին վրայ կազմակերպւած տպաւորիչ փառատօնով մը, բազմահարիւր սկաուտներ, մարզիկներ եւ լիբանանահայ վարժարաններու աշակերտներ տողանցեցին, տարեշրջանի իրենց յաջողութիւնները ներկայացուցին եւ բազմահազար ներկաներու դիմաց պարզեցին Հ.Մ.Ը.Մ.ի գալիք հարիւրամեակի խոստմնայից ու պայծառ ապագան:

Հ.Մ.Ը.Մ.ի Լիբանանի Շրջանային

Վարչութեան կազմակերպած այս փառատօնը վայելեց բարձր հովանաւորութիւնը Մեծի Տանն Կիլիկիոյ Արամ Ա. Կաթողիկոսին, հովանաւորութիւնը Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան եւ

նախագահութիւնը Լիբանանի Հայոց Թեմի Առաջնորդ Շահէ Եպս. Փանոսեանին:

Փառատօնին սկիզբը, Հ.Մ.Ը.Մ.ի շեփորախումբին կողմէ Լիբանանի եւ Հայաստանի Հանրապետության դրոշմները հարիւրամեակի փառատօնին ներկայացուցին:





յաստանի քայլերդներուն կատարողութեամբ բարձրացան Լիբանանի, Հայաստանի եւ Հ.Մ.Ը.Մ-ի դրօշները, ապա խորհրդաւոր կերպով կատարուեցաւ ջահալառութիւն՝ Հ.Մ.Ը.Մ-ի Լիբանանի Շրջանային ընդհանուր խմբապետուհի քոյր Արտա Զէյթունեանի ձեռամբ: Զեռային աշխատանքով պատրաստուած սկաուտական կայմերուն վրայ վառեցան 99 լոյսեր՝ խորհրդանշելով միութեան 100-ամեակը նախորդող 99 բեղուն տարիները:

ԲԱՅՄԱՆ ԽՕՍԲԸ

Փառասօնին բացման խօսքը արտասանեց Հ.Մ.Ը.Մ-ի Լիբանանի Շրջանային Վարչութեան ատենադպիր քոյր Փաթիլ Եսայեան: Ան ըսաւ, որ «Դէպի յաղթանակի հարիւրամեակ» բնաբանով Հ.Մ.Ը.Մ-ի Լիբանանի ընտանիքը հաւաքուած է նշելու Հայաստանի Ա. Հանրապետութեան անկախութեան տարեդարձը: Եսայեան դիտել տուաւ, որ 99 տարի առաջ, մինչ Արարատեան աշխարհի բեկորներուն վրայ կը ստեղծուէր Հայաստանի փոքր հանրապետութիւնը, մինչ Սարգարապատի, Բաշ Ապարանի եւ Ղարաքիլիսի մէջ Արամ Մանուկեաններ, Դրոներ եւ Նազարէկ-

եաններ յաղթանակներ կը կերտէին, Արարատեան աշխարհի միւս կողմը, Սարգարապատէն մղոններ հեռու, կը ստեղծուէր եզակի միութիւն մը՝ Հ.Մ.Ը.Մ-ը, Յեղասպանութենէն ճողոպրած հայ որբերուն եւ պատանիներուն փրկութեան օճախ մը հանդիսանալով: Միութիւնը հետագային կը տարածուէր աշխարհով մէկ եւ կը վերածուէր հոգեւոր Հայաստանի: Ան կը դաստիարակէր հայ պատանին ու երիտասարդը, կը կերտէր տիպար քաղաքացին:

Իր խօսքին մէջ, քոյր Փաթիլ Եսայեան ուրախութեամբ յայտարարեց, որ Յունիսին, Հ.Մ.Ը.Մ-ի Լիբանանի շրջանը շուրջ 150 հոգինոց պատուիրակութեամբ մը պիտի մասնակցի համա-Հ.Մ.Ը.Մ-ական 10-րդ մարզախաղերուն: Ապա, միութեան 100-ամեակի տօնակատարութիւններուն անդրադառնալով, քոյրը դիտել տուաւ, որ միու-

թիւններու տարեդարձները առիթ են ետդարձ կատարելու, սերտելու միութեան պատմութիւնն ու գործունէութիւնը, արժեւորումներ կատարելու եւ անցեալի սխալներէն սորվելով՝ ձեռնարկելու աւելի լաւին ու յաջողին: Այս իմաստով ան անհրաժեշտ նկատեց իւրաքանչիւր ժամանակաշրջանի, երկրի ու գաղութի յատկութիւններէն մեկնած՝ ծրագրելու յառաջիկայ հարիւրամեակի մեր աշխատանքները, միշտ պատրաստ՝ նորանոր դժուարութիւններու դիմադրաւման, ի խնդիր մեր միութեան ու ժողովուրդին վերելքին: «Պէտք է ըլլանք ճկուն, բայց ոչ՝ զիջող,



պէտք է ըլլանք հանդուրժող եւ լայնամիտ, պէտք է ամէն ճիգ ի գործ դնենք, որպէսզի Հ.Մ.Ը.Մ-ը շարունակէ իր շուրջ համախմբել հայ երիտասարդութիւնը՝ իր բոլոր շերտերով, անխափր, որովհետեւ Հ.Մ.Ը.Մ-ը բոլորին միութիւնն է», աւելցուց ան:

Իր խօսքը եզրափակելով, քոյր Փաթիլ Եսայեան շնորհակալութիւն յայտնեց միութեան կողքին կանգնողներուն, տարագաւորներուն, մարզիկներուն, միութենականներուն, միութեան առքելութեան հաւատացողներուն, յատկապէս՝ Հ.Մ.Ը.Մ-ի Շրջանային Վարչութեան տարեկան ճաշկերոյթի հովանաւոր Հարի Նաճարեանին, որուն իշխանական նուիրատուութեան շնորհիւ կարելի պիտի ըլլայ բազմաթիւ ծրագիրներ իրագործել:

Քրոջ խօսքէն ետք, իբրեւ կենդանի պատկեր, գանազան մասնաճիւղերէ սկառսաներ դաշտին վրայ ներկայացուցին Հ.Մ.Ը.Մ-ի նշանակը՝ արեւը, Արաքս գետը եւ Արարատ լեռը՝ «Բարձրացիր՝ բարձրացուր» նշանաբանով:

Հ.Մ.Ը.Մ-Ի ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ԽՕՍԿԸ

Փառասօնը հովանաւորող Հ.Մ.Ը.Մ-ի Կեդրոնական Վարչութեան խօսքը արտասանեց ատենապետ եղբ. Գառնիկ Մկրտիչեան: Ան ըսաւ, որ համայն



հայրության հետ Հ.Մ.Լ.Մ-ի Լիբանանի ընտանիքը Մալիսեան փառատունով կը նշէ Հայաստանի Ա. Հանրապետության 99-րդ տարեդարձը: Յիշարժան թուական մը, որուն շնորհիւ Հայաստանը վերստին կը յայտնուէր աշխարհի քաղաքական քարտէսներուն մէջ եւ հայ մարզը կը վերադառնէր ազգային իր արժանապատուութիւնն ու հպարտութիւնը:

Շարունակելով, եղբ. Մկրտիչեան հաստատեց, որ նոր հայրության ստեղծման ճիգին իր մասնակցութիւնը կը բերէր նաեւ Հայ Մարմնակրթական Ընդհանուր Միութիւնը, որ հազիւ հիմնուած, հայրենիք կը գործուղէր իր լաւա-

գոյն խմբապետները՝ նոր սերունդի դաստիարակութեան գործին լծուելու համար:

Այնուհետեւ, հաստատեց եղբ. Մկրտիչեան, Հ.Մ.Լ.Մ. 99 տարի շարունակ կը հանդիսանար ազգային արժէքներու պահպան, ազգային սերունդներու կերտիչ եւ ազգային իրաւունքներու հետապնդման նուիրուած միութիւն: Հ.Մ.Լ.Մ-ի սկառուտական եւ մարզական շարքերը հասակ կ'առնէին այս համոզումով, այս դաստիարակութեամբ եւ «կամաւոր բանակի» տրամաբանութեամբ գործելու սկզբունքով:

Հ.Մ.Լ.Մ-ի Կեդրոնական Վարչութեան ատենապետը ղիտել տուաւ, որ

յառաջիկայ տարի միութիւնը մեծ շուքով կը նշէ իր հիմնադրութեան 100-ամեակը՝ «Պատուաբեր անցեալէն յաղթական ապագայ» նշանաբանով, տեղեկացնելով, որ 100-ամեակի տօնակատարութիւնները ընթացք կ'առնեն այս ամառ, Երեւանի մէջ տեղի ունենալիք համա-Հ.Մ.Լ.Մ-ական մարզախաղերով եւ կ'աւարտին 2018-ի աշնան, համա-Հ.Մ.Լ.Մ-ական բանակումով եւ յորեկեանական փառաւոր հանդիսութիւններով:

«Ազգային արժէքներու նահանջի, բարոյական բարձրերու այլասերումի, նիւթապաշտութեան եւ յաճախ մոլորեցուցիչ արհեստագիտութեան մեր օրե-



առաջնորդելու համար: Հ.Մ.Ը.Մ-ի պատմությունը լավ պատմելի է կարգալի տեսնելու համար, թե՛ մարմնակրթական այս միությունը ինչպե՛ս կարողացած է 99 տարի կանգուն մնալ՝ հալածատու սկզբնականներու, նուրբ մարդկաներու եւ անձնուէր վարչականներու նիւթական ու բարոյական հակադասական գոհողութիւններու շնորհիւ: Հ.Մ.Ը.Մ-ի անցեալը լավ պատմելի է ուսումնասիրել՝ գիտնալու համար, թե՛ ի՞նչ ըսել է միութենական ըլլալ, ի՞նչ ըսել է մարզական ոգի, ի՞նչ ըսել է կամաւոր աշխատանք, լուռ եւ հետեւողական ծառայութիւն՝ առանց որեւէ ակնկալութեան ու վարձատրութեան», շեշտեց եղբ. Մկրտիչեան:



Խօսքին աւարտին, Մայիսեան փառատօնի կազմակերպիչ Հ.Մ.Ը.Մ-ի Լիբանանի Շրջանային Վարչութիւնը, փառատօնին մասնակից մասնաճիւղերն ու վարժարանները ողջունելով, եղբ. Մկրտիչեան ըսաւ. «Հայ Մարմնակրթական Ընդհանուր Միութիւնը հզօր է ձեզմով: Հայ Մարմնակրթական Ընդհանուր Միութիւնը հպարտ է ձեզմով: Դուք մեր ժողովուրդի վաղուան կերտիչներն էք, որ 99 տարիներու մեր երթը պիտի առաջնորդէք դէպի 100-ամեակ եւ անկէ ալ անդին, դէպի յաղթանակ, յաղթանակ: Դէպի ազատ, անկախ ու միացեալ Հայաստան»:



ԼԵՎԱՍ-Ի 2016-2017 ՏԱՐԵՇՐՁԱՆԻ ՄՐՅԱՆԱԿԱԲԱՍՏՆՈՒԹԻՒՆԸ
Յաջորդեց ԼԵՎԱՍ-Ի 2016-2017 տարեշրջանի բաժակներու եւ վահաններու տուչութիւնը: Տարեշրջանի լաւագոյն մարզիկ յայտարարուեցաւ Հայ Կաթողիկէ Ս. Խաչ-Հարպոյեան Վարժարանէն Մհեր Ծենանեան, լաւագոյն մարզիկուհի՝ Ազգ. Եղիշ Մանուկեան Վարժարանէն Փաթիլ Ասատուրեան, լաւագոյն մարզիչ՝ Ազգ. Սուրէն Խանամիրեան քոյհէն Յարութ Սարգիս: ԼԵՎԱՍ-ի նախակրթարանի բաժնի վահանին տիրացաւ Ազգ. Քառասնից Մանկանց Վարժարանը, միջնակարգի՝ Հայ Աւետօրոսեան Վարժարանը, իսկ երկրորդականի՝ Համազգայինի Մելանքիժոն եւ Հայկ Արսլանեան Ծեմարանը, իսկ Հայկ կազմեան Համալսարանի «Ֆէյր ֆէյ»-ի

րուն, կը հաւատանք, որ Հ.Մ.Ը.Մ. մեծ րնելիք ունի՝ մեր պատանիներն ու երիտասարդները համախմբելու, դաստիարակելու եւ ազգային նպատակներով

բաժակին արժանացաւ Ազգ. Լեւոն եւ Սոփիա Յակոբեան Քոլէճը:

**ՀԱՆԴԻՍԱՒՈՐ
ՏՈՂԱՆՑՔԸ**

Փառատօնին առաջին բաժնի աւարտին, Հ.Մ.Ը.Մ.ի շեփորախումբին առաջնորդութեամբ, կարգապահ, խորոխ ու հպարտ քայլերով տողանցեցին Հ.Մ.Ը.Մ.ի Լիբանանի մասնաճիւղերու ըսկառտական շարքերը, Շրջանային խմբապետութիւնը, վեթերան խմբապետները, մասնաճիւղերու եւ ներկայացուցչական մարզական խումբերը, որոնց կարգին՝ Լիբանանի երկրորդ դիրքը գրաւած Հ.Մ.Ը.Մ.ի պասքեթպոլի տղոց խումբը, Լիբանանի արտյեան Անթիլիասի աղջկանց պասքեթպոլի խումբը, Փուլթպոլի, փինկ-փոնկի, աթլետիքմի, ճատրակի եւ հեծելարշաւի ներկայացուցչական խումբերը, Պուրճ Համուտի եւ Անթիլիասի Փուլթպոլի դպրոցներու սաները եւ ԼԵՎԱՄ-ի մըրցումներուն մասնակցած հայկական վարժարաններու աշակերտները:

**ԼԻԲԱՆԱՆԻ ՀԱՅՈՑ ԹԵՄԻ
ԱՌԱՋՆՈՐԴԻՆ ՊԱՏԳԱՄԸ**

Տողանցքի աւարտին, բազմահագար ներկաներուն Հայրական իր պատգամը փոխանցեց Լիբանանի Հայոց Թեմի Առաջնորդ Շահէ Եպս. Փանոսեան: Ան ըսաւ, որ թէեւ հայութեան պատմութիւնը լեցուն է մռայլ ու սեւ էջերով, բայց եւ այնպէս կան թուականներ, ինչպէս՝ 28 Մայիսը, որոնք լուսաւորած, պայծառացուցած ու շքեղ դարձուցած են մեր պատմութիւնը:

Ապա, Առաջնորդը շարունակեց. «Պուրճ Համուտի հայադրոշմ այս միջավայրին մէջ, Մայիսեան այս փառատօնով մենք պէտք է զգանք եւ վերապրինք մեր ազգային այն տեսիլքը, որ Արամ Մանուկեանի օրինակով բերաւոր հերոսներ հայրենի մեր աշխարհի ազատութեան ու անկախութեան ի խնդիր՝ պատերազմի դաշտերուն վրայ շքեղօրէն արտայայտեցին անցնող բոլոր ժամանակներուն»:

Անկախութեան արժէքին մասին խօսելով, Առաջնորդը դիտել տուաւ, որ Մայիս 28-ով կերտուած Հայաստանի



անկախութիւնը մեր պատմութեան ամէնէն լուսաւոր էջերէն է եւ իւրաքանչիւր հայ անհատի հոգիին մէջ կեանքի տեսիլք դրոշմող առիթ է: «Հետեւաբար, պատահականութեամբ չվարուինք մեր հայրենիքի ազատութեան եւ անկախութեան տարեդարձին հետ, այլ անոր մէջ դիտելով անցեալի փառքն ու մեծութիւնը՝ ջանանք նաեւ այնտեղ քանդակել մեր գիտակից կեանքին պատկերը, որպէսզի նաեւ մեր եռանդովն ու ճիգովը կերտուին գայլք այն լուսաւոր կարեկրութիւնները, որոնք մեզ պիտի տանին մեր հաւաքական իղձերուն ու անկատար տենչերուն պսակումին», հաստատեց ան:

Իր խօսքին վերջին բաժնով, Առաջնորդը կոչ ուղղեց շինիչ տրամադրութեամբ եւ ապագայատեսիլ հայեացքով

ողջունելու նորակառոյց Ազգային Միացեալ Վարժարանը, որ նկարագիր ու ինքնութիւն կազմաւորող դարբնոց մը պիտի ըլլայ: «Որպէսզի անոր արդիւնքով յաղթանակ տանինք այն բոլոր մարտերուն մէջ, զորս սփիւռքեան մեր առօրեային մէջ ամէն վայրկեան պարտինք մղել մեր հոգեկան աշխարհին մէջ, որպէսզի սերունդէ սերունդ ապահովենք յաւերժական երթը մեր ժողովուրդին», եզրափակեց ան:

Մայիսեան փառատօնը իր աւարտին հասաւ «Յառաջ նահատակ» քայլերգով եւ հրավառութեամբ:

Լուսանկարները՝ Արամ Սոմունճեանի (Amaya) եւ Մարգար Թումայեանի:



Photo by Ashnag©

«ԴԻՊՈՒ Հ.Մ.Ը.Մ.Ի 100-ԱՄԵԱԿ» ՆՇԱՆԱԲԱՆՈՎ՝

«ՀԱՅ ՍԿԱՈՒՏԻ ՕՐ»ՈՒԱՆ ՀԱՆԴԻՍԱԴՐՈՐ ՏՕՆԱԿԱՏԱՐՈՒԹԻՒՆ՝ ԼԻՔԱՆԱՆԻ ՄԷՁ

Թղթակից
ՊԵՅՐՈՒԹ

Հ.Մ.Ը.Մ.ի Լիբանանի Շրջանային Վարչութեան հովանաւորութեամբ, Շրջանային ըՄ-կառուտական Խորհուրդին եւ խմբապետական կազմին կազմակերպութեամբ, Կիրակի, 12 Մարտի երեկոյեան ժամը 6-ին, «Յակօր Տէր Մելքոնեան» թատերասրահին մէջ, հանդիսաւոր տօնակատարութեամբ նշուեցաւ «Հայ սկաուտի օր»ը՝ «Դէպի Հ.Մ.Ը.Մ.ի 100-ամեակ» նշանաբանով:

Հանդիսութիւնը ընթացք առաւ Հ.Մ.Ը.Մ.ի շեփորախումբին կողմէ Հայաստանի եւ Լիբանանի քայերգներուն կատարողութեամբ:

Բացման խօսքը արտասանեց քոյր Ալին Քէչէպաշեան: Ան ողջունեց ներկաները եւ յայտնեց, որ հայ ժողովուրդի

պատմութեան մէջ Փետրուարը ազգային տօներու, աւանդութիւններու, հերոսական սիրանքներու եւ քաջագործութիւններու ամիս է: Փետրուարին է, որ կը նշենք Վարդանանց հաւատքի ու գոյատեւման հերոսամարտը, Փետր-

լարեան հերոսական ապստամբութիւնը եւ շուրջ երեսուն տարիներ առաջ սկիզբ առած հայ ժողովուրդի արդի պատմութեան ամէնէն փառաւոր էջերէն մէկը՝ Արցախի ազատագրումը: Այս բոլորը Փետրուարին են եւ «Հայ սկաուտի օր»ն



Photo by Ashnag©



ալ Փետրուարին է: Քոյրը ըսաւ, թէ պատշաճ կը թուի, որ հերոսական եւ հայրենասիրական արարքներուն միանան նաեւ ծառայասիրութիւնը, օգնութիւնն ու մարդասիրութիւնը: Ազգային արժէքներուն աւելցնելով մարդկայինը, կը բնորոշենք Հ.Մ.Ը.Մ-ի սկաուտը, որ կը խոստանայ հաւատարիմ մնալ իր հայրենիքին, միաժամանակ պատրաստ՝ օգնելու բոլորին: «Հայ սկաուտի օր»ը ծառայութեան, իրերօգնութեան, եղբայրասիրութեան եւ մարդասիրութեան օրն է, հաստատեց ան:

Յայտագրի առաջին բաժինով ելոյթ

ունեցաւ քոյր Ռիթա Վարդանեան: Ան ամուռնքեց Ժազ Ս. Յակոբեանի «Ռումբ մը սիրտ» բանաստեղծութիւնը, որուն տուտուկով ընկերակցեցաւ քոյր Կասիա Էճիտեան:

Ապա, եղանակներու շարքով մը հանդէս եկաւ Հ.Մ.Ը.Մ-ի շեփորախումբը:

Օրուան պատգամը փոխանցեց Հ.Մ.Ը.Մ-ի Կեդրոնական Վարչութեան անդամ եղբ. Բաֆֆի Կէվօղլանեան: Ան ըսաւ, թէ Հ.Մ.Ը.Մ-ը հայ իրականութեան մեծագոյն միութիւնն է, որ դարձը շարունակ, սկաուտական եւ մարզական զոյգ թեւերով սաւառնելով, տա-





Photo by Ashnag©

րածուած է 108 մասնաճիւղերու մէջ: Ան այսօր կը հաշուէ աւելի քան 26 հազար անդամ: Եղբ. Կէփօղլանեան նշեց, որ կարելի չէ գաղութային կեանքի ազգային, կրօնական եւ մշակութային զանազան առիթները պատկերացնել առանց Հ.Մ.Ը.Մ.ի սկաուտներուն ներկայութեան եւ մասնակցութեան: Ան շեշտեց, որ Հ.Մ.Ը.Մ.ի սկաուտները մեծ դերակատարութիւն ունին ազգային հարստութիւն ներշնչելու եւ հայութեան գոյատեւման աւելի հասցնելու իմաստով:

«1918-ին ծնունդ առած Հայաստանի Հանրապետութեան Եռագոյն դրօշը 70 տարի Հ.Մ.Ը.Մ.ը եւ իր սկաուտները բարձր պահեցին», ըսաւ եղբ. Կէփօղլանեան: Ապա, ան ընդգծեց, որ Հ.Մ.Ը.Մ.ը այսօր կանգնած է իր 100-ամեակի սեմին, եւ անոր անդամներէն կը պահանջուի ըլլալ արժանի ժառանգորդները այս հարուստ պատմութեան եւ իրագործումներուն՝ արժանաւորապէս յիշատակելու համար այս պատմական տարեդարձը: Եղբ. Կէփօղլանեան իր խօսքը աւարտեց ըսելով. «Պատուաբեր անցեալէն յաղթական ապագայ նշանաբանին հաւատարիմ՝ շարունակենք մեր ընթացքը, բանիւ եւ գործով, դէպի Հ.Մ.Ը.Մ.ի 100-ամեակ եւ յաւելեալ երկարատեւ ամեակներ» (խօսքին ամբողջութիւնը տեսնել էջ 11-13):

Ապա, դարձեալ ելոյթ ունեցաւ Հ.Մ.Ը.Մ.ի շեփորախումբը՝ «Սուփան ասկեար» եւ «Հայորդիք» երգերը նուազելով:



Photo by Ashnag©

Այնուհետեւ, Շրջանային Սկաուտական Խորհուրդի ատենապետ քոյր Ալին Լիպարեան-Քէչեպաշեան բեմ հրաւիրեց 1970-2015 տարիներու Շրջանային խմբապետ, Շրջանային խմբապետուհի եւ Շրջանային ընդհանուր խմբապետի պաշտօն վարած քոյրեր եւ եղբայրներ Յասմիկ Մուրատեանը, Ներսէս Տօնիկեանը (բանաւոր բացակայ), Ճոնի Արեւեանը (բանաւոր բացակայ), Կարպիս Գապասագալեանը, Հրայր Մարգարեանը, Սոնա Պօղոսեանը, Մարո Քէչիշեանը (բանաւոր բացակայ), Լուսին Գազէզեանը, Վաչէ Նաճարեանը, Բաֆֆի Կէփօղլանեանը, Կարօ Մուրաջանեանը

(բանաւոր բացակայ), Սեդա Պէշլեանը (բանաւոր բացակայ), Յակոբ Զպաքեանը, Վարդուկ Ֆոնրզլեանը եւ Ժանօ Քէչէճեանը: Առ ի զնահատանք իրենց կատարած աշխատանքներուն, քոյրերուն եւ եղբայրներուն յանձնուեցան յատուկ յուշանուէրներ՝ Շրջանային ընդհանուր խմբապետուհի քոյր Արաա Զէյթունեանի ձեռամբ:

Հանդիսութեան աւարտին, իր սրտի խօսքը ուղղեց Լիբանանի Հայոց Թեմի Առաջնորդ Շահէ Եպս. Փանոսեան: Ան ըսաւ, թէ «Հայ սկաուտի օր»-ուան առիթով հաւաքուած ենք այս սրահին մէջ, որպէսզի շօշափելիօրէն եւ ուժգնօրէն զգանք, որ տակաւին Հ.Մ.Ը.Մ.ի ճամբով մեզի հետ ունինք մեր երիտասարդութեան կարեւոր մէկ տոկոսը: Ան շնորհակալութիւն յայտնեց Հ.Մ.Ը.Մ.ին, որ իր զանազան աշխատանքներուն ընդմէջէն անցնող տասնամեակներուն առատօրէն բարիք սերմանեց մեր համայնական կեանքին մէջ, որպէսզի մեր ժողովուրդի զաւակները ապրին մեր հաստատած հայ իրականութեան սահմաններուն մէջ:

Հանդիսութիւնը փակուեցաւ Լիբանանի բոլոր խմբապետներուն կողմէ «Յառաջ նահատակ» քայլերգին երգեցողութեամբ:



Հ.Մ.Ը.Մ.Ի ԼԻԲԱՆԱՆԻ ՍԿԱՈՒՏՆԵՐԸ ՈԳԵԿՈՉԵՑԻՆ ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ՆԱՀԱՏԱԿՆԵՐՈՒՆ ՅԻՇԱՏԱԿԸ

Թղթակից ՊԵՅՐՈՒԹ

Հ.Մ.Ը.Մ.Ի Լիբանանի Շրջանային Վարչութեան եւ Շրջանային Սկաուտական Խորհուրդին հովանավորութեամբ, սկաուտական շարքերը, ինչպէս ամէն տարի, այս տարի եւս իրենց յարգանքի տուրքը մատուցեցին Հայոց Յեղասպանութեան նահատակներուն:

23 Ապրիլի երեկոյեան, Հ.Մ.Ը.Մ.Ի Պէյրութի, Պուրճ Համուտի, Անթիլիասի, Փրտէյտիի եւ Ռաուտայի մասնաճիւղերը ներկայացնող երէց-պարմանուհիները, խմբապետական կազմերը, մասնաճիւղերու Սկաուտական Խորհուրդները, ինչպէս նաեւ Շրջանային խմբապետական կազմը, Շրջանային Սկաուտական Խորհուրդն ու Շրջանային Վարչութեան ներկայացուցիչները հաւաքուեցան Հայոց Յեղասպանութեան Պիքֆայայի յուշարձանին դիմաց, ուր կատարուեցաւ հոգեհանգստեան արարողութիւն:

Այս առիթով իր արտասանած խօսքին մէջ, Հ.Մ.Ը.Մ.Ի Լիբանանի Շրջանային Սկաուտական Խորհուրդի ատենապետ քոյր Ալին Քէչէպաշեան ըսաւ. «Ապրիլ 23-ը հայ սկաուտին համար պայքարի օր է, պահանջատիրութեան օր է»: Ան աւելցուց, որ տարիներու ականդրութեան նման, Պիքֆայայի յուշարձանին առջեւ հաւաքուած սկաուտ-



ները կը վերանորոգեն իրենց խոստումը, թերազրելով, որ այս խոստումին հաւատարիմ մնալով անոնք շարունակեն պահանջել հայութենէն խլուած բոլոր իրաւունքները, մինչեւ որ հասնինք Հայ Դատի արդար հատուցման:

Ապա, «Յառաջ նահատակ» քայլերգի եւ «Կիլիկիա» երգի երգեցողութեամբ սկաուտները միասնաբար ուխտեցին վառ պահել Հայոց Յեղասպանութեան սուրբ նահատակներուն յիշատակը եւ Հ.Մ.Ը.Մ.Ի Լիբանանի ընտանիքին անունով ծաղիկներ գետեղեցին առ ի յարգանք՝ սրբադասուած մէկ ու կէս միլիոն նահատակներու անթառամ յիշատակին:

ԱՆԹԻԼԻԱՍԻ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԱՐԱՐՈՂՈՒԹԵԱՆ ՆԵՐԿԱՑՈՒԹԻՒՆ

Օր մը ետք, 24 Ապրիլին, Հ.Մ.Ը.Մ.Ի Պէյրութի, Պուրճ Համուտի, Անթիլիասի, Փրտէյտիի եւ Ռաուտայի մասնաճիւղերը ներկայացնող 400 սկաուտներ ներկայ գտուեցան Հայոց Յեղասպանութեան սրբադասուած նահատակներու յիշատակին կատարուած եկեղեցական յատուկ արարողութեան եւ անոր

յաջորդած Արամ Ա. Կաթողիկոսին պատգամին, Անթիլիասի Ս. Գրիգոր Լուսաւորիչ մայր տաճարի շրջափակին մէջ:

Եկեղեցական արարողութենէն ետք, Հ.Մ.Ը.Մ.Ի շեփորախումբին առաջնորդութեամբ, սկաուտական խումբերը տողանցեցին մայրավանքի շրջափակին մէջ: Արամ Ա. Կաթողիկոս վեհաբանին պատշգամէն ողջունեց սկաուտները եւ խրախուսական խօսքով մը անոնց թերազրեց տէր եւ պահապան ըլլալ մեր բոլոր նահատակներու ազգային կտակին:

ՍԿԱՈՒՏԱԿԱՆ ՏԵՍԱՆԻԹ

Հայոց Յեղասպանութեան 102-ամեակի ոգեկոչման ձեռնարկներու ծիրէն ներս, Հ.Մ.Ը.Մ.Ի Լիբանանի սկաուտները նախաձեռնեցին եւ պատրաստեցին յատուկ տեսանիւթ մը, որ գետեղուած է Հ.Մ.Ը.Մ.Ի Լիբանանի սկաուտներուն դիմատետրի էջին վրայ՝ հետեւեալ հասցեով.

https://www.facebook.com/ScoutsOfHomenetmenLebanon/?ref=aymt_homepage_panel



ԵՂԲ. ՍՈՒՐԷՆ ՆԱԶԱՐԵԱՆԻ «ԳԻՐՔ ԵՐԱԽՏԻՔԻ» ՅՈՒՇԱԳՐԱԿԱՆ ՀԱՏՈՐԻՆ ՇՆՈՐՀԱՀԱՆԴԵՍԸ

Թղթակից ՊԵՅՐՈՒԹ

Հովանաւորութեամբ Բերիոյ Թեմի Առաջնորդ Շահան Արք. Սարգիսեանի եւ Լիբանանի Հայոց Թեմի Առաջնորդ Շահէ Եպս. Փանոսեանի, կազմակերպութեամբ Լիբանանի համախարհերոզցիական հայրենակցական միութեան, Ուրբաթ, 24 Փետրուար 2017-ի երեկոյեան ժամը 6-ին, «Ազդակ»ի «Փիւնիկ» սրահին մէջ տեղի ունեցաւ հալէպահայ վաստակաշատ Հ.Մ.Ը.Մ.ական եղբ. Սուրէն Նազարեանի (1923-1998) «Գիրք երախտիքի» յուշագրական հատորին շնորհահանդէսը:

Բարի գալուստի խօսքով հանդէս եկաւ Լիբանանի համախարհերոզցիական հայրենակցական միութեան ատենապետ Ռուբէն Մանկասարեան: Ան ըսաւ, թէ եղբ. Սուրէն Նազարեանի հատորին ընդմէջէն կարելի է հաղորդուիլ հայոց պատմութեան կենդանի մէկ շրջանին եւ յայտնաբերել երկու հաւա-

տամք՝ Աստուծոյ խօսքին անխախտ ճշմարտութիւնը եւ հայրենիքին ու հայրութեան անժամանցելի սէրն ու կապուածութիւնը: Ան յայտնեց նաեւ, որ Սուրէն Նազարեան կը ներկայացրնէ իր ծնողներուն ապրած տառա-

պանքը եւ իր ընտանիքի իւրաքանչիւր անդամին հոգեբանական ազդեցութիւնները: Ան հաստատեց, որ Նազարեանի պատումին մէջ ատելութիւն չկայ, այլ՝ կեանքի կոչ, հայրութեան վերածընունդի եւ վերապրելու հրաւեր:

Ողջոյնի խօսքով հանդէս եկաւ Սուրէն Նազարեանի դուստրը՝ Հուրի Նազարեան: Ան արտայայտեց իր յուզումնախառն զգացումները եւ հպարտութեան ապրումները՝ ըլլալու գաւազակը այն մեծութեան, որուն անունը ոսկեգօծ գիրերով կը գրուի Հալէպի 100 տարինե-



Photo by Ashnaq

րու պատմութեան մէջ: Ան ըսաւ, որ իր հօր գիրքին հրատարակութիւնը քաղցր պարտք մը եղած է Նազարեան ընտանիքին համար, ապա կարդաց ընտանիքի անդամներուն սրտի ազնիւ ու հարգատ խօսքերը, որոնք կը կազմեն «Գիրք երախտիքի» հատորին յառաջաբանը: Խօսքին աւարտին, Հուրի Նազարեան շնորհակալութիւն յայտնեց Լիբանանի եւ Բերիոյ թեմերու Առաջնորդներու ներկայութեան, համախարհերոզցիական հայրենակցական միութեան, Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան, «Ազդակ»ի տնօրէնութեան եւ գիրքը ներկայացնող Սալբի Գասպարեանին:

Գիրքը ներկայացուց Սալբի Գասպարեան: Ան ըսաւ, որ Սուրէն Նազարեանի «Գիրք երախտիքի» նորատիպ հատորը յուշափաստագրական արժէք կը ներկայացնէ եւ նոր փաստաթուղթ մը կ'աւելցնէ Հայոց Ցեղասպանութեան թղթածրարի բլրակոյտին վրայ: 210 էջերէ բաղկացած գիրքը, որ լոյս տեսած է 2015-ին, Երեւան, «Մուղնի» հրատարակչատունէն, կը դառնայ նաեւ հայ ժողովուրդի հաւաքական յիշողութեան եւ հաւաքական ճակա-



Photo by Ashnaq



տագիրի առանցքային կրկներեւոյթը՝ ցոլացնելով դաժան ժամանակներու տարագիր հայուն տաժանելի ուղեւորութիւնը ճակատագրի աշխարհատարած քառուղիներուն վրայ: Սայրի Գասպարեան նշեց, որ շարժապատկերային գրապատկերներով հարուստ հատորին ընդհանուր տրամաբանութիւնը կը խտանայ ժամանակահատուածի մը առանցքային բաւիղներուն մէջ, ուր տարրօրէն կ'ազդեցուն մեր ճակատագրի մանկէն դաժան փուլն ու Հայկալը երազային կայքի վերածող յանձնառու սերունդի մը խիզախումներուն առաջին հանգրուանները: Ան դիտել տուաւ, որ գիրքը կը բաղկանայ չորս մասէ՝ իւրաքանչիւրը հեղինակի հօր, մօր, քրոջ ու հօրաքրոջ ողիսականները խտացնող ենթավերնագիրներով: Ան նշեց նաեւ, որ Սուրէն Նազարեան «Յաւելուած»ի ներմուծումով կորուստէ փրկած ու յաւերժացուցած է Ակնայ հարսանեկան հայրէններէն պատառիկներ, երգուած՝ հայերէնով եւ թրքերէնով:

Այս առիթով, Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան անունով խօսք առաւ եղբ. Բաֆֆի Կէփօղլանեան: Ան իր վկայութեամբ հաստատեց, որ Սուրէն Նազարեան եղած է հաւատաւոր Հ.Մ.Ը.Մ.ական մը, որ շատերու հետ բաժին ունեցած է Հայկալի ազգային-հասարակական կեանքի յառաջընթացին մէջ: Ան յայտնեց, թէ ինչպէ՛ս Սուրէն Նազարեան մեծ նուիրումով 1950-ական տարիներուն գրեթէ կազմալուծ ընթացող Հ.Մ.Ը.Մ.ի սկառուութիւնը վերականգնած է եւ դարձած պատասխանատուն «Հայկալի

Տրդ միաւոր» անուան տակ գործող Հ.Մ.Ը.Մ.ի սկառուական կազմին: Եղբ. Կէփօղլանեան նշեց այն բոլոր պաշտօնները, որոնք տարիներ շարունակ խոնարհարար ու սիրով վարած է եղբ. Նազարեան՝ հասնելով մինչեւ Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան անդամակցութեան (1991-1995): Իսկ խօսքին աւարտին, ան ըսաւ, որ Սուրէն Նազարեանի կեանքին յետադարձ ակնարկ նետելով պարզ ու յստակ կը դառնայ գոյատեւման գաղտնիքը Հ.Մ.Ը.Մ.ին, որուն դրօշին տակ հաւաքուած են հայու ճակատագիրով աշխարհի հեռաւոր ծայրամասերը հասած հայորդիները, որոնք «Յառաջ նահատակ» քայրերգէն, շեփորախումբերու երաժշտութեան կշռոյթէն եւ եղբայր Սուրէններու ժառանգէն աւել յառա՛ծ՝ իրենց փառապանծ շքերթը հասցուցած են մինչեւ 100-ամեակ (տղօր խօսքին ամբողջութիւնը տեսնել էջ 14-15):

Խօսքերու միջեւ, Աւետիս եւ Արի Տաքէսեաններ ջութակով եւ կիթառով ներկայացուցին երաժշտական կտոր մը:

Ապա, խօսք առաւ Բերիոյ Թեմի Առաջնորդ Շահան Արք. Սարգիսեան: Ան ըսաւ, որ երբ մեր պատմութեան էջերը կը թերթատենք՝ ընկրկումի, յուսահատութեան պատկերներու եւ պահերու կողքին կ'ունենանք հորիզոնը լուսաւորող դէմքեր եւ գործեր, որոնք կու գան կեանք ու շունչ ներշնչելու, ինչպէ՛ս՝ Սուրէն Նազարեանը: Առաջնորդ սրբազան հայրը դիտել տուաւ, որ ինչպէ՛ս գիրքերն ու անձերը կարեւոր դերակատարութիւն կ'ունենան ազգա-

յին կեանքին մէջ, ապա յայտնեց, թէ Սուրէն Նազարեանի գործը առիթ է եւ օրինակ կը հանդիսանայ նման գործեր նախաձեռնելու համահայկական կեանքին մէջ:

Շահան Արք. Սարգիսեան իր խօսքին աւարտին անդրադարձաւ Հ.Յ.Գ.ի եւ Հ.Մ.Ը.Մ.ի դպրոցներուն մէջ Սուրէն Նազարեանի ունեցած անկրկնելի ներդրումին եւ անշահախնդիր ծառայութեան, ազգային կեանքին մէջ նուիրումով, գիտակցութեամբ, յանձնառութեամբ կատարած աշխատանքին, որ ինքնին դասագիրք մը դարձած է իր շրջապատին ու միջավայրին:

Լիբանանի Հայոց Թեմի Առաջնորդ Շահէ Եպս. Փանոսեան, իր կարգին, յայտնեց, թէ Սուրէն Նազարեանի «Գիրք երախտիքի»ն պատմութիւնն է գերդաստանի մը ներկայացուցչներուն ցուցաբերած հաւատարմութեան՝ հայրենի հողին, հայրենական յիշատակներուն եւ բարքերուն, ինչպէ՛ս նաեւ՝ Աստուծոյ եւ պապերու հաւատքին նկատմամբ: Սրբազան հայրը դիտել տուաւ, որ ձեռնարկը լաւագոյն առիթն է մեր հայեացքը ուղղելու դէպի անցեալ եւ հաւատարմութեամբ վարուելու անցեալին եկող այն բոլոր իրողութիւններուն հետ, որոնք կը կերտեն մեր ազգային կեանքը եւ մեզի հաւատարմութիւն կը պատգամեն:

Այնուհետեւ, հիւրասիրութեան մը շուրջ շնորհահանդէսը հասաւ իր աւարտին:



Հ.Մ.Ը.Մ.Ի ՃԻԲՆԻԻ ՄԱՍՆԱՃԻԲՂԻՆ 65-ԱՄԵԱՅ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ԼՈՒՍԱՆԿԱՐՆԵՐՈՒ ՑՈՒՑԱՀԱՆԴԷՍԸ

Թղթակից
ԾԻՆԻ

Հովանաւորութեամբ Հ.Մ.-
Ը.Մ.Ի Լիբանանի Շրջանային
Վարչութեան եւ կազմակեր-
պութեամբ Ճիւնիի մասնաճիւղի վար-
չութեան, Շաբաթ, 25 Մարտի երեկոյ-
եան ժամը 6-ին տեղի ունեցաւ բացումը
մասնաճիւղին 65-ամեայ պատմութիւնը
ներկայացնող լուսանկարներու ցուցա-
հանդէսին, ձեռամբ Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրո-
նական Վարչութեան ատենապետ եղբ.
Քառնիկ Մկրտիչեանի, Հ.Մ.Ը.Մ.ի Լի-
բանանի Շրջանային Վարչութեան ատե-
նապետ եղբ. Հրայր Խաչատուրեանի,
Ճիւնիի քաղաքապետ ժուռն Հրայր շէր
եւ ցուցահանդէսի նկարներու հեղինակ
եղբ. Բաֆֆի Սաայեանի:

Լիբանանի եւ Հայաստանի քայքերգ-
ներուն ունկնդրութենէն ետք, ներկա-
ները յոտնկայս մէկ վայրկեան լուս-
ութեամբ յարգեցին Հ.Մ.Ը.Մ.ի ննջեցեալ-
ներու անմառ յիշատակը: Բացման խօս-
քը արտասանեց եղբ. Գէորգ Գազանձ-



եան, որ մեծապէս գնահատեց եղբ.
Բաֆֆի Սաայեանի կատարած հսկայա-
կան աշխատանքը: Ան եղբայրը նման-
ցուց ռազմաճակատ ուղղուող այն զին-
ւորին, որուն ուսէն անպակաս կ'ըլլայ
«հրացանը»՝ լուսանկարչական գործի-
քը: Եղբ. Սաայեան մնայուն կերպով
ներկան է մասնաճիւղին բոլոր ձեռ-
նարկներուն եւ լուսանկարչութիւնը կը

կատարէ անձնական նախաձեռնու-
թեամբ եւ ոչ թէ արհեստավարժութեան
նպատակով, այլ՝ միութենական ոգիով:

Ապա, մասնաճիւղի վարչութեան
ատենապետ եղբ. Ներսէս Ճուպանեան
արաբերէնով արտասանեց վարչութեան
խօսքը: Ան հակիրճ ձեռով անդրադար-
ձաւ մասնաճիւղի հիմնադրութեան
պատմութեան՝ շեշտելով սկստական
եւ մարզական գործունէութեան 65
տարուան ընթացքը: Ան իր խօսքը փա-
կեց նշելով, որ 65 տարի առաջ հիմնե-
ցինք, 65 տարի գործեցինք եւ 65 տարի
եւս պիտի գոյատեւենք»: Իր խօսքին
աւարտին, եղբ. Ճուպանեան հրաւիրեց
Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան
եւ Լիբանանի Շրջանային Վարչութեան
ատենապետները եւ Ճիւնիի քաղաքա-
պետը, որպէսզի վարչութեան կողմէ
այս առթիւ պատրաստուած յուշանուէ-
րը յանձնեն եղբ. Սաայեանին:

Ներկաները մեծ հետաքրքրութեամբ
չրջեցան ցուցադրուած լուսանկարնե-
րուն շուրջ, որոնց մասին եղբ. Սաայեան
ներկայացուց լայն բացատրութիւններ:



Հ.Մ.Ը.Մ.Ի ԼԻԲԱՆԱՆԻ ՇՐՋԱՆԷՆ ՀԱՐԱԼԱՅԻՆ ՔՈՐԷԱՅԻ ԽՄԲԱՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻ ՄԱՍՆԱԿՅՈՒԹԻՒՆ

Թղթակից
ՊԵՅՐՈՒԹ

Իրբև 2023-ի համաշխարհային սկաուտական ճամպորիի հիւրընկալման թեկնածու երկու երկիրներէն մէկը, վերջերս, Հարաւային Քորէա հրաւէրներ յղեց աշխարհի տարբեր երկիրներու սկաուտական Ֆետերասիոններուն՝ իր երկիրն ու սկաուտական շարժումը անոնց ծանօթացնելու նպատակով (երկրորդ թեկնածուն Լեհաստանն է):

Լիբանանի սկաուտական ֆետերասիոնը հրաւէրին ընդառաջելով, եռանդամ պատուիրակութեամբ մը ներկայացաւ Հարաւային Քորէա եւ մասնակցեցաւ այս առիթով կազմակերպուած խմբապետական յատուկ համագումարին: Պատուիրակութեան մաս կազմեց նաեւ Հ.Մ.Ը.Մ.Ի Լիբանանի Շրջանային խմբապետութեան կազմի անդամ, արժուիկ ճիւղի խմբապետուհի քոյր Աննա Քէօմպէճեան:

Համագումարին ներկայ գտնուեցան 22 մասնակիցներ՝ ներկայացնելով 16 երկիրներ: Համագումարին պաշտօնական բացումը կատարուեցաւ 1 Ապրիլին: Մասնակիցները ներկայացուցին իրենց երկիրներն ու սկաուտական միութիւնները: Քոյր Աննա Քէօմպէճեան Լիբանանի կողքին ներկայացուց Հայաստանն ու Հ.Մ.Ը.Մ.ը: Հարաւային Քորէայի սկաուտական շարժումը, իր կարգին, ներկայացուց ճամպորիի համար իր առաջադրած նշանաբանը՝ «Color of dream»:

Երկրորդ օրը, ներկաները մեկնեցան SaeManGeum շրջանը, որ նախատեսուած է իբրեւ ճամպորիի վայր: Մասնակիցները հոն ծանօթացան տեղւոյն պատմութեան, բնութեան, շրջանին մէջ գտնուող աշխարհագրական եւ գիտական թանգարաններուն եւ բանակումին ընթացքին նախատեսուած սկաուտական եւ արկածախնդրական յայտագիրներուն:

Ապա, մասնակիցները ուղղուեցան Jeonju, ուր տեղի ունեցաւ «Color of dream»-ի աշխատանքային նիստը: Նիստին ընթացքին ներկայացուցանեցան բանակումը լաւագոյն



ձեռով ծրագրելու համար կարգ մը առաջարկներ: Երեկոյեան, մասնակիցները առիթը ունեցան պտրտելու Jeonju շրջանը: Անոնք ծանօթացան Հարաւային Քորէայի աւանդութիւններուն եւ սովորութիւններուն:

Երրորդ օրը տեղի ունեցան զանազան այցելութիւններ, սկսելով world scout parliamentary union national assembly-էն, ուր մասնակիցները հանդիպեցան կառավարական ներկայացուցիչին: Ապա, անոնք այցելեցին Korean scout association-ի National training center-ը:

Նոյն օրը, երեկոյեան, տեղի ունեցաւ համագումարին պաշտօնական փակման արարողութիւնը: Աւանդական սովորութեան համաձայն, նման առիթներու խօսք կ'առնեն մասնակիցներէն երիցագոյնն ու կրտսերագոյնը: Համագումարին կրտսերագոյն խմբապետը Լիբանանի պատուիրակութեան անդամ, Հ.Մ.Ը.Մ.ական քոյր Աննան էր, որ արտասանեց համագումարի մասնակցութեան փորձառութեան թելադրուած խօսք մը, Հարաւային Քորէային յաջողութիւն մաղթելով համաշխարհային սկաուտական ճամպորիի աշխատանքներուն մէջ: Իր խօսքին եւ մասնակցութեան համար, քոյրը արժանացաւ յատուկ զնահատանքի:





ԼՈՍ ԱՆՃԵԼԵՍԻ ԻՐԱՔԱՀԱՅ Հ.Մ.Ը.Մ.ԱԿԱՆՆԵՐՈՒ ՀԱՒԱՔ

Թղթակից ԼՈՍ ԱՆՃԵԼԵՍ

Լոս Անճելլա բնակող իրաքահայ խումբ մը Հ.Մ.Ը.Մ.ականներ, Արեւմտեան Միացեալ Նահանգներու Շրջանային Վարչութեան հովանաւորութեամբ, վերջերս, ձեռնարկեցին համախմբում-խրատմանքի մը, Շրջանային Վարչութեան կեդրոնատեղիին «Գէորգ Անտոնեան» սրահին մէջ:

Հ.Մ.Ը.Մ.ը Իրաքի մայրաքաղաք Պաղատի մէջ հիմնուած է 1949-ին եւ կը գործէ մինչեւ օրս: Իրաքի մնացեալ երկու մասնաճիւղերը՝ Մուսուլի եւ Քերքուքի մէջ, հիմնուած են 1960-ին: Անոնցմէ առաջինը արտակարգ պայմաններու պատճառով 2014-ին դադարած է գործելէ, իսկ երկրորդը կը շարունակէ գործել:

Իրաքահայ 60-է աւելի նախկին վարչականները մեծարելու եւ պատուելու համար, ձեռնարկին սկիզբը, իրաքահայ չլրին տրուեցաւ միութեան նշանակն ու «Քարճրացի՛ր-բարճրացուր» նշանաբանը՝ շալերու վրայ տպուած ձեւով:

Օրուան հանդիսավարներն էին իրաքահայ Հ.Մ.Ը.Մ.ական եղբ. Հրաչ Յակոբեան եւ քոյր Մարալ Կարապետեան:



Ներկաները ողջունելով, անոնք պարզեցին հանդիպումին նպատակը՝ իրաքահայ դաղուլթը ծանօթացնել Լոս Անճելլոսի հայութեան եւ քաջալերել իրաքահայ Հ.Մ.Ը.Մ.ականները եւ իրենց նորահաս զաւակները անդամակցելու եւ իրենց գործուն մասնակցութիւնը բերելու միութեան տեղւոյն մասնաճիւղերու աշխատանքներուն:

Ձեռնարկին սկիզբը, մանուկներ եւ պատանիներ սրահ մուտք գործեցին «Յառաջ նահատակ» քայլերգով, որմէ

ետք անոնք կատարեցին ասմունքներ եւ խմբերգներ:

Ձեռնարկին պատրաստութեան իր գնահատելի մասնակցութիւնը բերած էր երկարամեայ կրթական մշակ Շաքէ Ազիզեան: Նուազով իր մասնակցութիւնը բերաւ միութեան յայտնի երաժիշտ եղբ. Բաֆֆի Նազարեան, իսկ եղբ. Նազար Օհանեան ձեռնարկին ամբողջ տեսողութեան անկիւն մը ցուցադրեց միութեան անցեալէն պատմական նկարներ:



Բացման խօսքը արտասանեց Բաֆֆի Սարկաւազ Կարապետեան: Ան աղօթեց եւ ներկաները հրաւիրեց յոանկայս յարգելու միութեան հանգուցեալ հիմնադիրներուն, վարչականներուն եւ անդամներուն յիշատակը: Ապա, ան արտասանեց Հ.Մ.Ը.Մ.ի Պաղտատի սկաուտական շարքերուն մէջ իր սորված կանչերէն մէկը:

Յաջորդեց Հ.Մ.Ը.Մ.ի Իրաքի շրջանին պատմականը ներկայացնող տեսանիւթի մը ցուցադրութիւնը, ինչ որ քաղցր յիշատակներ եւ յուզիչ պահեր ստեղծեց ներկաներուն մօտ՝ արժանանալով բոլորին գնահատանքին: Կատարուեցաւ պարզեւատրեալ 60 նախկին վարչականներու յիշատակումը անուն առ անուն:

Այնուհետեւ, Հ.Մ.Ը.Մ.ի Իրաքի ըՄկաուտական Խորհուրդի նախկին անդամ սոքթ. Վեհունի Մինասեան խօսեցաւ միութեան երկար տարիներու հանգուցեալ նախագահ Օհաննէս Եսայեանի իրաքահայ մարմնամարզի պատմութեան եւ Հ.Մ.Ը.Մ.ի մարզիկ-մարզիկուհիներու գիրքին հրատարակութեան ծրագիրին մասին: Ծրագիրը, ղժբախտաբար, կիսատ մնացած է Եսայեանի մահուան պատճառով: Այժմ աշխատանք պիտի տարուի զայն ամբողջացրնելու եւ հրատարակելու համար:

Հ.Մ.Ը.Մ.ի Արեւմտեան Մ. Նահանգներու Շրջանային Վարչութեան կողմէ խօսք առաւ եղբայր Արամ Պէքերեան: Ան յայտնեց միութեան Շրջանային Վարչութեան ամբողջական պատրաստակամութիւնը ամէն զնով զօրավիզ



կանգնելու զանազան երկիրներէ ժամանած Հ.Մ.Ը.Մ.ականներուն եւ քաջալերելու անոնց նորահաս զաւակները՝ անդամակցելու Հ.Մ.Ը.Մ.ի մասնաճիւղերուն:

Ձ ե ո ն ար կ ի ն ազգային-հայրենասիրական երգերով իրենց մասնակցութիւնը բերին իրաքահայ երգիչներ Արա Սա-

հակեան եւ Յակոբ Յովսէփեան, երգեհոնի ընկերակցութեամբ Արմէն Պապայեանի:

Ձեռնարկի աւարտին տեղի ունեցաւ հիւրասիրութիւն, որմէ ետք ներկաները մեկնեցան թարմացած յիշատակներով:

Տեղին է նշել, որ ձեռնարկին յաղորդութեան իրենց բարոյական եւ նիւթական մասնակցութիւնը բերին տէր եւ տիկ. Վարանդ եւ Սեւան Մարգարեան, տէր եւ տիկ. Վարանդ եւ Հուրի Մելքոնեան, տէր եւ տիկ. Նազար եւ Սօսի Օհանեան, Վաղինակ Վահանեան եւ Վահէ Հայրիկեան:





ՃԱՆՉՆԱՆՔ

ՎԻՊԷՆ ԵՒ ՆՈՆՕ ԱԲԷԼԵԱՆՆԵՐ՝ ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆԻ ՊԱՏՈՒՈՅ ՆԱԽԱԳԱՀՆԵՐ...

Թղթակից
ԿԼԵՆՏՅՅԼ

ՀՄԸՄ-ի Արեւմտեան Մ. Նահանգներու Շրջանային Վարչութիւնը կը տեղեկացնէ, թէ Նաւասարդեան 42-րդ մարզախաղերու պատուոյ նախագահութիւնը ստանձնած են շրջանի հանրաժանօթ ՀՄԸՄ-ականներ, ահր եւ տիկ. Վիգէն եւ Նոնօ Աբէլեանները, Օրէնճ Քաունթիին:

Այս առիթով եղբ. Աբէլեան յայտնեց. «Մենք կը զնահատենք Շրջանային Վարչութիւնը, որ մեզի վստահեցաւ այս պատիւը: Նոնոն ու ես ՀՄԸՄ-ի անդամ եղած ենք մեր ամբողջ կեանքին ընթացքին, նախ իբրեւ սկաուտ ու մարզիկ, ապա՝ իբրեւ կամաւոր աշխատողներ ու վարչական: Քաջածանօթ ենք այս կազմակերպութեան ու յատկապէս անոր ներկայացուցած արժէքին, թէ՛ մեր համայնքներէն ներս եւ թէ՛ յատկապէս մեր երիտասարդութեան մօտ: ՀՄԸՄ-ը մեծ դեր ունեցած է նաեւ իմ անձնական կեանքիս մէջ, ինծի սորվեցնելով սկզբունքայնութիւն, յարգանք՝ շրջապատիս ու հաւաքական աշխատանքի հանդէպ: Իմ կարգիս, ՀՄԸՄ-ի



նկատմամբ կը մնամ յանձնառու, որպէսզի մեր տասնեակ հազարաւոր մանուկները, պատանիներն ու երիտասարդները, մանաւանդ անոնք, որոնք հայկական դպրոց յաճախելու առիթը չունին, կարենան իրենց հայկական ինքնութիւնը գործնական այս մեծ կազմակերպութեան միջոցով»:

Եղբ. Վիգէն Աբէլեան մանկութենէն ի վեր եղած է ՀՄԸՄ-ի անդամ, իբրեւ սկաուտ, մարզիկ ու վարչական: Միշտ եղած է գործունեայ եւ օրինակելի բժախնդրութեամբ մը կատարած է իրեն վստահուած բոլոր տեսակի աշխատանքները:

Այս առիթով, Շրջանային Վարչութեան ատենապետ եղբ. Մանուէլ Մարտիեան յայտնեց, թէ Նաւասարդեանի պատուոյ նախագահութիւնը ստանձնելու Վիգէն եւ Նոնօ Աբէլեաններու պատրաստակամութիւնը յաւելելով ցուցանիչ մըն է այն նուիրումին, որ անոնք ունին այս միութեան ու անոր ապագայ ծրագիրներուն նկատմամբ:

...ԻՍԿ ՏՈՔԹ. ՇԱՀԷ ԵՆԻԳՈՄՇԵԱՆ ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆ 42-ՐԴ ՄԱՐԶԱԽԱՂԵՐՈՒ «ՏԻՊԱՐ Հ.Մ.Ը.Մ.ԱԿԱՆ»

Թղթակից
ԿԼԵՆՏՅՅԼ

ՀՄԸՄ-ի Արեւմտեան Մ. Նահանգներու Շրջանային Վարչութիւնը ուրախութեամբ կը տեղեկացնէ, թէ Նաւասարդեան 42-րդ մարզախաղերու «Տիպար ՀՄԸՄ-ական» հռչակած է տղթ. Շահէ Ենիգոմշեանը, նկատի ունենալով տասնամեակներու վրայ երկարող անոր նուիրումը՝ այս մեծ կազմակերպութեան:

Եղբ. տղթ. Շահէ Ենիգոմշեան վեց տարեկանին անդամակցած է իր ծննդա-



վայր Պէյրութի ՀՄԸՄ-ի սկաուտական շարժումին, նախ՝ իբրեւ գայլիկ, ապա հասած է Պէյրութի մասնաճիւղի խմբապետի պաշտօնին, 1970-ականներուն: Դարձեալ իր ծննդավայրին մէջ, ան եղած է պատրաստակարար ՀՄԸՄ-ի «կամք» խումբի մարզիկ:

Իր խմբապետութեան տարիները զուգարկապէս են ՀՄԸՄ-ի համագործակցին կազմակերպութեան վերածման շրջանին: Այդ օրերուն, եղբ. Ենիգոմշեան մաս կազմած է միութեան սկաուտական առաջին կանոնագիրը մշակող յանձնախումբին: Ան մասնակ-

ցած է Հ.Մ.Ը.Մ-ի բազմաթիւ ընդհանուր բանակումներու եւ խորհրդաժողովներու, միաժամանակ մաս կազմելով Կեդրոնական Վարչութեան մէկէ աւելի յանձնախումբերու:

Հ.Մ.Ը.Մ-ի սկզբունքներուն ջերմօրէն փարած, եղբ. Ենիգոմշեան Միացեալ Նահանգներու մէջ եւս գործնապէս ստանձնած է պատասխանատուութիւններ՝ վարչութիւններու թէ՛ զանազան յանձնախումբերու մէջ: Իր նախասիրած աշխատանքին բնագաւառը եղած է նոր սերունդի դաստիարակութիւնը: Այս ծիրէն ներս ան կարեւոր ներդրում ունեցած է միութեան ռազմավարական ծրագրաւորումի աշխատանքներուն:

Եղբ. Ենիգոմշեան մասնակցած է Հ.Մ.Ը.Մ-ի ներկայացուցչական եւ Պատգամաւորական բազմաթիւ ժողովներու: Ան հեղինակ է Հ.Մ.Ը.Մ-ի մասին բազմաթիւ յօդուածներու՝

«Մարզիկ» պաշտօնաթերթին թէ՛ հայկական այլ թերթերու մէջ:

«Տիպար Հ.Մ.Ը.Մ-ական»-ի տիտղոսին արժանացման աւիթով, տոքթ. Շահէ Ենիգոմշեան ըսաւ. «Խոր հաւատք ունիմ Հ.Մ.Ը.Մ-ի նկատմամբ, ու ինձի համար պատիւ է այս տիտղոսին արժանանալը: Հ.Մ.Ը.Մ-ը, շնորհիւ իր աշխարհատարած կառույցին, մեծ դեր ունեցած է հայ երիտասարդութեան ազգային դաստիարակութեան մէջ: Մեր աշխատանքին դաշտը շատ աւելի ընդարձակ է, միաժամանակ, սակայն, ունինք չօգտագործուած հսկայական ներուժ, զոր անհրաժեշտ է գործի յօել՝ ի հարկին նոր ուղիներ որոնելով ու նմանօրինակ առաքելութեան կոչուած կազմակերպութեանց հետ գործակցելով»:

Հ.Մ.Ը.Մ-Ի ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՆՈՐԱՍՏԵՂԾ ԲԱԺԱՆՄՈՒՆՔԻՆ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԻՒՆԸ

Թղթակից ԼՈՍ ԱՆՃԵԼՍ

Հ.Մ.Ը.Մ-ի 100-ամեակի սեմին, Արեւմտեան Միացեալ Նահանգներու Շրջանային Վարչութեան հովանիին տակ գործող երիտասարդական նորաստեղծ բաժանմունքը մեծ խանդավառութեամբ կը շարունակէ իր երկրորդ տարուան գործունէութիւնը՝ երիտասարդութիւնը հետաքրքրող ծրագիրներ մշակելով, ընկերային երեկոներ եւ հանդիպումներ կազմակերպելով, ինչպէս նաեւ անդամարշակի աշխատանքներուն զարկ տալով:

Արդարեւ, Կիրակի, 19 Փետրուար 2017-ին, երիտասարդական բաժանմունքը իր առաջին հանդիպումը ունեցաւ համա-



հայկական ուսանողական միութեան վարչութեան հետ, Հ.Մ.Ը.Մ-ի կեդրոնին մէջ: Հանդիպումին նպատակն էր Գայլֆորնիոյ համալսարաններուն մէջ գործող հայ ուսանողները եւ նախկին Հ.Մ.Ը.Մ-ականները ի մի բերել եւ միասնաբար գործակցելով՝ զանազան զաղութներու մէջ հաստատուած հայ երիտասարդները մասնակից դարձնել այս աշխատանքին:

Համահայկական ուսանողական միութեան վարչութիւնը խանդավառ կերպով պատրաստակամութիւն յայտնեց մասնակից դառնալու Հ.Մ.Ը.Մ-ի երիտասարդական բաժանմունքին՝ հաւաքական աշխատանքի մղող այս կարեւոր ծրագիրին: Ժողովը աւելի մը հանդիսացաւ անդրադառնալու զոյգ միութիւններու գործունէութեան եւ ընթացքին, խորհրդակցաբար շեշտը դնելով այս միութիւնները աշխուժացնելու եւ անոնց յարաբերութիւնները սերտացնելու ջանքերուն վրայ:



«ՀԱՅ ՍԿԱՈՒՏԻ ՕՐ»ՈՒԱՆ ՀԱՆԴԻՍԱԲՈՐ ՏՕՆԱԿԱՏԱՐՈՒԹԻՒՆ ԴԱՄԱՍԿՈՍԻ ՄԷՋ

Թղթակից
ԴԱՍԱՍԿՈՍ

Կազմակերպութեամբ Հ.Մ.Ը.Մ-ի Դամասկոսի Սկաուտական Խորհուրդին, 7 Ապրիլ 2017-ի երեկոյեան, հայ կաթողիկէ «Ամինեան» սրահին մէջ տեղի ունեցաւ «Հայ սկաուտի օր»ուան հանդիսաւոր տօնակատարութիւն՝ ներկայութեամբ հայ կաթողիկէ Գէորգ Վրդ. Պահեանի, Սուրբոյ խորհրդարանի անդամ դոկտ. Նորա Արխանի, Հ.Մ.Ը.Մ-ի եւ Ս.Օ.Խաչի Շրջանային Վարչութիւններու ներկայացուցիչներու, Սուրբոյ ըսկաուտական շարժումի պատասխանատուներու եւ հոծ բազմութեան մը:

Հանդիսութիւնը ընթացք առաւ Հ.Մ.Ը.Մ-ի շեփորախումբին կողմէ Սուրբոյ եւ Հայաստանի քայքայներուն կատարողութեամբ:

Բացման խօսքը արտասանեց Սկաուտական Խորհուրդի ատենապետ եղբ. Միհրան Ղազարեան: Ան հաստատեց, որ «Հայ սկաուտի օր»ը ծառայութեան, իրերօգնութեան, եղբայրասիրութեան եւ մարդասիրութեան օր է եւ ըսաւ. «Այսօր բեմ պիտի բարձրանան 5 տարեկանէն 80 տարեկան քոյր-եղբայրներ, որոնք յիսույի գործադրած են եւ կը գործադրեն Հ.Մ.Ը.Մ-ի նշանաբանը՝ Բարձրացիր-բարձրացուր»: Գեղարուեստական յայտագիրը ըս-

կաւ բարի գալուստի խմբերգներով՝ ներկայացուած գայլիկներու կողմէ: Ապա, քոյր Դափնի Երէցեան ջութակի վրայ նուագեց «Սարդարապատ»ը, քոյր Ռիթա Գալէմբերեան ամուսնքեց «Ափ մը մոխիր»ը, եղբ. Սերուժ Ղազարեան մենբրեց «Կիլիկիա»ն, եղբ. Ճորճիկ Նիկողոսեան նուագեց կիթառի վրայ, քոյր Լուսի Տէմիրճեան ամուսնքեց «Կտակ»ը, եղբ. Յովիկ Այարեան նուագեց կիթառ, իսկ Ռիթա Մահսէրէճեան նուագեց դաշնամուր: Հանդիսութիւնը ճաշացուցին կակուղ թաթիկներն ու գայլիկները իրենց գեղեցիկ պարերով, սկաուտները՝ բուրգերով եւ խմբային երգերով:

Տեղի ունեցաւ Նորընծայ գիտելիքներու վկայականներու բաշխում եւ աստիճանատուութիւն, ինչպէս նաեւ՝ Հ.Մ.Ը.Մ-ի երկար տարիներու ծառայութեան յուշանուէրներու բաշխում:

Խօսք առաւ Սուրբոյ սկաուտական շարժումի Դամասկոսի մասնաճիւղի պատասխանատու Պասէմ Շրպաթ, որ շեշտեց Հ.Մ.Ը.Մ-ի Դամասկոսի մասնաճիւղին տիպար եւ կարգապահ ըլլալու յատկութիւնը:

Հ.Մ.Ը.Մ-ի Սուրբոյ Շրջանային Վարչութեան խօսքը արտասանեց ատենապետ եղբ. Մանուկ Քէօշկերեան: Ան



շնորհաւորեց աստիճանաւորները, յուշանուէր ստացողները եւ բարձր գնահատեց Դամասկոսի մասնաճիւղին աշխատանքը: Ան ամփոփ կերպով ներկայացուց Հ.Մ.Ը.Մ-ի պատմականը՝ ընդգրծելով միութեան դաստիարակիչ դերը:

Հանդիսութիւնը փակուեցաւ «Յառաջ նահատակ» քայլերգին երգեցողութեամբ:

ԾԱՌԱՅՈՒԹԵԱՆ ՏԱՐՈՒԱՆ ԱՌԻԹՈՎ՝ ՅՈՒՇԱՆՈՒԷՐԻ ՏՈՒՉՈՒԹԻՒՆ՝ ՎԱՍՏԱԿԱՇԱՏ Հ.Մ.Ը.Մ.ԱԿԱՆ ԵՂԲ. ՍԱՐԳԻՍ ՊԱՍՄԱՃԵԱՆԻ

Ծառայութեան տարուան առիթով իր կատարած նախաձեռնութիւններու ծիրէն ներս, 7 Ապրիլ 2017-ին, Հ.Մ.Ը.Մ-ի Սուրբոյ Շրջանային Վարչութիւնը գեղեցիկ գաղափարը ունեցաւ



յուշանուէրով մը պատուելիւ վաստակաշատ Հ.Մ.Ը.Մ.ական եղբ. Սարգիս Պասամաճեանը:

«Հայ սկաուտի օր»ուան առիթով Դամասկոս ժամանած Հ.Մ.Ը.Մ.ի Սուրիոյ Շրջանային Վարչութեան անդամ եղբայրներ Մանուկ եւ Արմէն Քէօշկէրեաններ, այցելեցին եղբայր Սարգիսին բնակարանը: Այցելութեան ներկայ գտնուեցան Շրջանային Վարչութեան Դամասկոսի ներկայացուցիչ եղբ. Գէորգ Գալէմքէրեան եւ Հ.Մ.Ը.Մ.ի Դամասկոսի մասնաճիւղի ատենապետ եղբ. Աւօ Աճէմեան:

Այցելութեան աւարտին, Հ.Մ.Ը.Մ.ի Սուրիոյ Շրջանային Վարչութիւնը յուշանուէրով մը գնահատեց վաստակաշատ եղբոր բազմամեայ ծառայութիւնը նորահաս սերունդներու դաստիարակութեան գործին:

ՃԱՆՁՆԱՆՔ

Հ.Մ.Ը.Մ.ի Դամասկոսի մասնաճիւղի վաստակաշատ անդամներէն եղբ. Սարգիս Պասամաճեան ծնած է Դամասկոս, 1937-ին: Ան յաճախած է տեղւոյն Ազգ. Միացեալ Վարժարանը: Նախնական կրթութիւնը ստանալէ ետք, եղբ. Սարգիս

նետուած է կեանքի ասպարէզ՝ հմտանալով ոսկերչութեան մէջ:

Վեց տարեկանին ան կ'անդամակցի Հ.Մ.Ը.Մ.ին եւ եօթանասուն տարի կը ծառայէ անոր շարքերուն, իբրեւ գայլիկ, սկաուտ եւ շեփորախումբի անդամ: Սկաուտական շարքերու մէջ եղբ. Սարգիս արժանաբար կը տիրանայ սկաուտական աստիճաններուն՝ հասնելով մինչեւ փոխ խմբապետի աստիճանին:

Ազգասիրութեան զգացումը եղբ. Սարգիսին մէջ կը թրրծուի Հ.Յ.Դ.ի պատանեկան շարքերուն մէջ: Մշակութային արժէքներու ջերմ պաշտպանը հանդիսանալով՝ ան մաս կը կազմէ նաեւ Համազգայինին եւ իր ներդրումը կը բերէ անոր աշխատանքներուն:

Հետագային, Հ.Մ.Ը.Մ.ի շարքերէն ներս ան կը ծառայէ իբրեւ վարչական եւ Սուրիոյ Շրջանային Վարչութեան անդամ՝ ներկայացնելով Դամասկոսի մասնաճիւղը:

Առ ի գնահատանք միութենական իր բեղուն գործունէութեան եւ վաստակին, ան կը պարգևատրուի Հ.Մ.Ը.Մ.ի «Ծառայութեան» շքանշանով:

ԵԳԻՊՏՈՍԻ ՕԴԱՅԻՆ ՈՒԺԵՐՈՒ ԹԱՆԳԱՐԱՆ ԱՅՅԵԼՈՒԹԻՒՆ



Թղթակից ԳԱՅԻՐԷ

1973-ի արաբ-իսրայէլեան պատերազմներու մասնակցութիւն:

Արտակարգային գործունէութեան ծիրէն ներս, վերջերս, Գահիրէի Հ.Մ.Ը.Մ.-«Արարատ»ի սկաուտական խմբապետական կազմը այցելութիւն մը կատարեց Եգիպտոսի օդային ուժերու թանգարան: Այցելութեան մասնակցեցան 40 սկաուտներ:

Այս առիթով, սկաուտներ թանգարանին մէջ ծանօթացան գանազան օդանաւերու, որոնք մասնակցացած են վերջին 80 տարիներուն կատարուած պատերազմներու: Անոնք ծանօթացան նաեւ օդային ուժերու առաջնորդներու, անոնց ստացած շքանշաններուն, օդաչուներու տարազներուն եւ պատերազմներու ժամանակ լոյս տեսած եգիպտական տարբեր թերթերու: Անոնք դիտեցին վաւերագրական տեսերիզ մը, որ կը ներկայացնէր Եգիպտոսի ռազմաօդային ուժերուն պատմութիւնը՝ ուժերու կազմութենէն (1952) մինչեւ 1967-ի եւ

«ՄԱՐՉԻԿ»ԻՆ ԿԸ ՆՈՒԻՐԵՆ

- Եղբ. Բիւզանդ Թորիկեանի յիշատակին՝
 - Լեռնի Սարմազեան 200 \$
 - Մոսիկ Թոփուզեան 100 \$
 - Բիւզանդ Լախոյեան 100 \$
 - Իր եղբոր՝ Համբարձում Հալլաճեանի յիշատակին՝
 - Անդրանիկ Հալլաճեան 200 \$
- ՃՇԴՈՒՄ**
- Եղբ. Բիւզանդ Թորիկեանի մահուան առիթով՝
 - Անահիտ Մարգարեան (Գանատա) 100 \$



Հ.Մ.Ը.Մ.Ի ՏԻԹՐՈՅԹԻ ՄԱՍՆԱԾԻՒՂԻ ՀԻՄՆԱԴՐՈՒԹԵԱՆ 40-ԱՄԵԱԿԻ ՀԱՆԴԻՍԱԴՐ ՏՕՆԱԿԱՏԱՐՈՒԹԻՒՆ

Շանթ ժամկոչեան ՏԻԹՐՈՅԹ

Հ.Մ.Ը.Մ.ի Տիթրոյթի մասնաճիւղի վարչութեան կազմակերպութեամբ, Կիրակի, 4 Դեկտեմբեր 2016-ի կէսօրուան ժամը 1-ին, Ս Սարգիս եկեղեցւոյ «Լիլիան Առաքելեան» սրահին մէջ տեղի ունեցաւ մասնաճիւղին հիմնադրութեան 40-ամեակի հանդիսաւոր տօնակատարութիւնը:

Ներկայ էին օրուան պատուոյ նախագահներ՝ տէր եւ տիկին Հերման Խնդիրեան, Ս. Սարգիս եկեղեցւոյ հոգեւոր հովիւ Հրանդ Քհնյ. Գէորգեան, Հ.Յ.Դ. Տիթրոյթի «Ազատամարտ» կոմիտէի ներկայացուցիչ Բաֆֆի Ուրլեան, ՀՕՄ-ի Արեւելեան Մ. Նահանգներու Շրջանային Վարչութեան անդամ Սիլվա Սաղրեան, քոյր միութիւններու ներկայացուցիչներ, ծնողներ, Հ.Մ.Ը.Մ.ի համակիրներ եւ անդամներ:

Տօնակատարութեան նախորդեց հոգեհանգստեան արարողութիւն՝ առ ի յարգանք Հ.Մ.Ը.Մ.ական ննջեցեալներու, Հայաստանի 1988-ի երկրաշարժի զոհերուն եւ Փրլլ Հարպրի ճակատամարտին ինկածներու յիշատակին:

Տօնակատարութեան ազդանշանը տուաւ մասնաճիւղի ատենապետ, օրուան հանդիսավար եղբ. Խաչիկ Գաւաֆեան: Սրահ մուտք գործեցին մասնաճիւղին արի-արենոյշները, գայլիկ-արծուիկները՝ առաջնորդութեամբ Մ. Նահանգներու, Հայաստանի, Արցախի եւ Հ.Մ.Ը.Մ.ի դրօշներու: Բեմին



վրայ համախմբուելով, բոլորը միասին երգեցին Մ. Նահանգներու, Հայաստանի եւ սկաուտութեան քայլերգները, ապա քահանայ հօր ճաշի օրհնութեան աղօթքին մասնակցեցան սկաուտները:

Ճաշի դադարէն ետք, մասնաճիւղին վարչութեան խօսքը փոխանցեց եղբայր ատենապետը, հաստատելով որ երախտապարտ կը մնանք մեր մասնաճիւղի հիմնադիրներուն եւ Տիթրոյթի Հ.Յ.Դ.ի օրուան պատասխանատու մարմինին, որոնք 40 տարի առաջ ճամբայ հարթեցին Հ.Մ.Ը.Մ.ի գործունէութեան:

Սկաուտները ներկայացուցին բուրգեր եւ իրենց կողմէ պատրաստուած տեսերիկ մը, որ արժանացաւ ներկաներու գնահատանքին:

Օրուան պատգամաբերն էր մասնաճիւղի վաստակաւոր գործիչներէն եղբ. Արա Թէլլայէլեան: Ան ողջունեց Հ.Մ.Ը.Մ.ի Տիթրոյթի մասնաճիւղի անդամներն ու համակիրները եւ ըսաւ. «Այսօր տօն է Հ.Մ.Ը.Մ.ին համար, որովհետեւ ափիւռքեան օտար ափերուն ծնունդ առած մարմնակրթական շարժումը դիւրին աշխատանքի մը արդիւնքը չեղաւ: Ան արդիւնք էր կարմիր ջարդով Սփիւռք դարձած, Սփիւռքով սպիտակ ջարդի ենթարկուած ժողովուրդի մը զաւակներուն զոհաբերութեան»:

Շարունակելով, եղբ. Թէլլայէլեան հաստատեց, որ Հ.Մ.Ը.Մ.ի Տիթրոյթի մասնաճիւղին 40-ամեակը նշել կը նշանակէ հարուստ անցեալով լեցուն պատմութիւն մը վերապրել մեր ներկային մէջ: 40-ամ-



եակ նշել նաեւ կը նշանակէ այս մասնաճիւղէն պահանջել յաւելեալ նուիրումով եւ աշխուժութեամբ հարուստ ապագայ մը:

Եղբ- Թէլալէեանի պատգամէն ետք, մասնաճիւղի խմբապետի պաշտօնակատար քոյր Կարինէ Չէօփճեան ներկաներուն բացատրեց սկստական երդման արարողութեան եւ փոխանցման արարողութիւններուն իմաստը, որմէ ետք սկստները շարք կազմեցին իրենց խումբերով: Նախ՝ գայլիկ-արծուիկները կատարեցին «Մեծ կանչը», իսկ աւարտին՝ իրենց կանոնագրային տարիքը ամբողջացուցած ինը գայլիկ-արծուիկներ կատարեցին իրենց երդումը եւ անցան սկստական եւ արենուշական շարքեր: Ապա, իրենց դասընթացքները աւարտած արի-արենոյնները ստացան իրենց համապատասխան աստիճաններն ու հաստատագիրները:



Այս առիթով, վարչութիւնը պատուեց Տիթրոյթի մասնաճիւղի հիմնադիր վարչութեան անդամներ՝ եղբայրներ Մանուէլ Գարճեան, Ժագ Նշանեան, Գէորգ Պետիկեան, Հմայեակ Փալանճեան, Յարութիւն Մարկոսեան, Ռուբէն Ֆերմանեան, Սեդրակ Գայսէրեան, օրուան պատգամաբերն ու «Ազատամարտ» կոմիտէն:

Հիմնադիր վարչութեան անդամներէն եղբայր Հմայեակ Փալանճեան արտասանեց իր սրտի խօսքը, որմէ ետք խօսք առաւ օրուան պատուոյ նախագահ Հերման Խնդիրեան: Ան ըսաւ, որ Հ-Մ-Ը-Մ- տասնամեակներէ ի վեր ունի ազնիւ, ազգանուէր, անսակարկ եւ անշահախնդիր ծառայութիւն նորահաս սերունդներու դաստիարակութեան գործին: Միութիւնը միշտ հաւատարիմ կը մնայ «Առողջ միտքը՝ առողջ մարմնի

մէջ» սկզբունքին, ջանալով հետամուտ ըլլալ տեւաբար բարձրանալու եւ շուրջիները իր հետ բարձրացնելու սկզբունքին:

Խնդիրեան յայտնեց նաեւ, որ ազգանուէր եւ ազգօգուտ այս միութեան մասնաճիւղերը գործունեայ պահելը կը կարօտի հսկայական ծրագրումի եւ աշխատանքի, որուն համար միշտ պահանջը կայ անշահախնդիր ու նուիրեալ անձերու օժանդակութեան: Բոլորին վարձքը կատար: Պէտք է շնորհաւորել այս միութեան ետին կանգնող բոլոր նուիրեալները:

Խնդիրեանի խօսքէն ետք, տեղի ունեցաւ 40-ամեակի կարկանդակի հատում:

Հուսկ, քահանայ հօր սրտի խօսքէն ու «Պահպանիչ»էն ետք, բոլորը միասին երգեցին Հ-Մ-Ը-Մ-ի «Յառաջ նահատակ» քայլերգը:



Elegance Plus

Shoes, Bags,
Fashion Accessories
& Gift Items

Bourj Hammoud - Dora - Armenia Street - Boyadjian Bldg.
Beirut - Lebanon

Tel. : 00961-1-248554, Fax : 00961-1-248556
Mob.: 00961-3-882811 - 00961-3-882812
E-mail: hratch@goldenmountains.com
hratchboy@hotmail.com

H. N. BOYADJIAN & CO.



Հ.Մ.Ը.Մ.Ի ՄՈՆԹԵՎԻՏԵՈՅԻ ՄԱՍՆԱՃԻՒՂԻՆ ՍԿԱՌԻՏԱԿԱՆ ԸՆԹԱՑԻԿ ՏԱՐԵՇՐՋԱՆԻՆ ԲԱՑՈՒՄԸ

«Կամֆ» սկաուտական խումբի խմբադասարանի ՄՈՆԹԵՎԻՏՈ



8 Մայիսին, Հ.Մ.Ը.Մ.ի Մոնթեվիտեյի տեղի «Կամֆ» սկաուտական խումբը պաշտոնական հանդիսություններ մը սկսաւ իր 48-րդ տարեշրջանը (Մայիսը վերամուտի աշնանային շրջան է Հարաւային Ամերիկայի մէջ, հիւսիսային կիսագունդին հակառակ դրութեամբ):

Կը տիրէր մեծ խանդավառութիւն եւ ուրախութիւն: Երկար արձակուրդէ ետք, Հ.Մ.Ը.Մ.ի «կամաւոր բանակ»ի անդամները կրկին անգամ համախմբուելով իրենց պանծալի միութեան դրօշին տակ, որոշեցին իրենց խոստումին համա-

ձայն ծառայել ազգին ու հայրենիքին, հայրենիքին եւ անոր արդար դատին:

Հանդիսութիւնը սկսաւ սկաուտական նոր պաշտօններ ստանձնող քոյրերու եւ եղբայրներու երդումով: Ապա, քոյրեր Ռոմինա Գոլյումճեան, Սօսէ Իւրէճեան եւ եղբայր Ալէխօ Մոզեան ստանձնեցին Աքելայի, արի-արենոյններու խմբապետի եւ փաղանգի խմբապետի պաշտօնները:

Հետեւեցան փոխանցման արարողութիւնները, որոնք կենսական հանգրուան մըն են սկաուտական կեանքի զարգացման համար:

Այս ձեւով ընթացք առաւ մասնաճիւղին սկաուտական այս տարեշրջանը, որ բաւական հարուստ է ներքին յայտագիրներով եւ արտաքին ձեռնարկներով:

ՄՈՆԹԵՎԻՏԵՈՅԻ Հ.Մ.Ը.Մ.Ի «ԿԱՄՔ» ՍԿԱՌԻՏԱԿԱՆ ԽՈՒՄԲԻՆ ՏԱՐԵԿԱՆ ԲԱՆԱԿՈՒՄԸ

Հ.Մ.Ը.Մ.ի «Կամֆ» սկաուտական խումբի ՄՈՆԹԵՎԻՏՈ

Ի նչպէս ամէն տարի, այս տարի եւս, Մոնթեվիտեյի Հ.Մ.Ը.Մ.ի «Կամֆ» սկաուտական խումբին տարեկան բանակումը տեղի ունեցաւ Յունուարին, Ֆլորեսթա շրջա-

նի Իտալիո գեղատեսիլ վայրը:

Սկաուտական պատասխանատուները մեծ թիւով քոյր-եղբայրներու համար ծրագրած էին աշխատանքի ձեւ մը, որով մասնակիցը նախ անհատապէս իր մէջ զարգացնէր սկաուտական հասկացողութիւնը եւ ապա՝ խմբային աշխատանքը, որուն նպատակն էր մօտէն ճանչնալ հայրենիքը, գիտնալ Հ.Մ.Ը.Մ.ի կարեւորութիւնը եւ եղբայր սկաուտին հետ լաւ վարելու հրամայականը:



Իբրեւ միասնականութեան եւ ինքնութեան խորհրդանիշ, բոլոր բանակողներուն հարկ էր դնել իրենց անձնական ձեւը: Նշանակելի էր մասնաճիւղի սկաուտական տարբեր խմբաւորումներուն իրարու հետ աշխատելը, անհատական բարեկամութիւններ ունենալէ բա-

նար: Առաջին շաբաթը տրուեցաւ եղբ. Տանիէլ Ճոկալէլեանին՝ Հ.Մ.Ը.Մ.ի Հարաւային Ամերիկայի Շրջանային Վարչութեան ատենապետին: Շաբաթներ ստացան եղբ. Արամ Պարաքեան՝ ըՍկաուտական Խորհուրդի անդամ եւ քոյր Ալէքսիա Պարպարեան՝ Մոնթեվիտեյի մասնաճիւղի ատենապետուհի, որոնք բանակումին պաշտօնական բացման ներկայ գտնուեցան, սկաուտներու ընտանիքներու եւ Հ.Մ.Ը.Մ.ի համակիրներու հետ միասին:

Բանակողներուն այցելեցին նաեւ մոկլիները, որոնց համար ստեղծուեցան ժամանցի յատուկ պահեր:

Բոլոր մասնակիցներուն եւ յատկապէս գայլիկներուն համար, որոնք նման բանակումի մը առաջին անգամ ըլլալով է որ ներկայ կ'ըլլային, մեծ փորձառութիւն էր: Նշանակելի էր մասնաճիւղի սկաուտական տարբեր խմբաւորումներուն իրարու հետ աշխատելը, անհատական բարեկամութիւններ ունենալէ բա-



ցի, իրենց առօրեայ կեանքէն հեռու, միասին ըլլալու եւ հաւաքաբար միեւնոյն յարկին տակ գործելու, իրարու օգնելու հրամայականը, ինչ որ Հ.Մ.Ը.Մ-ի կարեւոր նպատակներէն մէկն է, անշուշտ իրենց ստացած գիտելիքներու կողքին:

Բանակումին փակման արարողութեան քաջայերական մրցանակներ յանձնուեցան լաւագոյն պահակութիւնը կատարած խումբին եւ լաւագոյն

պահակին: Յատուկ մրցանակներ ստացան սկաուտական իւրաքանչիւր խմբաւորումի լաւագոյն անդամը.- քոյրեր Մելինէ Այտինեան, Օրիանա Ահարոնեան, եղբայրներ Պրունօ Միչելիս Կիւլեան եւ Մարիօ Իւրէհեան:

Սկաուտական խումբի ղեկավարութեան կատարած աշխատանքը տուաւ իր արդիւնքը եւ ծրագրուածը հասաւ իր նպատակին:

Հ.Մ.Ը.Մ-ի «Կամք» խումբին համար իւրաքանչիւր բանակում կ'աւարտի փակելով էջ մը, որ նախորդ տարուան փորձառութենէն եւ ձեռքբերումէն աւելի բան մը կը ձգէ եւ նոր էջ մը կը բանայ, որպէսզի սկաուտական շարժումը շարունակէ աճիլ եւ զարգանալ միշտ ձգտելով լաւագոյնին:

ARMENIA

for private and group trips

www.saberatours.fr

- Direct Flights
PARIS
YEREVAN
PARIS
- Select your Journey
- Guided Tours for 8 Days or 12 Days

Saberatours Sevan Voyages

WITH THE COLLABORATION OF THE NEW AIRLINE COMPANY

11, rue des Pyramides
75001 Paris
tel 331 42 96 10 10
fax 331 42 96 18 77
saberatours@selectour.com

48, cours de la Liberté
69003 Lyon
tel 334 78 60 13 66
fax 334 78 60 92 26
sevan@selectour.com

67, La Canebière
13001 Marseille
tel 334 95 09 30 60
fax 334 95 09 30 61
marseille@wasteels.fr

32-38, rue Hanrabedoutian
Yerevan
tel 374 10 52 55 55
fax 374 10 56 40 30
saber@arminco.com

ԵՂԲ. ՎԱՐՈՒԺԱՆ ԹՈՐԻԿԵԱՆԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ

Րաֆֆի Եսայեան
ԾԻՆԻ

ՀՄԼՄ-ի ձիւնիի ընտանիքը խոր վիշտով կորսընցուց մասնաճիւղի հիմնադիր անդամներէն եղբ. Վարուժան Թորիկեանը: Եղբ. Թորիկեան եղած է սկաուտ, մարզիկ, մասնաճիւղի վարչութեան անդամ եւ ատենապետ:

Իբրեւ երկար տարիներու վաստակաւոր միութեանական,



ան միշտ մասնակցած է մասնաճիւղի վերելքին՝ իր անձը նուիրելով սիրելի միութեան՝ ՀՄԼՄ-ին:

Եղբ. Թորիկեան միշտ եղած է պատնէշի վրայ, պատրաստ՝ օգտակար դառնալու բոլորին: Առ ի գնահատանք իր երկարամեայ վաստակին, վերջերս, ՀՄԼՄ-ի Լիբանանի Շրջանային Վարչութիւնը «Ծառայութեան» շքանշանով պարգեւատրեց զայն: Եղբ. Թորիկեան մասնակից դարձած է նաեւ ձիւնիի ազգային-հասարակական կեանքին, իբրեւ թաղական ծառայելով շրջանի եկեղեցւոյ:

Ան եղաւ օրինակելի հայր, իր կեանքը նուիրելով ընտանիքին, մանաւանդ իր զաւակներուն հայեցի դաստիարակութեան: Եղբ. Թորիկեանին յիշատակը միշտ վառ պիտի մնայ միութեանական իր քոյրերուն-եղբայրներուն, ինչպէս նաեւ զինք ճանչցողներու սիրտերուն մէջ:

Սիրելի՛ եղբ. Վարուժ, վարձքդ կատար, հողը թեթեւ գայ:



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏՈՒԹԵԱՆ ՆԱԽԱՉԵՌՆՈՒԹԵԱՄԲ...

Շարունակուած Բ. կողքին

ցեցան ՀՄԼՄ-ՀԱՍԿ-ի Հայաստանի վարչութեան ատենապետ եղբ. Գալիթ Յակոբեան, Հայաստանի կրթութեան եւ գիտութեան նախարարութեան աշխատակազմի մարզառագմական եւ արտաուսումնական դաստիարակութեան վարչութեան պետ Արկադի Պետրոսեան, մարմնակրթութեան եւ երիտասարդութեան հարցերու նախարարութեան աշխատակազմի մարմնակրթութեան բարձրագոյն նուաճումներու քաղաքականութեան վարչութեան հասարակական կազմակերպութիւններու հետ համագործակցութեան բաժինի պետ Լեովա Վարդանեան, Երեւանի քաղաքապետարանի աշխատակազմի մարմնակրթութեան եւ երիտասարդութեան հարցերու բաժինի պետ Եոլրի Մամիկոնեան, Հայաստանի կառավարութեան առընթեր Հայաստանի ոստիկանութեան հասարակական կարգի ապահովման վարչութեան արտաքին ծառայութեան բաժինի պետի տեղակալ Գուրգէն Աբրահամեան, մշակութի նախարարութեան աշխատակազմի մշակութային ծրագիրներու եւ դիտարկումի վարչութեան գլխաւոր մասնագէտ Ռուզաննա Ղլէչեան եւ առողջապահութեան նախարարութեան աշխատակազմի բժշկական օգնութեան քաղաքականութեան վարչութեան արտահիւանդանոցային բժշկա-

կան օգնութեան քաղաքականութեան բաժինի գլխաւոր մասնագէտ Նորա Փահլեվանեան:

Նիստին ընթացքին, Սփիւռքի նախարար Հրանդ Յակոբեան կարեւոր նկատեց համա-ՀՄԼՄ-ական 10-րդ մարզախաղերուն իրականացումը, որուն պատշաճօրէն կազմակերպման համար ստեղծուած է միջ-նախարարական յանձնախումբ, նշեց ան: Նախարարը յայտնեց, որ 2018-ին ՀՄԼՄ-ը պիտի նշէ իր հիմնադրութեան 100-ամեակը, ինչ որ Հայաստան-Սփիւռք գործակցութեան շրջագիծին մէջ մեծ իրադարձութիւն է: ՀՄԼՄ-ի 100-ամեակի տօնակատարութիւնները պիտի սկսին համա-ՀՄԼՄ-ական 10-րդ մարզախաղերով:

ՀՄԼՄ-ՀԱՍԿ-ի վարչութեան ատենապետ եղբ. Գալիթ Յակոբեան նշեց, որ համա-ՀՄԼՄ-ական այս հանդիպումները սոսկ մարզական մրցումներ չեն, այլ՝ հայրենասիրութեան եւ հայրենաճանաչութեան տօնահանդէս:

Բոլոր նախարարութիւններու ներկայացուցիչներուն հետ ճշդուեցան մարզախաղերու կազմակերպական եւ աշխատանքային հարցերը:

ՀԱՄԱ-Հ.Մ.Ը.Մ.ԱԿԱՆ 10-ՐԴ ՄԱՐԶԱԽԱՂԵՐԸ Կ'ՈԳԵԿՈՉԵՆ ՄԻՈՒԹԵԱՆ ՀԻՄՆԱԴԻՐՆԵՐՈՒ, ԱՐՑԱԽԵԱՆ ՆԱՀԱՏԱԿՆԵՐՈՒ ԵՒ ՎԱՍՏԱԿԱՇԱՏ ԱՆԴԱՄՆԵՐՈՒ ՅԻՇԱՏԱԿԸ

Յուրիսին, Հայաստանի մեջ կազմակերպում համա-Հ.Մ.Ը.Մ.ական 10-րդ մարզախաղերը կ'ոգեկոչեն յիշատակը 16 Հ.Մ.Ը.Մ.ականներու, որոնք կը հանդիսանան միութեան հիմնադիրներ, Արցախեան պայքարի նահատակներ եւ երկարամեայ ծառայութեամբ վաստակաշատ դէմքեր:

Ստորեւ եղբայրներու անունները՝ կենսագրական ամփոփ ծանօթութիւններով:

Շտարշ Բրիտեան (1886-1915).- Հ.Մ.Ը.Մ.ի նահատակ հիմնադիր: «Մարմնամարզ» թերթի հրատարակիչ:

Գրիգոր Յակոբեան (1885-1949).- Հ.Մ.Ը.Մ.ի հիմնադիր երրորդութեան անդամ: Հայ սկստուական եւ մարմնակրթական շարժումի ռահվիրայ:

Յովհաննէս Հինդդեան (1886-1950).- Հ.Մ.Ը.Մ.ի հիմնադիր երրորդութեան անդամ: Հայ սկստուական շարժումի գլխաւոր գաղափարախօս:

Մինաս Չերազ (1886-1927).- Հայ մարմնակրթական շարժումի եռանդուն նուիրեալ: 1920-ին, Հայաստան գործուողում Հ.Մ.Ը.Մ.ական եռանդամ մարմնի անդամ: Չոհ՝ համայնավար չեկիստներու:

Բիզանդ Թորիկեան (1931-2016).- Հ.Մ.Ը.Մ.ի համագաղութային կառոյցի ստեղծման գլխաւոր դէմքերէն: «Հայ Մարմնակրթական Ընդհանուր Միութեան Պատմութիւն» չորս հատորներու հեղինակ: Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան անդամ 1974-1987, 1999-2003:

Միհրան Շիմշիրեան (1942-2014).- Հ.Մ.Ը.Մ.ի սկստուական շարժումի բազմաժամանակ երախտաւոր: Երկար տարիներ Լիբանանի սկստուական ֆետերասիօնի անդամ: Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան անդամ 1983-1999, 2007-2014:

Վարդգէս Ալահայտոյեան (?-2016).- Բազմաժամանակ Հ.Մ.Ը.Մ.ական: Հ.Մ.Ը.Մ.ի Մերձաւոր Արեւելքի Շրջանային Վարչութեան անդամ 1971-1974: Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան անդամ 1974-1979, 1983-1987:

Տիգրան Ոսկունի.- Երկարամեայ Հ.Մ.Ը.Մ.ական: «Ազ-



դակ Մարզական»ի խմբագիր (1952-1958): Հ.Մ.Ը.Մ.ի անդրանիկ Կեդրոնական Վարչութեան անդամ 1974-1979:

Յովհաննէս Պայթարեան (1915-1993).- Հ.Մ.Ը.Մ.ի Պէյրութի երկարամեայ վարչական՝ 1947-1974: Հ.Մ.Ը.Մ.ի անդրանիկ Կեդրոնական Վարչութեան անդամ 1974-1979:

Արմէն Տէյիլմէնճեան (?-2015).- Բազմաժամանակ Հ.Մ.Ը.Մ.ական: Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան անդամ 1974-1983:

Նշան Թիսիւզեան (1911-1980).- Բազմաժամանակ Հ.Մ.Ը.Մ.ական: Հ.Մ.Ը.Մ.ի Հայկաի սկստուական շարժումի տարածման եւ կազմակերպման կեդրոնական դէմքերէն: Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան անդամ 1974-1983:

Միամանթո Կարապետեան (?-2016).- Բազմաժամանակ Հ.Մ.Ը.Մ.ական: Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան անդամ 1987-1991:

Դանիէլ Դանիէլեան (1909-1980).- Հ.Մ.Ը.Մ.ի Յունաստանի երախտաշատ դէմքերէն: Աթէնքի «Մարմնամարզ» թերթի խմբագիր: Հ.Մ.Ը.Մ.ի անդրանիկ Կեդրոնական Վարչութեան անդամ 1974-1979:

Վահրամ Դանիէլեան (1945-2014).- Բազմաժամանակ Հ.Մ.Ը.Մ.ական: Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան անդամ 2003-2011:

Վարդան Բախշեան (1965-1991).- Նորանկախ Հայաստանի Հ.Մ.Ը.Մ.ական առաջին սերունդի անդամներէն: Հ.Մ.Ը.Մ.ի Երեսանի մասնաճիւղի առաջին ստեղծապետը 1989-ին: Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան անդամ Ապրիլ 1991-էն մինչեւ նահատակութիւնը՝ 16 Դեկտեմբեր 1991, Արցախի ազատագրման կռիւներուն:

Վիգէն Զաքարեան (1969-1992).- Հ.Մ.Ը.Մ.ի Պուրճ Համուտի մասնաճիւղի երեք սկստու եւ հեծելաքշառի խումբի անդամ: Նահատակուած՝ 8 Մայիս 1992-ին, Շուշիի ազատագրման կռիւներուն:



Հ.Մ.Ը.Մ.Ի ԱՆԹԻԼԻԱՍԻ
ՊԱՍՔԵԹՊՈԼԻ ԱՂԶԿԱՆՑ
ԽՈՒՄԲԸ ԼԻԲԱՆԱՆԻ
2017-Ի ԱԽՈՅԵԱՆ